

# ՀԱՅԱՍՏԱՆ, ԱԴՐԲԵՋԱՆ ԵՎ ԹՈՒՐԻԱ

*Մշակութային, աշխարհագրական և պատմական  
հսկասությունների քննարկում*




## **ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ**

### **Հայերեն հրատարակություններ**

- Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, հայերեն և ռուսերեն, Փրինթինֆո, 2005 թ.:
- Նույնը եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, Տիգրան Մեծ, 2015 թ.:
- Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում, Կոմիտաս ինստիտուտ, 2007 թ.:
- Հորինված պատմություն. Ադրբեջան, Հայաստան. կեղծիքներ և փաստեր, Կոմիտաս ինստիտուտ, 2010 թ.:
- Հայաստանը օտարների քարտեզներում, Զանգակ, 2014 թ.:
- Ադրբեջանի պատմաաշխարհագրական գեղծարարությունները, Զանգակ, 2017 թ.:
- Հայ քարտեզագրության պատմությունը մինչև 1918 թ., Զանգակ, 2017 թ.:
- Հայոց պատմությունը քարտեզների միջոցով, Ակնարկ, Զանգակ, 2019 թ.:

Բոլոր լեզուներով գրքերի և հոդվածների  
ցուցակի համար տե՛ս հեղինակի կայքը.  
[www.roubengalichian.com](http://www.roubengalichian.com)



20-րդ դարի սկզբի Օսմանյան կայսրության *Ընդհանուր պատմություն* դասագրքից վերցված քարտեզ, որը ներկայացնում է Միջին Արևելքը հնագույն ժամանակներում: Գրատուն Ասգարի, քարտեզի գծագրող՝ Իբրահիմ Հիլմի:

Ռ. Գալչյանի հավաքածու, Երևան, Մատենադարան, Ref. RG-127:

# ՀԱՅԱՍՏԱՆ, ԱԴՐԲԵՋԱՆ ԵՎ ԹՈՒՐԿԻԱ

*Մշակութային, աշխարհագրական և պատմական  
հակասությունների քննարկում*

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ



Երևան 2020

ՀՏԴ 008:93/94:91  
ԳՄԴ 71+63.3+26.8  
Գ 197

Գալչյան Ռուբեն

Գ 197 ՀԱՅԱՍՏԱՆ, ԱԴԻԲԵՋԱՆ ԵՎ ԹՈՒՐԻԱ: Մշակութային, աշխարհագրական և պատմական հակասությունների քննարկում / Ռ. Գալչյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2020. — 120 էջ:

Հատորի նպատակն է պարզաբանել այն հակասությունները, որոնք ստեղծել և տարածում են մեր հարևան թրքաբնակ երկրները՝ հիմքում ունենալով քաղաքական դրդապատճառներ և նպատակներ: Այս հարցերի մի մասը որոշ չափով նաև քննարկված են հեղինակի մյուս աշխատություններում, սակայն նրանցից մի քանի կարևորները մանրամասն քննարկված և պարզաբանված են այս հատորում: Շարադրանքին վերաբերող, նախապես քննարկված նման նյութերին տրված են պատկան հղումները: Գիրքն առաջին անգամ հրատարակվել է անգլերենով 2019 թ.:

ՀՏԴ 008:93/94:91  
ԳՄԴ 71+63.3+26.8

ISBN 978-9939-68-766-7

© Գալչյան Ռուբեն, 2020  
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2020

Նյութերի և քարտեզների հեղինակային իրավունքները պատկանում են Ռուբեն Գալչյանին: Որևէ կերպ կամ միջոցով գրքի նյութերից և պատկերներից օգտվելու, հանրային շրջանակներում տարածելու կամ վերատպության համար կարիք կա հեղինակի գրավոր թույլտվությունը:

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քարտեզների և պատկերների ցուցակ.....	5
Ներածություն.....	7
1. Ակնարկ Հարավային Կովկասի պատմությանը.....	13
2. «Ադրբեջան» թյուրանականումը.....	25
3. «Մեծ Հայք» և «Փոքր Հայք» անվանումները.....	41
4. Ադրբեջանի անունը, լեզուն և գիրը.....	53
5. «Հայկական բարձրավանդակ» կամ «Հայկական լեռնաշխարհ».....	69
6. Ինչ և ո՞րն է Անատոլիան.....	81
7. «Հյուսիսային», «Հարավային» և «Արևմտյան Ադրբեջան» անվանումները.....	91
8. Հայերի ներկայությունը Հարավային Կովկասում.....	99
Տեղանունների և հատուկ անունների ցանկ .....	111

Գիրքս նվիրում եմ ընկերոջս՝ Հայ Ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության  
հիմնադիր Արմեն Տախնազարյանի (1941–2009) պայծառ հիշատակին,  
ուն անչափ հոգեհարսզատ կլիներ այս աշխատությունը:

Ռուբեն Գալջյան, Երևան, 2020 թ.

## Արմենին

Այսօր,  
հոս,  
բարձրաձայն լուովեան մէջ ենք  
ինք  
և ես...

Ինք՝ հազար ու մէկ եկեղեցիներու առաքեալը  
խակ ես,  
հազար իր ընկերներուն կողքին  
ես առանկ մէկը...

Մէկը,  
հաատքի եկեղեցիէն գորած,  
պարիսպէն դու՛րս մնացած  
քա՛ր մը մոլորած...

Այսօր,  
հոս,  
լուծ է ինք՝  
հազար ու մէկ եկեղեցիներու առաքեալը,  
խակ ես՝  
սոյն բառերը թուղթին անձայն յանձնողը  
ես կամ,  
սոյն բառերը  
թուղթէն բարձրաձայն կարդացողը,  
թերեա ալ  
սոյն բառերը  
լու ո լսողը, մէկ խօսաբով  
մենք,  
պարիսպէն դուրս  
կամ պարիսպէն ներս  
հաատքի եկեղեցիէն գորած  
քարերը մոլորած...

Ինք՝  
հաատքի քարերը փնտոող-գտնող  
ես չափագրող առաքեալը՝  
նե՛ղ լուսամուտէն ներս ծորող  
խորունկ ինկնող արեւագալի շողը,  
խակ ես  
կամ դու՛ն

եւ թերեա ան,  
այսինքն՝ մենք  
այսօր հոս, բարձրաձայն լուովեան մէջ  
Սաշտոցեան գիր մը,  
փախչող բառ մը,  
արցունքի կաթիլ մը...

Պարիսպէն դուրս,  
պարիսպէն ներս,  
խաչը, զանգը,  
ահազանգը,  
գիր քարը, արծաթ թասով հաատքը,  
հաատքեց մեզ հոս,  
այսօր,  
ու ինք գնաց  
անվերադարձ այն ճամբով,  
վստահ  
անհանգստացնելու վերինները  
եւ անկասկած բորձունքներէն  
անխոնջ շարունակելու  
փրկելու և գրկելու  
հաատքի եկեղեցիէն  
գլորած մոլորած  
քարերը պարսպէն անդին կամ ասդին....

Այսօր,  
հոս,  
բարձրաձայն լուովեան մէջ  
ես կամ դուն,  
թերեա ալ ան՝  
այսինքն՝ մենք  
պճեղ-պճեղ  
ստացած ենք իր սէրը,  
ինչպէս լուսամուտէն ծորող  
խորանին ինկնող  
արեւագալի շողը....

Շնորհակալովի՛ն...  
Ագուլիսցի Արմեն....

Անահիտ Սարգիսեան,  
փետրուար 27, 2009 թ., Երևան

# ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

- 1.1 Մերկատորի 1578 թ. Պտղոմեոսյան Ատլասից, *Ասիայի երրորդ քարտեզը*:
- 1.2 Հարավային Կովկասը վեցերորդ դարում:
- 1.3 Իսթախրիի *Հայաստանի, Արանի և Ադրբեջանի քարտեզը* նրա 10–րդ դ. *Մասալիք վա մանալիք* ձեռագրից, Բրիտանական գրադարան, Լոնդոն:
- 1.4 Մոկադդասիի *Հայաստանի, Արանի և Ադրբեջանի քարտեզը* նրա 10–րդ դ. *Ահսան ուլ թաղասիմ* ձեռագրից, Բրիտանական գրադարան, Լոնդոն:
- 1.5 Իրանի գերիշխանության տակ եղած Կովկասի շրջանները, Հոլանդիա, Օտտենս, 1740 թ.:
- 1.6 Կովկասի շրջանը 1881–88 թթ., Յուզիևի *Կովկասի էտնո-քաղաքական պատմության ատլաս*–ից, Մոսկվա, 2006 թ.:
- 1.7 Տարածաշրջանի ազգագրական տվյալները ըստ *Կովկասյան զեկուոյց*–ի:
- 1.8 Քաղվածք նույն զեկուոյցի 35–րդ էջից:
- 1.9 Խորհրդային Հայաստանը 1990 թ.:
- 2.1 Հատված *Ռուսական հանրագիտարան*–ից, 1890 թ.:
- 2.2 Հատված *Բրիտանական հանրագիտարան*–ից, 1910 թ.:
- 2.3 Հատված *Իսլամի հանրագիտարան*–ից, 1913 թ.:
- 2.4 Հատված թրքական *Իսլամական հանրագիտարանից*, էջ 91, հատոր 12, 1942 թ.:
- 2.5 Բրիլլի 1960 թ., հատված *Իսլամական հանրագիտարանի* էջ 188–ի *Ադրբեջան* հոդվածից:
- 2.6 Բրիլլի 1960 թ., հատված *Իսլամական հանրագիտարանի* էջ 191–ի *Ադրբեջանի ՍՍՀ* հոդվածից:
- 2.7 Հոդված *Իսլամի մեծ հանրագիտարան*–ից, Թեհրան, 1995 թ.:
- 2.8 Հարավային Կովկասը 18–19–րդ դդ., SDUK Atlas, 1844, էջ 72:
- 2.9 Հարավային Կովկասը միջին դարերում, SDUK Atlas, 1844, էջ 90:
- 2.10 Պարսկաստանի սահմանը՝ ըստ Բրադֆորդի ատլասի, 1835 թ., էջ 120:
- 2.11 Միջին Արևելքի շրջանը՝ ըստ Բրադֆորդի ատլասի, 1835 թ., էջ 176:
- 2.12 Ադրբեջանի քարտեզը՝ ըստ Քյաթիբ Չելեբիի *Ջիհան Նյունա* ձեռագրի, 1650–ական թթ.:
- 3.1 Պտղոմեոսի *Մեծ Հայքի ու Փոքր Հայքի քարտեզը*՝ տպագրված Հռոմում 1482 թ.:
- 3.2 Իսիդորի *Աշխարհացոյցի* 12–րդ դարի օրինակը, Էքս–ան–Պրովանս, Ֆրանսիա:
- 3.3 Ասիայի շրջանը՝ ըստ Սբ Ջերոմի 5–րդ դ. քարտեզի:
- 3.4 Հարավային Կովկասի շրջանը՝ ըստ Իդրիսիի քարտեզի, տառադարձումը՝ Կոնրադ Միլլերի:
- 3.5 Անջելինո Դուլսերոսի 1339 թ. պորտուլան քարտեզից Արևելյան Միջերկրականի շրջանը:
- 3.6 Կիլիկիայի հայկական թագավորությունը Անջելինոյի 1339 թ. քարտեզից:
- 3.7 Մեծ Հայքը Անջելինոյի 1339 թ. քարտեզից:
- 3.8 *Հայաստանը Հուսեյնիանոս կայսեր օրոք*, Բյուզանդիոնի բաժանումներով, Դե լա Ռյու, 1653 թ.:
- 3.9 Հատված Քյաթիբ Չելեբիի *Ջիհան Նյունա*–ի տեքստից, 1653 թ.:
- 4.1 Նորաստեղծ Աբեմենյան կայսրության տարածքը: Տեքստի համալսարանի հավաքածու:
- 4.2 Օրինակ Ադրբեջանի պատմաբանների տառադարձված տեքստերից:
- 5.1 Անատոլիայի և Հայկական բարձրավանդակի տեղագրական քարտեզը:
- 5.2 Բարձրավանդակների քարտեզը *Բրիտանական հանրագիտարան*–ից, 1997 թ.:
- 5.3 Հատված Սբ Ջերոմի 5–րդ դ. քարտեզից, որտեղ արևելքը վերևում է:
- 5.4 Կովկասի հարավի և Հայաստանի շրջանի հատվածը Իսիդորի 1055 թ. ձեռագիր *Աշխարհացոյց*–ից:
- 5.5 Հատված Դեսելիեյի 1546 թ. *Աշխարհացոյցից*:
- 5.6 Հաուլիի *Աշխարհացոյց* քարտեզից Կովկասի շրջանը, 1547 թ. Բրիտանական գրադարան:
- 5.7 *Ալեքսանդր Մակեդոնացու գրաված տարածքի քարտեզը*, Աբրահամ Օրտելիոս, 1595 թ.:
- 5.7ա Վերի քարտեզի մի մասը, որտեղ նշված է Մեծ Հայքի տարածքը:

- 5.8 *Արևելքի հին միապետությունների քարտեզը*, Ռոբերտ դե Վուգոնդի, 1779 թ., Փարիզ:
- 5.9 Ասիական ժողովուրդների հանրագիտարան–ից մի հատված, 2009 թ.:
- 6.1 Փոքր Ասիայի և Անատոլիայի սահմանի քարտեզը, 19–րդ դար, Բրիտանիա:
- 6.2 *Թուրքիայի տեղագրական քարտեզը*՝ իր բաժանումներով:
- 6.3 Քյաթիր Չելեբիի *Իչի, Քարանան, Անատոլիա և Սիվաս վիլայեթների քարտեզը*, 1732 թ.:
- 6.4 Մահմուդ Ռահիֆի *Օսմանյան կայսրության ասիական մասը*, Ուշքուդար, Թուրքիա, 1803–1804 թթ.:
- 6.5 *Ռուս–թուրքական պատերազմական քարտեզ*, Օսմանյան ռազմական նախարարություն, 1877 թ.:
- 6.6 Կիպերտի *Ասիական Թուրքիայի* քարտեզի հատված, 1844 թ. քարտեզի բնագրից:
- 7.1 Աղվանքն ու Ադրբեջանը Արաբական խալիֆայության մեջ, 7–13–րդ դդ.: *Ադրբեջանի պատմական քարտեզները* ատլասից, 1994 թ.:
- 7.2 *Ադրբեջանը 9–րդ դարում*, վերցված *Ադրբեջանի պատմական քարտեզները* ատլասից, 1994 թ.:
- 7.3 Հայաստանը, անվանված որպես *Արևնոյան Ադրբեջան*, Ալաքբարլիի *Արևնոյան Ադրբեջանի հուշարձանները* գրքից, 2007 թ.:
- 8.1 Շարդանի Երևանի գծագիրը նրա *Ուղեգրություններ* գրքից, 1686 թ.:
- 8.2 Բրիտանացի գեղանկարիչ Քրր–Պորտերի Էջմիածնի և Արարատների տեսարանը, 1817 թ.:
- 8.3 Արցախի *Մարաղա* գյուղի հուշարձանի լուսանկարը, 1978 թ.:

# ՆԵՐԱԾԱԿԱՆ

Որպես երկիր՝ Հայաստանը Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի և Հունաստանի հետ հնագույն 10 երկրների ցանկում է, իսկ հայկական քաղաքակրթությունը համարվում է հնագույններից մեկը: Բայց շատերը տեղյակ չեն, որ Հայաստանը նաև ամենափոքր երկրներից մեկն է, որի այժմյան տարածքն իր նախկին տարածքի մեկ տասներորդ մասն է կազմում:

Կովկասի հարավում տեղակայված երկրների համար քսաներորդ դարը լի էր անսպասելի զարգացումներով: Առաջին համաշխարհային պատերազմին հայերը, որ բնակվում էին իրենց պատմական հայրենիքում՝ Անատոլիայում ու Թուրքիայի արևելքում, Օսմանյան կայսրության կողմից 1915 թ. ենթարկվեցին 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը: Նրանք պատճառաբանեցին, որ հայերին իրենց իսկ ապահովության համար տեղափոխում են ռազմադաշտերից հեռու, մինչդեռ ռազմադաշտից հարյուրավոր կիլոմետր հեռավորության բնակավայրերի հայերին նույնպես առանց բացառության բռնագաղթեցրին ու աքսորի ճանապարհին կոտորեցին<sup>1</sup>:

Սևրի խաղաղության համագումարը ծրագիր ներկայացրեց հայերին հանձնելու իրենց պատմական հայրենիքի մի մասը, սակայն Թուրքիայի առաջնորդ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը, արհամարհելով ու անտեսելով միջազգային հանրության որոշումներն ու դաշնագիրը, դրանք չեղյալ համարեց<sup>2</sup>: Նոր պայմանագրեր պատրաստվեցին, որոնցից մեծ մասը ստորագրել են չճանաչված և ոչ իրավասու պաշտոնյաներ: Նույն ընթացքում եվրոպացի դիվանագետները զբաղված էին Միջին Արևելքի նավթի հանքերն իրար մեջ բաժանելով և ժամանակ չունենին ուրիշ խնդիրներով զբաղվելու:

Ներկա երեք հարավկովկասյան հանրապետությունները, ազատվելով ցարական լծից, 1918 թ. հռչակեցին անկախություն: Հայաստանի և Վրաստանի պարագայում նրանք վերականգնեցին իրենց հնամյա անունները, սակայն Ադրբեջանի անվանումը այլ խնդիր էր: Առաջին անգամ լինելով նորաստեղծ պետություն՝ այն տիրացավ հարևան պետության նահանգներից մեկի անվանը և երկիրն անվանեց Իրանի Ադրբեջան նահանգի անունով:

Շուրջ 2,5 տարի անկախությունից հետո բոլշևիկյան հեղափոխությունը տարածվեց՝ ընդգրկելով Հարավային Կովկասը: 1922 թ. արդեն իսկ երեք հանրապետությունները ներգրավվել էին Անդրկովկասյան դաշնակից սովետական սոցիալիստական հանրապետության մեջ: Շուրջ 8 ամիս անց անվանափոխվելով՝ դարձան Անդրկովկասյան Սոցիալիստական Դաշնակիցների Խորհրդային Հանրապետություն՝ դառնալով Խորհրդային Միության հիմնադիր անդամներ: 1936 թ. Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետությունը կազմալուծվեց, և Հարավային Կովկասի երեք հանրապետությունները դարձան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության՝ ԽՍՀՄ-ի լիարժեք անդամներ: Մյուս անդամներն էին Ռուսաստանի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետությունը, Ուկրաինական և Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունները:

Կարևոր է նշել, որ մինչև 1936 թ. Կովկասի հարավ-արևելքում բնակվող թուրք ժողովուրդն իրեն կոչում էր «թուրք», երբեմն էլ՝ «թաթար» կամ «մահմեդական» ընդհանուր անուններով, բայց 1936 թ. Կրեմլի որոշումով սրանք բոլորը դարձան «ադրբեջանցի»<sup>3</sup>: Այս անվանումն իրականում պատկանում է Արաքսից հարավ բնակվող Ատրպատականի բնիկներին, որոնք հնդեվրոպական ցեղերից են սերված և այժմ էլ բնակվում են Իրանի Ադրբեջան կամ հայերենով՝ Ատրապատական նահանգում, որը ներկայում մասնատված ու բաժանված է երեք նահանգի:

Դիվանագետների, իշխանավորների և զմնների ծայրահեղ ազգայնական քարոզչությունը, լինելով անընդունելի, հաճախ անտեղյակ անհատների համար պարզ ու հասկանալի են, բայց ակադեմիական ու գիտական շրջանակներից նման կեղծիքներ ներկայացնելը, տարածելն ու քարոզելը անընդունելի են ու աններելի: Ադրբեջանում դեռևս առկա են որոշ գիտնականներ, որոնք համարձակվում են իրականությունն ասել, սակայն նրանք սակավաթիվ են: Դրանցից մեկը Ա. Ք. Ալեքսանդրովն է, ով իր «Ադրբեջանի հնագիտության և ազգագրության հետազոտություններ» աշխատության մեջ նշում է հետևյալը.

«Ադրբեջանցի» անվանումը սկսեց օգտագործվել 1936 թվականից: Նախքան այդ մեր երկրի ժողովուրդն ինքն իրեն կոչում էր «թուրք», մի անվանում, որն այժմ տրվում է հակահեղափոխական՝ պանթուրքիստ կուսակցության անդամներին<sup>4</sup>:

Այս հոգվածը նա հրատարակել է 1960 թ., սակայն Ադրբեջանի Հանրապետության ներկա քաղաքական իրավիճակում նման բացահայտումները բոլորովին անընդունելի են:

Ստամբուլի «Գալաթասարայ» համալսարանի պրոֆեսոր Իլբեր Օրթայլին իր հարցազրույցներից մեկում բացատրում է ադրբեջանցիների ծագման և նրանց լեզվի մասին: «Բլումբերգ» հեռուստաընկերության 2017 թ. ապրիլ 27-ի «Կորած ժամանակ» ծրագրում վարողի հարցին՝ «Ո՞րն է ազերիների հայրենիքը, նրանք որտեղից են եկել, և արդյո՞ք թուրքերն ու ազերիները նույն արմատներն ունեն», պատասխանեց.

Այո, ադրբեջանցիներն ու մենք եկել ենք Կենտրոնական Ասիայից և Կովկասի բնիկներ չենք, բայց որոշ ընկերներ դրան կողմնակից են... ի վերջո մենք բոլորս թուրք օղուզ ցեղից ենք:

Ադրբեջանցիների լեզուն էլ մեր քաղաքակրթության սկզբնական շրջանում մեր լեզուն էր: Սակայն նրանց բարբառում պարսկերեն բառերի գործածությունը շատ ավելի ծավալուն և հաստատված է, քան մեր լեզվում: Մեր լեզուն զարգացել է, իսկ նրանցը՝ ոչ<sup>5</sup>:

Նույն պատմաբանը «Հուրրիյեթ» թերթին տված մեկ այլ հարցազրույցում ասել է.

Ադրբեջանցին ու ազերին երկու տարբեր բաներ են: Թյուրքական ցեղախմբերի մեջ «ազերի» անունով ազգ կամ ցեղ գոյություն չունի: Նույնիսկ կոմունիստները նրանց թուրք էին անվանում: Ազերի անունը հորինել է Ստալինը, ով մի տգետ վրացի էր՝ ազգություններից անտեղյակ: Նա մի պատուհաս էր<sup>6</sup>:

Երբ չափազանցված քաղաքական նպատակներին հասնելու, ինչպես նաև հոետորական և միասնական պահանջատիրական ճառերով հանդես գալու կարիքը կա, Ադրբեջանի Հանրապետության պատմաբաններն ու իշխանությունները հիշում են իրենց և Թուրքիայի ընդհանուր արմատներ ունենալը: Այս հայտարարությունները հատկապես կարևոր են դառնում, երբ նրանք խոսում են «պարսկական Ադրբեջան» նահանգի (որին նրանք կոչում են «Հարավային Ադրբեջան») և այդ երկրամասն իրենց «Հյուսիսային Ադրբեջանին» միավորելու մասին: Այս անհիմն միավորումը քարոզվում է հակառակ իսլամական, եվրոպական և ուսական պատմական և աշխարհագրական առկա և ընդունված բոլոր փաստերի, որոնք հակառակն են ապացուցում: Նրանց հիմնական պատճառաբանումն այն է, որ երկուսի բնակիչներն էլ շիա մահմեդականներ են և խոսում են նույն լեզվով, որոնց տարբերության մասին պրոֆ. Օրթայ-լի խոսքը մեջբերված է նախորդ էջում: Ադրբեջանի Հանրապետության որոշ գիտնականներ, այս քարոզչությունը շարունակելով, գնում են ծայրահեղությունների՝ ասելով, որ երկու ժողովուրդները նույն ակումբի անդամներ են<sup>7</sup>, և նույնիսկ այն, որ «մենք մեկ ազգ ենք՝ բաժանված երկու երկրների միջև»<sup>8</sup>:

Եթե երկրներն ու ժողովուրդներն իրարից առանձնացնողը կամ միացնողը միայն լեզուն լիներ, ապա գերմանախոս Ավստրիան պետք է դառնար Գերմանիայի մի մասը, իսկ Բելգիայի ֆրանսախոս վալոնները լինեին ֆրանսիացի: Հարավային Ամերիկայում խնդիրն ավելի կբարդանար, քանի որ մայրցամաքի մեծ մասը խոսում է իսպաներեն: Արդյո՞ք նրանք բոլորն իսպանացի են:

Բայց և այնպես, երբ կարիքը կա «փաստելու», որ նորածին Ադրբեջանի Հանրապետությունն ունի հնագույն պատմություն և մշակույթ, նրանք պնդում են, որ իրենք սերված են կովկասյան ազգաններից, որոնք, ըստ Ստրաբոնի, 26 տարբեր լեզուներով խոսող ցեղախմբերի հավաքածու էին: Այս ցեղախմբերը 4–րդ դ. կեսերին ընդունեցին քրիստոնեությունը, մինչև այն, երբ արաբները Կովկաս ներխուժելուց հետո դրանց մեծ մասին իսլամացրին: Սակայն Ազվանքը երկրորդ հազարամյակի առաջին դարերում որպես երկիր և պետություն անհետացավ թե՛ իսլամական, և թե՛ եվրոպական քարտեզներից:

\* \* \*

Կոմունիստների իշխանության օրոք Կովկասի հարավային տարածքը, որտեղ բնակվում էր մեծ թվով հայություն, միակողմանի որոշումներով վերաբաժանվեց, ու որոշ տարածքներ փոխանցվեցին հարևաններին՝ հաճախ առանց հայերի պաշտոնական համաձայնության: Այս քաղաքական անխոհեմ վերաբաժանումների արդյունքն են Կովկասի հարավում և նախկին ԽՍՀՄ–ի այլ տարածաշրջաններում ներկայում գլուխ բարձրացրած ազգագրական և տարածքային պահանջատիրական խնդիրները<sup>9</sup>:

Կոմունիստների իշխանության օրոք արհեստականորեն ստեղծված այս խնդիրներն աչքաթող էին արվում մինչև Գորբաչովի «վերակառուցման և հրապարակայնացման» կարգախոսը, որից հետո աստիճանաբար սկսվեցին արտաքուստ հանգիստ, բայց ներսում խմորումներով լի 70 տարի խորհրդային տարիներին ստեղծված խնդիրների բացահայտումներն ու բողոքարկումը: Իհարկե, Ռուսաստանի Դաշնությունը բարյացակամորեն չդիտարկեց այս բողոք-

ները, ինչը պատճառ դարձավ որոշ շրջաններում իշխանությունների կողմից ուժի կիրառման և շարունակ ճնշման, հրահրեցին անգամ Մոսկվայի ուղղակի հսկողության ու միջամտության ի վերջո սրանք կասեցվեցին ու հաջողության չհասան:

Ինչպես նշված է մեր նախկին աշխատանքներում, այս աշխատություններում քննարկվող խնդիրների մեծամասնությունը որոշ չափով առկա է իմ մյուս գրքերում, որոնք կարելի է ներբեռնել իմ՝ [www.roubengalchian.com](http://www.roubengalchian.com) կայքից: Դրանց մեջ նույն խնդիրները քննարկվել են տարբեր հարթակներում, բայց կարևոր է, որ այս լուրջ հակասությունները և սխալ ներկայացումները հավաքվեն և միասնաբար ընդգրկվեն մեկ հատորում, որը կարող է ապահովել իրական պատասխաններ և փաստեր հետաքրքրված հասարակության համար: Կարևոր հակասություններն ու դրանց առանձնահատկությունները ներկայացվել ու քննարկվել են գրքիս հաջորդ գլուխներում:

Ներկա աշխատությունը ներառում է Կովկասի հարավում գոյություն ունեցող ամենակարևոր հակասություններն ու խնդիրները, որոնք հանրամատչելի կերպով ներկայացվում են ընթերցողին: Սրանք կարևոր են, քանի որ հակասությունները, որոնց հեղինակները Ադրբեյջանի Հանրապետության իշխանությունները և գիտնականներն են, ոչ մի ջանք և գումար չեն խնայում տարածելու իրենց կեղծ տեսությունները՝ դրանք ներկայացնելով որպես իրողություն: Հատորումս քննարկված նյութերն են.

1. Ակնարկ Հարավային Կովկասի պատմությանը:
2. «Ադրբեյջան» թյուրանվանումը:
3. «Մեծ Հայք» և «Փոքր Հայք» անվանումները:
4. Ադրբեյջանի անունը, լեզուն և գիրը:
5. «Հայկական բարձրավանդակ» կամ «Հայկական լեռնաշխարհ»:
6. Ինչ և ո՞րն է Անատոլիան:
7. «Հյուսիսային», «Հարավային» և «Արևմտյան Ադրբեյջան» անվանումները:
8. Հայերի ներկայությունը Հարավային Կովկասում:

Կցանկանայի պարզաբանել, որ գրքիս անգլերեն տարբերակը լույս է տեսել 2019 թվականին, որից հետո լույս է տեսնում հայերեն տարբերակը: Տարբերակ, քանի որ սա թարգմանություն չէ, այլ վերաշարադրում: Հայ ընթերցողի համար նյութը պետք է դիտարկվի և ներկայացվի տարբեր տեսանկյունից: Այնպես որ, գրքի տեքստը կրկին շարադրվել է՝ այս անգամ հայերենով: Հայերենում ավելացվել են մի քանի նոր պատկերներ, իսկ քարտեզների մի մասը փոխվել է:

# Ներածականի ծանոթագրություններ

- <sup>1</sup> Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ամբողջ բնիկ հայ ժողովուրդը, Առաջին համաշխարհային պատերազմի Արևելյան և Արևմտյան ճակատների մոտակայքում, նույնիսկ երկրի կենտրոնական մասում բնակվողները բռնագաղթեցին իրենց տներից, գյուղերից և քաղաքներից: Օսմանյան կայսրության բոլոր շրջաններում բնակվող հայ ժողովրդի մեծամասնությունը աքսորի ճանապարհին զոհվեց: Նրանք կոտորվեցին, բանտարկվեցին, գնդակահարվեցին, սովամահ եղան ու համաճարակների զոհ դարձան: Այս ոճրագործությունների մի մասի պատմությունները գրանցվել և պահպանվել են Հայաստանի ազգային արխիվում: Սրանցից մի մասը հրատարակվել է *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում – 1915: Վերապրողների վկայությունները* եռահատորյակում, Երևան, 2012: Սրանց համառոտ տարբերակները հրատարակվել են ռուսերեն, անգլերեն և թուրքերեն: Տե՛ս նաև Գևորգյան, Ռայմոնդ Հարություն: *The Armenian genocide: a complete history*. London: IB Tauris, 2011.
- <sup>2</sup> Տե՛ս Պապյան, Արա, *Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson*, Երևան, Մոդուս վիվենդի, 2011 թ.:
- <sup>3</sup> Գալսյան, Ռուբեն, *Աղբբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Ջանգակ, Երևան, 2017, էջ 56:
- <sup>4</sup> А. К. Алекперов, *Исследования по археологии и этнографии Азербайджана*. Баку, 1960, էջ 71:
- <sup>5</sup> Ortayli, İlber. “İşin Aslı”, programme aired April 27, 2013, <http://www.isinasli.org/2013/04/azeriler-turk-mu-azerilerin-kokeni-nedir.html>.
- <sup>6</sup> Ortayli, İlber. Interview on YouTube, <https://www.youtube.com/watch?v=ggjaPLbJ8C8>, and *Hurriyet* article, August 17, 2017.
- <sup>7</sup> Landau, Jacob. *Pan Turkism: From Irredentism to Cooperation*, London: Hurst & Co, 1995, էջ 7, 14–18.
- <sup>8</sup> Gökalp, Ziya. *Türk Medeniyeti Tarihi*, Istanbul: 1925.
- <sup>9</sup> Ներկայիս Ռուսաստանում առկա են ինքնավար հանրապետություններ, որոնց շարքին են Չեչնիան, Ինգուշեթիան, Դադստանը, Կարելիան, Թաթարստանը և 17 ուրիշներ:



# 1. ԱԿՆԱՐԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Հնագույն ժամանակներում Կովկասյան լեռնաշղթայից հարավ և Իրանից հյուսիս ընկած տարածքում առկա երկրներն էին Մարաստանը, Հայաստանը և Աղվանքը կամ Կովկասյան Ալբանիան: Հյուսիսային կամ Փոքր Մարաստանի վերաբերյալ Ստրաբոնը գրում է հետևյալը.

Մարաստանը բաժանված է երկու մասի. մի մասը կոչվում է Մեծ Մարաստան, որի մայրաքաղաքը Էքբաթանան է [ներկա Համադանը], որտեղ էր Մարական կայսրության թագավորների նստավայրը (պարթևները մինչև հիմա շարունակում են այդ քաղաքը որպես թագավորանիստ գործածել, և նրանց թագավորները ամռանն առնվազն մի քանի ամիս այստեղ են անցկացնում...), մյուս մասը կոչվում է Ատրոպատյան Մարաստան, որն իր անունը ստացել է Ատրոպատես զորավարից, քանի որ նա էր, որ չթողեց Մեծ Մարաստանի մասը կազմող այս երկրամասը [Արբելայի պատերազմում, մ.թ.ա. 331 թ.] դառնա մակեդոնացիների հպատակը<sup>1</sup>:

Այսպիսով՝ վաղ ժամանակներից Արաքսից հարավ ընկած Մարաստանը վերանվանվեց Ատրոպատեն (հայերենով՝ Ատրպատական), որը մինչ այժմ նույն տարածաշրջանին տրվող հայերեն անվանումն է: Հատկապես այս տարածք արաբների ներխուժումից հետո տվյալ անվանումը, հարմարվելով նոր իշխանությունների լեզվին, տրոհվեց և դարձավ Ատրոպատկան, Ադրբեյգան, Ադերբեյջան և վերջապես՝ Ադերբայջան:

Ըստ Ստրաբոնի՝ ներկա Ադրբեյջանի Հանրապետության տարածքի մեծ մասը կոչվում էր Կովկասյան Ալբանիա (հայերենով՝ Աղվանք, արաբերենով՝ Առան), որի մասին նա գրում է.

Աղվաններն ապրում են իբերների և Կասպից ծովի միջև՝ արևելքում սահման ունենալով ծովը, իսկ արևմուտքում՝ Վիրքը: Մնացած կողմերից հյուսիսը պաշտպանված է Կովկասյան լեռներով (քանի որ սրանք դաշտավայրերից ավելի բարձր են, իսկ դրանց՝ դեպի ծով ձգվող մասը կոչվում է Կերավնյան, հարավային սահմանն էլ Հայաստանն է, որը ձգվում է նրա [Աղվանքի] ամբողջ երկայնքով<sup>2</sup>...

Հայաստանի մասին Ստրաբոնը հետևյալն է նշում.

Հայաստանի հարավային մասի որոշ շրջաններ հասնում են մինչև Տավրոս, որը այն բաժանում է Եփրատի և Տիգրիսի միջև ընկած Միջագետք երկրից: Մեծ Հայքի արևելյան սահմանն է Ատրոպատենը [Ատրպատականը], հյուսիսում են Կասպից ծովի վերը տեղակայված Պարաքոթարասի լեռները, ինչպես նաև Աղվանքը և Վիրքը... նրա արևմտյան սահմանում է Փոքր Հայքը և Եփրատ գետը, որը Հայաստանը բաժանում է Կասպադովկիայից և Կոմմագենեից<sup>3</sup>:

Արաքսի մոտ տեղակայված այս ամրոցը [Վերան] կազմում է Հայաստանի և Ատրպատականի սահմանը<sup>4</sup>:

Ըստ մասնագետների (այդ թվում՝ Ստրաբոնի և Անանիա Շիրակացու)՝ Հայաստանի արևելյան Սյունիք երկիրը տարածվում էր Սևանի հարավարևելքից մինչև Արաքսի հյուսի-

սային ափը, իսկ դրանից արևելք ընկած Արցախը կամ Ղարաբաղը տարածվում է Սյունիքից մինչև Արաքսի և Կուրի խառնարանը՝ Հայաստանի հարավարևելքում է Իրանի Մարաստան-Ատրոպատեն նահանգը, հարավում՝ Միջագետքը և Տավրոսյան լեռնաշղթան, իսկ արևմուտքում են Փոքր Հայքը և Կապարովկիան:


Այս ամենը հաստատում է երկրորդ դարի հանրահայտ աշխարհագրագետ Կլավդիոս Պտղոմեոսի (մոտ 100–170 թթ.) «Աշխարհագրություն» աշխատանքից վերցված պատկերը՝ 1.1-ում արտատպված քարտեզը, որը ցուցադրում է ժամանակին տարածաշրջանի վիճակը:



1.1. Մերկատորի 1578 թ. Պտղոմեոսյան առյափց Ասիայի երրորդ քարտեզը: Մեծ և Փոքր Հայքերն ընդգծված են կարմիր, Ատրոպատականը՝ կապույտ, Վիրքը՝ մանուշակագույն, վերում Աղվանքը՝ կանաչ, իսկ ներքևում Մարաստանը՝ նույնպես կանաչ:

Ասիայի երրորդ քարտեզը (պատկեր 1.1) աջ կողմում ցուցադրում է Կասպից ծովը, ձախում՝ Սև ծովը, իսկ դրանց միջև տեղադրված են Կովխիդա-Աբխազիան, Վիրբը և Աղվանքը: Այդ երեքից հարավ Մեծ Հայքն է: Այս տեղաբաշխումը կարելի է տեսնել բոլոր հնադարյան քարտեզներում:

Ինչպես փաստվեց, երկու հազարամյակ է, ինչ Արաքսից հարավ տեղակայված շրջանը կոչվել է Աղրբեջան, որը միշտ էլ ներկայացել է որպես Իրանի հյուսիսարևմտյան նահանգը՝ Ատրպատականը: Բայց Կուրի հյուսիսային ափին տեղադրված հարևան երկրի՝ Աղվանքի ձակատագիրն ավելի բարդ փուլերով է անցել: Աղվանքի տարածաշրջանի զարգացումներին հետդարձ հայացքը բացահայտում է հետևյալ իրավիճակը:




1.2. Հարավային Կովկասը 6-րդ դարում Սասանյան Պարսկաստանի վարչական բաժանումով, որը նշված է կարմիր եզրագծով:


Ինչպես նախապես նշվեց, Ստրաբոնի հայտարարած 26 ցեղախմբերից բաղկացած Աղվանքը 4-րդ դ. կեսերին ընդունեց քրիստոնեությունը, իսկ դրանից մեկ դար անց տարածքը գրավեցին պարսիկները՝ Աղվանքը դարձնելով Սասանյան Իրանի վասալը:

Սասանյաններն իրենց հսկողությունը դյուրացնելու նպատակով Արաքսից և Կուրից հյուսիս նոր գրաված տարածքները՝ բուն Աղվանքը, Սյունիքը և Արցախը, միացրին և կոչեցին Առոսան կամ Առան միասնական անվամբ, որը ցույց է տրված 1.2 պատկերում՝ շրջափակված կարմիր եզրագծով: Իսկ Ատրպատականը կամ Արտուրբադագանը, ընդգծված կանաչ, Իրանի կից նահանգն է՝ տեղադրված բուն երկրի հյուսիսարևմտյան ծայրամասում:

7–8–րդ դդ. արաբները ներխուժեցին ու գրավեցին Իրանը և Կովկասի հարավը: Այսպիսով՝ Աղվանքի բնիկ ցեղերի մեծ մասը, բացառությամբ ուղիների և մի քանի ուրիշների, ընդունեցին իսլամը և դարձան մահմեդական: 9–րդ դարից սկսած տարածաշրջան հասան Կենտրոնական Ասիայի թյուրքական ցեղերը, որոնց հետևեցին սելջուկները և ապա մոնղոլները: Սրանք Կովկասի հյուսիսային և հարավային տարածքներում հաստատեցին մեծ ու փոքր ավատատիրական խանություններ և տերություններ:



1.3. Իսթախրիի Հայաստանի, Աղվանքի և Ադրբեջանի քարտեզը նրա 10–րդ դ. «Մասալիք վա մամալիք» գրքից, Բրիտանական գրադարան, Լոնդոն:



1.4. Մուղադդասի Հայաստանի, Աղվանքի և Ադրբեջանի քարտեզը նրա 10–րդ դ. «Ահսան ուլ թաղասիմ» գրքից, Բրիտանական գրադարան, Լոնդոն:

11–14–րդ դարերից հետո Աղվանքը որպես երկիր վերացավ իսլամական և քրիստոնեական քարտեզներից և քարտեզագիտական ու պատմական գրականության մեծ մասից<sup>8</sup>: Բացատրվյուն են կազմում որոշ հայկական պատմական աղբյուրներ, որտեղ տարածքը նշվում է որպես Ուտիք և Արցախ:

Սասանյան Առտանը կարելի է տեսնել մինչև 10–12–րդ դդ. իսլամական քարտեզագրության մեջ, որոնց կարևոր հեղինակները, օրինակ՝ Իսթախրին ու Մուղադրասին, ծնունդով պարսիկ էին: Պարսկական գրականության մեջ այս շրջանը ևս կոչվում է Առան կամ Առտան:

Իսլամական Բալխի դպրոցին պատկանող աշխարհագրական գրքերում տեքստի հետ մանրամասն ներկայացված են նաև տվյալ նահանգի կամ շրջանի քարտեզները՝ պատրաստված յուրահատուկ ոճով: Իսթախրիի և ուրիշների «Գիրք երկրների և ճանապարհների» կոչված աշխատություններում աշխարհի վերաբերյալ բացատրություններին զուգահեռ առկա է ևս մի աշխարհացույց քարտեզ, որին հետևում են 19–21 իսլամական երկրներին, նահանգներին և շրջաններին վերաբերող աշխարհագրական տեքստի գլուխները, որոնք նույնպես ընդգրկում են տվյալ տարածաշրջանի քարտեզները:

Կովկասի շրջանը ցուցադրող նրանց գծած քարտեզներում Արաքսից հարավ շրջանը կոչվում է Աղբբեջան, որն Իրանի նահանգներից է, իսկ Արաքսից ու Կուրից հյուսիս գտնվող տարածքը՝ ներառյալ Աղբբեջանի Հանրապետության և Վրաստանի քաղաքները, կոչվում է Առտան: Հայաստանը տեղակայված է Արաքսի երկու ափերին, որի տարածքում են Դվինն ու Արարատները (տե՛ս պատկեր 1.3):

Բացատրություններում առկա են տեղեկություններ տեղի բնակչության, նրանց արդյունաբերության և տնտեսական իրավիճակի մասին: Ինչպես նշվեց, Կովկասի շրջանը ցույց տվող քարտեզը ներառում է պարսկական Աղբբեջանը, Աղվանքը և Հայաստանը, իսկ տեքստում նշված են այդ երկրների կարևոր քաղաքների անունները հետևյալ կարգով.

**Հայաստան** — Դաբիլ (Դվին), Արձեշ, Բերկրի, Խլաթ, Կալիկլա (Էրզրում), Արգան (Երզնկա), Բիթլիս, Միաֆարկին և այլն:

**Առտան** — Բաբ–ուլ–Աբուաբ (Դերբենդ), Շամախի, Շաքի, Շիրվան, Թիֆլիս, Բարդնա (Պարտավ), Գյանջա (Գանձակ):

**Աղբբեջան** — Մարանդ, Միանե, Թավրիզ, Արդաբիլ, Զանջան, Մարաղա, Խոյ, Ուրմիա և այլն:

Վերը նշվածներից Առտանի տարածքում եղած քաղաքների մեծ մասն այսօր Աղբբեջանի Հանրապետության տարածքում են, իսկ Աղբբեջանին պատկանող քաղաքները ներկա պարսկական Աղբբեջան ու Արդաբիլ նահանգների տարածքներ են:

Քանի որ Կովկասի հարավը պատկերող բոլոր իսլամական քարտեզներում թե՛ Առտանը և թե՛ պարսկական Աղբբեջանը առկա են որպես առանձին շրջաններ, ապա ներկայացված շրջանների քարտեզները փաստում են, որ արաբական և պարսկական աշխարհագրության մեջ դրանք միշտ համարվել են որպես առանձին երկրներ: Հետևաբար, Աղբբեջանի Հանրա-



1813 թ. Գյուլիստանի և 1828 թ. Թուրքմենչայի ուռա-պարսկական պատերազմներին հաջորդող պայմանագրերի արդյունքում Արաքսի հյուսիսում տեղակայված և Պարսկաստանի կողմից շուրջ 200 տարի գրավված հողերն այս անգամ երկու փուլով գրավեց ցարական բանակը: Ռուսաստանի անդրկովկասյան ղեկավարությունը իր ղեկավարման համար տարբեր նպատակներով այս տարածքները բաժանեց վարչական շրջանների, որոնք կատարվում էին, առանց ուշադրություն դարձնելու տեղի ժողովրդագրությունն ու ցեղախմբերի բնակչությանը: Արևելյան Հայաստանի մի մասը տեղակայված էր Երևանի նահանգում, հարավարևմտյան հատվածը՝ Ելիզավետպոլի նահանգում, իսկ հյուսիսային մասը՝ Թիֆլիսի նահանգում (տե՛ս քարտեզ 1.6):



1.6. Կովկասի շրջանը 1880 թ. Ա. Յուզիկի «Կովկասի էթնոքաղաքական պատմության առլաս»-ից, Մոսկվա, 2006 թ.:

1918 թ. Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին հարավկովկասյան ուսական նահանգներն անկախացան, որոնցից երկուսը՝ Հայաստանն ու Վրաստանը, վերականգնեցին իրենց կորցրած պետականությունների անվանումները: Երրորդ երկրի մահմեդական ժողովուրդը, որն իրեն թուրք կամ թաթար էր կոչում և իրեն համարում էր մահմեդական, թուրք ծայրահեղական Մամեդ Ամին Ռասուլզադեն Ալթաթուրքի հորդորմամբ հաջողեց իր համերկրացիներին համոզել երկրի անունը դնելու Ադրբեջանի Հանրապետություն, որն Իրանին պատկանող հարևան նահանգի հնագույն անունն էր<sup>10</sup>:

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունը պարբերաբար հրատարակում է պաշտոնական զեկույցներ: 1918 թ. զեկույցները պատրաստել էր Գ. Վ. Պրոթերոն, որոնք հրատարակվել և վաճառվում էին Լոնդոնում: Դրանցից Կովկասի վերաբերյալ հատորը պարունակում է Ռուսաստանի Կովկասի նահանգների ժողովրդագրությունը:

The official census of 1897 gave statistics of the various peoples in Transcaucasia. Though with regard to the more remote tribes these figures are only approximate, they are the best available and have served as a basis for all subsequent estimates. The distribution of the various peoples is shown in the following table:

	GOVERNMENTS AND PROVINCES <sup>1</sup>							
	Baku.	Daghestan.	Elizavetopol.	Kars.	Kutais.	Tiflis.	Chernomoris.	Erivan.
Abkhazians	2	23	—	7	59,409	46	2	—
Armenians	52,233	1,631	292,188	73,406	24,643	106,189	6,285	441,000
Chechens	10	757	13	63	46	2,207	5	3
Cherkess	18	37	10	71	105	—	1,939	1
Czechs	149	19	25	11	107	245	1,290	36
Georgians	1,816	375	1,230	526	343,929	405,537	976	566
Germans	3,430	261	3,104	430	1,605	8,349	748	210
Greeks	278	38	558	32,593	14,482	27,118	5,099	1,323
Imeretians	23	20	110	7	270,513	1,546	158	6
Jews	8,172	7,361	185	1,138	7,006	5,188	990	890
Kabardis	23	31	—	18	7	14	—	—
Karachais	—	4	29	6	16	67	—	3
Kumyks	26	51,209	2	21	24	25	3	5
Kurds	8	22	3,042	42,908	1,824	2,538	22	49,389
Lezgians	62,972	450,912	22,601	524	446	43,094	72	124
Lithuanians	272	520	116	892	490	1,293	47	384
Mingrelians	39	10	37	10	238,655	498	304	13
Moldavians	48	65	109	46	197	198	923	29
Nogai	—	1,909	—	1	—	18	—	12
Ossians	1,255	18	9	63,547	46,665	24,722	630	245
Ossetes	113	113	96	529	4,540	67,268	12	112
Persians	5,973	1,720	338	598	1,622	1,991	210	225
Polos	1,439	1,630	616	3,243	1,638	6,282	731	1,385
Russians	77,081	10,044	17,876	27,856	23,443	86,772	34,546	13,937
Tatars	485,146	32,143	634,980	2,347	790	107,383	291	313,170
Tates	89,519	2,998	1,753	6	34	16	2	709
Turcomans	74	9	4	8,442	8	12	—	1

<sup>1</sup> The Province of Batumi and the District of Sukhumi are included in the Government of Kutais. The District of Zakatali is included in the Government of Tiflis.

Ըստ 1.7 աղյուսակի՝ Կովկասից հարավ ընկած շրջանի ուսական հողերում՝ մինչև Իրանի և Օսմանյան կայսրության սահմանները, ապրում էին հետևյալ ցեղախմբերը՝


Թաթարներ	1,195,285
Հայեր	996,965
Վրացիներ	814,238
Լեզգիներ	580,745
Ռուսներ	297,154
Իմերեթներ	272,295
Մեգրելներ	239,566
Օսմանցիներ	137,111
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝	4,533,396

Մրանցից բացի ավելի էին նաև 18 տարբեր փոքր ցեղախմբեր: Այս ցուցակում չկան թուրք կամ ադրբեջանցի անունները, սակայն ավելի են 137 111 շունչ տեղում բնակվող օսմանցիներ:

1.7. Տարածաշրջանի ազգագրական տվյալները՝ ըստ Կովկասյան զեկույցի:

Ըստ նույն զեկույցի՝ հեղինակը գրում է 1918 թ. Հայաստանի, Վրաստանի և Թաթար հանրապետությունների ստեղծման մասին՝ առանց հիշեցնելու Ադրբեջան անունը<sup>12</sup>: Դրա փոխարեն նշված է Թաթար Հանրապետությունը: Զեկույցը շեշտում է.

Ակնհայտորեն անհնար է Արևելյան Կովկասի թաթարներին ու Դաղստանի լեռնային ցեղերին ազատ և ինքնազուլու թողնելը: Եվրոպայի համար կենսական կարևորություն ունեցող նավթահանքերն այս տարածքի խնդիրը դարձնում են հատուկ և շուտափույթ ուշադրության արժանի:



1.8. Քաղվածք նույն զեկույցի 35-րդ էջից:

Քսաներորդ դարի առաջին տասնամյակին մի շարք թուրք հանրահայտ անձնավորություններ՝ ներառյալ Ահմեդ բեյ Աղաօղլուն (Աղակը, 1869–1930), ազգայնամոլ դիվանագետ Մամեդ Էմին Ռասուլզադեն (1884–1955) և Թուրքիայի Իթթիհադ վե Թերեկկի կուսակցության<sup>13</sup> հիմնադիր Ալի բեկ Հուսեյնզադեն (1864–1940), ցարական ճշտամներից ճողոպրելով, հասան Անկարա, որտեղ ընկան օսմանցի դիվանագետ և գրող Մեհմեդ Գյոքալպի (1876–1924) և նրա կուսակցության ծայրահեղական ազդեցության տակ: Գյոքալպը քարոզում էր, որ Իրանի, Ադրբեջանի, Կասպից ծովի արևելքի և Խորազմի ցեղերում բնակվող բոլոր թուրքերը օղուզ ցեղից են, որը նրանց միատարր և միասնական սերված լինելն է փաստում<sup>14</sup>: Այսպիսով՝ Օսմանյան կայսրությունում նրանք մոտիկից ծանոթացան այդ կուսակցության հիմնական գաղափարներին և ղեկավարության ընդունած ուղեծրին:

Օսմանյան կայսրությունը գրավել էր հսկայական տարածք, որտեղ բնակվում էին բազմաթիվ և բազմալեզու ազգեր, որոնց անհնար էր կոչել ընդհանուր օսմանցի անունով: 1911 թվականից Բալկաններում տարածքներ կորցնելով՝ երիտթուրքերը սկսեցին հետևել Գյոքալպին, որը նպատակ ուներ ստեղծել միատարր ժողովուրդ ունեցող մի երկիր<sup>15</sup>: Սակայն նույնիսկ Բալկանների կորստից հետո երկիրն ազգովյամբ ու կրոնով դեռ միատարր չէր և այդ նախապայմանը դեռ չէր կարող ապահովել: Ժողովրդի մեծ մասը՝ հայերը, քրդերը, հույները, ալևիներն ու ասորիները, թրքական կաղապարի մեջ չէին տեղավորվում: Հետևաբար «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսով մի երկիր ունենալու համար կարիք կար տարածքը մաքրելու բոլոր օտար փոքրամասնություններից և ունենալու ազգովյամբ միայն թուրք և կրոնով մահմեդական բնակչություն: Քրդական հարցը դյուրություն չուներ, քանի որ նրանք սկսեցին կոչվել «սարի թուրքեր»: Սակայն մեծ խնդիրը քրիստոնյաներն էին, որոնց համար արդեն իսկ որոշված էր շուտով իրականացնել մի տարբեր՝ ծայրահեղ և խիստ դաժան վերջնական լուծում:

20-րդ դարասկզբին Կովկասի հարավարևմտյան՝ Շիրվանի (ներկայիս Ադրբեջանի Հանրապետության) շրջանի հոծ մասի և մտավորականության ընդհանուր ինքնությունը հիմնականում մահմեդական կրոնն էր<sup>16</sup>: Ըստ Ռասուլզադեի՝ նրանք, ովքեր պանթյուրքիզմ էին քարոզում, առանձնացնում էին թրքական ինքնագիտակցումը ընդհանուր մուսուլման համատեքստից՝ այդպիսով դնելով Ադրբեջանի ազգային ինքնագիտակցության առաջին հիմնաքարը<sup>17</sup>:

Թրքական ինքնությունը Շիրվանի շրջանի քաղաքական կյանքում հաստատելու մեջ մեծ դեր ունեցան Ա. Հուսեյնզադեն և Ա. Աղաօղլուն: Պանթյուրքական ինքնությունը անցողիկ միջոց էր՝ հասնելու ադրբեջանցի կրոնական և ազգային ինքնության հաստատմանը<sup>18</sup>: Ռասուլզադեի ղեկավարությամբ այս գաղափարախոսությունը Ադրբեջանի թուրքերին հասցրեց իրենց ազգային ինքնության հաստատմանը, որը դարձավ նրանց ազգային ինքնության կարգախոսը: Այս անվանումը ապագայում ընդունեցին ու պահպանեցին նաև կոմունիստները: Անկարայում կազմավորված Ռասուլզադեի քաղաքականությունը հիմք դրեց ադրբեջանցի թուրք անվանմանը՝ ի դեմս Իրանի ադրբեջանցի անվանման՝ այդպիսով 1918 թ. հաստատելով Ադրբեջանի ազգ-պետության և նրա ժողովրդի ազերի անվանումը<sup>19</sup>: Սակայն անտեսելով 1918 թ. ադրբեջանցի և ազերի անվանումները՝ նույն երկրի ժողովուրդը, ինչպես նաև Խորհրդային Միության մյուս ազգերը մինչև 1936 թ. նրանց տալիս էին թուրք անվանումը<sup>20</sup>:

Թուրք և ազերի անվանումների մասին կարելի է կարդալ Ստամբուլի Գալաթասերայ համալսարանի պրոֆեսոր Իլբեր Օրթալլիի հաստատածը, որը կգտնեք գրքիս Նախաբանում:

Աթաթուրքի ջանքերով արդեն գրեթե միատարր Թուրքիայի օրինակով՝ Կովկասի հարավում Ադրբեջան նորածին երկրի ժողովուրդը միատարր չէր, և այդպիսով Ադրբեջանն ադրբեջանցիների համար ցանկալի կարգախոսին հասնելն անհնար էր: Երբ 1920 թ. Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հանրապետություններում կոմունիստներն իշխանության եկան, ապագայում բոլորը միացան ԽՍՀՄ-ին ըստ նրանց կարգախոսի՝ բոլոր ազգությունները հավասար էին ու եղբայրներ: Այսպիսով՝ Ռասուլզադեի և Աղաօղլիի ազգայնամոլ գաղափարների իրականացումն օրակարգից հանվեց ու ժամանակավոր հետաձգվեց մինչև այն ժամանակը, երբ 1992 թ. անկախացած Ադրբեջանի պետությունը, հատկապես Իլհամ Ալիևի իշխանության օրոք, այս գաղափարն ամբողջապես և եռանդագին վերականգնեց ու սկսեց մեծ թափով իրագործել՝ չինայելով ոչ գոմարներ, ոչ էլ միջոցներ:



1.9. Խորհրդային Հայաստանը 1990 թ.: Կապույտով նշված տարածքները 1920–1936 թթ. Հայաստանից ու Արցախից գրավել է հարևան Խորհրդային Ադրբեջանը<sup>21</sup>:

# Գլուխ 1–ի ծանոթագրություններ

- <sup>1</sup> Ստրաբոն, *Աշխարհագրություն*, Գիրք 10–12. Cambridge & London: Harvard University Press, Loeb Classical Library series, 1928. Գիրք 11.13.1 և 2.
- <sup>2</sup> Նույնը, Գիրք 11.4.1
- <sup>3</sup> Նույնը, Գիրք 11.14.1
- <sup>4</sup> Նույնը, Գիրք 13.3.3
- <sup>5</sup> Հայերեն հնագույն աշխարհագրական գիրքը 7–րդ դ. *Աշխարհացոյց* է: Արդի հայերեն թարգմանությունը՝ Գ. Պետրոսյանի, Երևան, Սովետական գրող, 1979 թ.:
- <sup>6</sup> Hewsen, Robert. Armenia. *A Historical Atlas*. Chicago: University of Chicago, 2001. հատված էջ 85–ից:
- <sup>7</sup> Ուլուբաբյան, Բագրատ, *Խաչենի իշխանությունը X–XVI դարերում*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1975, էջ 52–54:
- <sup>8</sup> Պավել Չոբանյանը այս մասին գրում է իր խմբագրած Մակար Արքեպիսկոպոս Բարխուդարյանի *Պատմություն Ադուանքից* աշխատության Նախաբանի էջ 14–ում, Երևան, 1999 թ.: Նույն հատորի էջ 280–ում հեղինակը նշում է, որ Գանձասարի Սիմեոն Կաթողիկոսը 1691 թ. մի արձանագրության մեջ իրեն կոչել է Աղվանքի Կաթողիկոս: Տե՛ս նաև Բագրատ Ուլուբաբյան, «Ալբանիա, Աղվանք և Առան տեղանունները», *Պատմաբանասիրական հանդես*, Երևան 1971/3, էջ 115–116:
- <sup>9</sup> Մանրամասի համար տե՛ս George Bournoutian, *The Khanate of Erevan under Qajar Rule 1795–1828*, Costa Mesa: Mazda, 1992, էջ 1–29:
- <sup>10</sup> Մանրամասի համար տե՛ս Ռուբեն Գալսյան, *Հորինված պատմություն*, Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ հրատարակչություն, 2010 թ., էջ 155–172, ինչպես նաև նույն հեղինակի *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2017 թ., էջ 19–54:
- <sup>11</sup> The British Foreign Office publications *Caucasus*, edited by George William Prothero, prepared in 1918. London; HM Stationery Office, 1920. էջ 35.
- <sup>12</sup> Նույնը, էջ 11:
- <sup>13</sup> Swietochowski, Tadeusz. *Russian Azerbaijan, 1905–1920*, NY–London, Cambridge UP, 1985/2004, էջ 70.
- <sup>14</sup> Gökalp, M. Z. *The Principles of Pan–Turkism*, Leiden: Brill, 1968, էջ 17:
- <sup>15</sup> *Իթթիհադ վե թերեկկի* կուսակցության անդամները կոչվում էին երիտթուրքեր:
- <sup>16</sup> Balayev, Aydin. “Mamed Emin Rasulzadeh and the Establishment of the Azerbaijani State Nation in the Early Twentieth Century”, *Caucasus Survey*, vol 3, no 2, 2015, էջ 137:
- <sup>17</sup> Նույնը, էջ 139:
- <sup>18</sup> Նույնը, էջ 138:
- <sup>19</sup> Նույնը, էջեր 139 և 147:
- <sup>20</sup> Ռուբեն Գալսյան, *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2017 թ., էջեր 20, 54, 56:
- <sup>21</sup> Մանրամասի համար տե՛ս Կարեն Խաչատրյան, Համո Սուքիասյան և Գեղամ Բաղալյան, *Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ–ի տարածքային կորուստները 1920–1930–ական թվականներին*, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015:



## 2. «ԱԴՐԲԵՋԱՆ» ԹՅՈՒՐԱՆՎԱՆՈՒՄԸ

Ինչպես տեսանք նախորդ գլխում, վերջին երկու հազարամյակների ընթացքում՝ մինչև 1813–1828 թթ., Արաքսից և Կուրից հյուսիս ընկած տարածքը կոչվում էր Կովկասյան Ալբանիա կամ Աղվանք, իսկ արաբերենով՝ Առան կամ Առտան, որը հետագայում մահմեդական խանությունների իշխանության օրոք ճանաչվում էր Շիրվան ընդհանուր անվամբ կամ առանձին խանությունների ու մելիքությունների անուններով:

Կովկասի հարավային տարածքը, Ռուսական կայսրության մեջ մտնելով, ստացավ համապարփակ Անդրկովկաս անունը, որի նահանգների ներքին սահմանները հաճախակի փոփոխվում էին: Դրանք արվում էին ռուսական իշխանությունների ցանկությամբ և ըստ նրանց հայեցողության ու վարչական պահանջների: 1850–ական թթ. հիմնականում հայերով բնակեցված Սյունիքն ու Արցախը կցվեցին մահմեդական բնակչություն ունեցող Ելիզավետպոլ և Բաքու նահանգներին: Ազգագրական և պատմական տեսակետից այս բաժանումները բոլորովին տրամաբանական չէին: Սրան հետևեցին մի քանի վերաբաժանումներ: Մինչև այն ժամանակը, երբ բնակչությունն ապրում էր ռուսական կայսեր խիստ վերահսկողության ներքո, տեղի բնակչությունն իրենց ճակատագրի վերաբերյալ որևէ ասելիք չուներ: Նրանք պետք է լինեին հնազանդ հպատակներ՝ կատարելով ցարի նշանակած իշխանավորների հրամանները, որոնք իրենց հերթին թեղադրվում էին Պետերբուրգից:

1918 թ. պատերազմի ավարտին տարածաշրջանում բոլորն անակնկալի եկան՝ տեսնելով, որ նորաստեղծ անկախ հանրապետություններից մեկը յուրացրել է իր հարևան երկրի նահանգի՝ Իրանի Ադրբեջան կամ Ատրպատական նահանգի անունը: Իրանի առաջադեմ մտավորականներից ու իշխանավորներից շատերը, այդ թվում՝ Շեյխ Մոհամմեդ Խիաբանին, Իսմայիլ Ամիրխիզին, Ահմադ Քասրավին և ուրիշներ, այդ անվանման դեմ բողոքեցին և նույնիսկ առաջարկեցին Իրանի պատմական «Ատրպատական–Ադրբեջան» նահանգի անունը փոխել «Ազադիստանի» («Ազատ» նահանգի), որպեսզի ապագայում նման անվանումների պատաճառով դրա շուրջ քաղաքական և այլ խնդիրներ չծագեն<sup>1</sup>:

Այս անվանման դեմ նաև բողոքեց Պարսկաստանը, բայց արևմտյան պետությունները, զբաղված լինելով Միջին Արևելքի նավթային հարստությունն իրենց մեջ բաժանելու խնդիրներով, նման հարցերով զբաղվելու հետաքրքրություն չունեին:

Ռուս արևելագետ, ակադեմիկոս, Կովկասի և Արևելյան Եվրոպայի պատմության և իսլամական մշակույթի մասնագետ Վասիլի Վ. Բարթոլդը (1869–1930 թթ.) այս միտումնավոր սխալ անվանման վերաբերյալ արել է իր դիտողությունը: 1924–ի նոյեմբերի և դեկտեմբերի ընթացքում Բաքվի պետական համալսարանի արևելագիտության ինստիտուտում նա, իր դասախոսություններից մեկի ժամանակ պատասխանելով ուսանողների հարցին, ասել է.

...այն տարածքը, որն այժմ անվանվում է Ադրբեջանի Հանրապետություն, և որն անցյալում կոչվել է Առոան [Ադվանք], Ադրբեջան անվանումը ստացավ՝ հիմնվելով այն մտայնության վրա, որ հաստատվելուց հետո այս Ադրբեջանն ու պարսկական Ադրբեջան նահանգը [Ատրպատականը] կմիանան ու կդառնան մեկ երկիր<sup>2</sup>:

*Գալով նորաստեղծ մի երկիր մեկ այլ՝ հին երկրի անունը յուրացնելուն՝ Լոնդոնի համալսարանի սոցիոլոգ, նացիոնալիզմի հանրահայտ մասնագետ, պրոֆեսոր Անթոնի Սմիթն իր «Ազգերի էթնիկ ակունքներն» աշխատության մեջ նշում է.*

Որոշ ազգեր ունեն լավ պահպանված անցյալ, մինչդեռ ուրիշները դրա փնտրտուքի մեջ են, քանի որ նրանց անցյալը կամ գոյություն չունի, կամ էլ մնում է քողարկված այլ կարևոր իրադարձությունների շղարշի ներքո<sup>3</sup>:

*Վաշինգտոնի Ջորջթաուն համալսարանի պրոֆեսոր, Օքսֆորդի իսլամագիտական հետազոտությունների կենտրոնի անդամ, ԱՊՀ երկրների մասնագետ և բազմաթիվ գրքերի ու հոդվածների հեղինակ, Թավրիզում ծնված քաղաքագետ և պատմաբան Շիրին Հանթերը, իր «Անդրկովկասն անցումային շրջանում. ազգակերտում և կոնֆլիկտ» աշխատության մեջ հարցը դիտարկելով ավելի որոշակի հարթության մեջ, նկատում է.*

Խորհրդային շրջանում Ադրբեջանի ծագման վերաբերյալ սկսեց զարգանալ մի առասպել, որը վերջերս կատարելագործել են ադրբեջանցի ազգայնամոլները: Ադրբեջանի ծագման այս տեսակետը չունի պատմական որևէ հիմք և պարունակում է հակասական դրույթներ<sup>4</sup>:

*Ամեն դեպքում, Արաքսի հյուսիսում հիմնադրված նոր երկիրը, որի ժողովուրդն իրեն «թուրք» կամ «թաթար» կամ էլ, ավելի ընդհանրացված, «մահմեդական» էր կոչում մինչև 1936 թվականը, իրեն հայտարարեց որպես Ադրբեջանի Հանրապետություն: Այդ թվականի համագումարի ընթացքում Ստալինը հայտարարեց, որ Ադրբեջանի Հանրապետության ժողովուրդն այլևս պետք է իրեն «ազերի-ադրբեջանցի» կոչի:*

*Այս նոր կարգադրությունը հաշվի չէր առնում հանրապետությունում բնակվող այլ ազգերին, որոնցից էին թուրքերը, թաթարները, քրդերը, եզիդները, Իրանի ադրբեջանցիները, հայերը, հրեաները, վրացիները, ռուսները, ասորիները, ինչպես նաև տեղական ցեղերը, որոնցից լեզգիները, թալիշները, ուղիները, ավարները, դադստանցիները, թաթերը և այլն 1936 թվականից պարտադիր միաձուլվում էին ու կոչվելու էին ադրբեջանցի և ազերի<sup>5</sup>:*

*Այս առումով Ադրբեջանի ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Ֆարիդ Ալեքպարլին Բաքվի «Ջերկալո» օրաթերթի 2010 թ. օգոստոսի 8-ի համարում գրել է.*

Մինչև 1930-ական թթ. ստալինյան ռեֆորմները «ադրբեջանցի» անվանումը պարզապես գոյություն չի ունեցել, և նման անվանում շրջանին կցվել է Ստալինի կամքով, մինչդեռ 1918-1920 թթ. Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության և ապա Խորհրդային Ադրբեջանի ժողովրդի պաշտոնական անվանումն ընդհուպ մինչև 1936 թ. եղել է «թուրք»... Կորցնելով ազգային ինքնությունը՝ մենք ընկղմվեցինք վեճերի մեջ այն մասին, թե ով ենք մենք՝ շումերների, աղվանների, մեդացիների [մարերի], թե մեկ այլ ժողովրդի հետևորդները: Այդ հոգնեցուցիչ ու հիմար վե-

Ճերը վերջ չունեն և չեն էլ ունենա, քանի դեռ մենք չենք կանգնել իրական հարթակի վրա և չենք անդրադարձել, որ «ադրբեջանցի» արհեստական և անդեմ անվան տակ կոծկված են իրական էթնոսներ՝ հիմնականում թուրքեր, ինչպես նաև քրդեր, թալիշներ, թաթեր, լեզգիներ և այլն<sup>6</sup>:

Երբ 1936-ին Ադրբեջանի Հանրապետության նորածին պետությունը և նրա ժողովուրդը պաշտոնապես վերահաստատվեց, Ստալինը հայտարարեց, որ ԽՍՀՄ բոլոր երկրները պետք է ունենան իրենց բնիկ ժողովուրդը, ներառյալ իրենց յուրահատուկ մշակույթը և պատմությունը: Սակայն նորաստեղծ մի երկրում, բնականաբար, մշակույթն ու պատմությունը բացակա են, և այդ պակասը լրացնելու լավագույն միջոցը բնիկներին պատկանողը յուրացնելն ու դրանք խմբագրելով, նենգափոխելով և նոր անունով որպես իրենցը ներկայացնելն է, այս դեպքում՝ որպես ադրբեջանական<sup>7</sup>: Նման զարտուղի ճանապարհով նպատակին հասնելու համար պետք էր գտնել նորանոր «փաստեր», որ Արաքսից հյուսիս ևս Ադրբեջան անունով երկիրը գոյություն է ունեցել: Սա դյուրին էր ասելը, բայց փաստելը՝ անհնար, քանի որ բոլոր պատմական ու աշխարհագրական նյութերը դրան հակասում էին:

Այս աշխատության սկզբում մեջբերում ենք եվրոպական ու իսլամական տարբեր հանրագիտարաններից: Առաջին մեջբերումը 1890 թ. մինչև 1907 թ. Պետերբուրգում հրատարակված Բրոկհաուզ և Էֆրոնի հանրահայտ «Ռուսական հանրագիտարան»-ից է: Պատկեր 2.1-ը սրա Ա հատորի էջ 212-ից է քաղված, որին կից ներկայացված է նյութի հայերեն թարգմանությունը:

**Азербейджанъ**, или Азербейджанъ —  
огненная земля; на пельвийскомъ Атру-  
пѣткѣнъ, на армянскомъ Азербѣдекѣнъ), са-  
мая сѣверозападная провинція и самая бога-  
тая торговая и промышленная область Персiи.  
границить на югѣ персидскимъ Курдистаномъ  
(пров. Ардиланъ) и Иракъ-Аджми (Мидiя), на  
западѣ турецкимъ Курдистаномъ и турецкою  
Арменiею, на сѣверѣ русскою Арменiею (юж-  
ное Закавказье), отъ которой она отдѣлена Ара-  
сомъ, на востокѣ русскою областью Ташилъ и  
персидскою пров. Гиланъ у Каспiйскаго моря

2.1. Հատված Ռուսական հանրագիտարան-ից, 1890 թ.:

### Տեքստի թարգմանությունը

Ազերբեյջան կամ Ադերբեյջան, հրո երկիր, փեիլներեն՝ Ատրուպատկան, հայերեն՝ Ադերբադեկան, Պարսկաստանի ամենախյուսիսարևմտյան նահանգը և ամենահարուստ առևտրական ու արդյունաբերական մարզը. հարավում սահմանակից է պարսկական Քրդստանին (Արդիլան նահանգ) և Իրաք-Աջմիին (Մարաստան), արևմուտքում՝ թուրքական Քրդստանին և թուրքական Հայաստանին, հյուսիսում՝ ռուսական Հայաստանին (Հարավային Անդրկովկաս), որից բաժանված է Արաքսով, արևելքում՝ ռուսական Տաշիլ մարզին և պարսկական Գիլան նահանգին՝ Կասպից ծովի մոտ:

Այս տեքստում ընդհանրապես Ադրբեջան անունը Արաքսից հյուսիս տարածքին չի վերաբերում և ներկայացնում է Իրանի Ատրպատական-Ադրբեջան հյուսիսարևմտյան նահանգը:

Հաջորդ քաղվածքը հանրահայտ «Բրիտանական հանրագիտարան»-ի 1910 թ. հրատարակության 8-րդ հատորի էջ 80-ից է: Կից տրված է նույնի թարգմանությունը:

**AZERBAIJĀN** (also spelt ADERBIJAN; the *Azerbādegān* of medieval writers, the *Athropatakan* and *Atropatene* of the ancients), the north-western and most important province of Persia. It is separated from Russian territory on the N. by the river Aras (Araxes), while it has the Caspian Sea, Gilan and Khamseh (Zenjān) on the E., Kurdistan on the S., and Asiatic Turkey on the W. Its area is estimated at 32,000 sq. m.; its population at 1½ to 2 millions, comprising various races, as Persians proper, Turks, Kurds, Syrians, Armenians, &c. The country is superior in fertility to most provinces of Persia, and consists of a regular succession of undulating eminences, partially cultivated and opening into extensive plains. Near the centre of the province the mountains of Sahand rise in an accumulated mass to the height of 12,000 ft. above the sea. The highest mountain of the province is in its eastern part, Mount Savelan, with an elevation of 15,792 ft., and the Talish Mountains, which run from north to south, parallel to and at no great distance from the Caspian, have an altitude of 9000 ft. The principal rivers are the Aras and Kizil Uzain, both receiving numerous tributaries and flowing into the Caspian, and the Jaghatu, Tatava, Murdi, Aji and others, which

2.2. Հատված Բրիտանական հանրագիտարան-ից, 1910 թ.:

**Տեքստի թարգմանությունը**

ԱԶԵՐԲԱՅՋԱՆ (նաև *Ադերբեջան*; միջնադարյան *Ազերբադեգանը*, հնագույն *Աթրոպատականը* և *Ատրոպատենը*), Իրանի հյուսիսարևմտյան ամենակարևոր նահանգն է: Հյուսիսում Ռուսաստանից բաժանված է Արաքս գետով, արևելքում Կասպից ծովն է, Գիլանը և Խամսեն (Ջանջանը), հարավում՝ Քուրդիստանը, արևմուտքում՝ ասիական Թուրքիան: Տարածքը հաշվվում է 32 000 քառ. մղոն [82000 քառ. կմ], իսկ բնակչությունը՝ 1,5-ից 2 միլիոն, որոնք բաղկացած են տարբեր ցեղերից, ինչպիսին են բուն պարսիկները, թուրքերը, քրդերը, սիրիացիները [ասորիներ], հայերը և այլն:

Նահանգն ավելի բերրի է, քան Իրանի մյուս նահանգները՝ օժտված լինելով բլրաշատ մշակված բարձունքներով, որոնք հասնում են մինչև ընդարձակ տափաստաններ: Նահանգի կենտրոնում է Սահանդ լեռը, որի բարձրությունը 120 000 ոտնաչափ է [3750 մետր]: Արևելքում ամենաբարձր լեռն է Սավալանը, որն ունի 15792 ոտնաչափ բարձրություն [4942 մետր], ինչպես նաև Թալիշի լեռները, որոնք Կասպից ծովին զուգահեռ շարված են հյուսիսից հարավ: Սրանց միջին բարձրությունը 9000 ոտնաչափ է [2820 մետր]: Կարևոր գետերն են Արազը [Արաքս] և Կիզիլ Ուզայնը, որոնց մեջ են թափվում բազմաթիվ վտակներ և վերջում թափվում Կասպից ծովը.....

Այս հանրագիտարանում ևս Ադրբեջան անունը տրված է միայն Իրանի հյուսիսարևմտյան նահանգին, և Արաքսից հյուսիս նման երկրի մասին որևէ հիշատակում չկա:

Հաջորդ քաղվածքը Հոլանդիայի «Բրիլլ» գիտական հրատարակչության 1913-ի իսլամական հանրագիտարանի Ա հատորի էջ 134-ից է, որի ամբողջական տիտղոսն է «Իսլամական հանրագիտարան: Մահմեդականների աշխարհագրական, ազգագրական և կենսագրական բառարան՝ շարադրված ականավոր արևելագետների գրչով»:

**ĀDHARBAIDJĀN**, a province in the empire of the caliphs, bounded on the S. E. by al-Djibāl (the ancient Media), on the S. W. by the eastern part of the province of Djazīra (the ancient Assyria), on the W. by Armenia, on the N. by the province of Arrān (the countries of the Caucasus), and on the E. by both shore-lands of the Caspian Sea, Mūghān and Gīlān. Nowadays under Ādharbaidjān is understood the northwestern province of Persia which borders on Turkey and on the Russian Caucasus and which mainly comprises the former Abbāsīde province. In ancient times this district formed at first a part of the great Median province of the Achaemenian empire; it is only since

### Տեքստի թարգմանությունը

ԱԶԱՐԲԱՅՋԱՆ, Խալիֆների կայսրության նահանգներից, որի հարավարևելքում է Ջարալը (հնագույն Մեդիան), հարավարևմուտքում է հնագույն Ջազիրայի (հնագույն Ասորիք) արևելյան մասը, արևմուտքում՝ Հայաստանը, հյուսիսում՝ Կովկասյան երկրներից Առանը, արևելքում՝ Կասպից ծովի ափերը, Մուղանն ու Գիլանը: Ներկայում Ազարբայջան ասվում է Իրանի հյուսիսարևմտյան նահանգին, որի սահմաններն են Թուրքիան և ռուսական Կովկասը, որը նաև նախկին Աբբասյանների [Սեֆյանների] նահանգն էր: Հնագույն ժամանակներում սա Աքեմենյան կայսրության Մարաստան շրջանի մի մասն էր համարվում.....

2.3. Հատված Իսլամի հանրագիտարան-ից, 1913 թ.:

Ներքևի քաղվածքը 1942 թ. Թուրքիայում հրատարակված Իսլամական հանրագիտարանի թրքերեն թարգմանությունից է: Այդ օրերին Ադրբեջանի Հանրապետությունն արդեն մաս էր կազմում ԽՍՀՄ-ի հանրապետություններին: Բնագրին կից դրա համատեղ թարգմանությունն է, որը հաստատում է՝ Արաքսից հյուսիս Ադրբեջան անվանման գոյությունը նորություն է:

### AZERBAIJAN. ĀZARBĀYCĀN.

I. Bugünkü coğrafya ve etnografiya vaziyeti. Önce İran'ın şimal-i garbî vilâyetlerine ve nâdiren Arrân ile Şirvan'a ve 28 mayıs 1918'den itibaren, Kafkasya Azerbaycanı'na da resmen Azerbaycan denilmiş ise de, Azerbaycan umumî adı, etnografiya bakımından, „âzerî lehcesi ile konuşan türklerin ülkesi“ mânasını hâizdir. İran'a tâbi kısmının (cenubî A.) mesahası 104.000 km<sup>2</sup>. olup, nüfusu 2.000.000'dan bir az fazla tahmin edilmektedir (bk. Mas'ūd Kayhān, *Coğrafiyā-i mufaşşal-i Īrān*, Tahran, 1311=1932, III, 151). Kafkasya (şimâlî) Azerbaycanı'nın mesahası ise, Azerbaycan cumhuriyetinin 1919'da verdiği resmî istatistiğe göre, 94.137 km<sup>2</sup>. olup, nüfusu 4.617.671 idi (bk.

← 2.4. Քաղվածք թյուրքական Իսլամական հանրագիտարանի էջ 91-ից, 1942 թ.:

### Տեքստի թարգմանությունը

ԱԶԱՐԲԱՅՋԱՆ 1. Ներկայիս աշխարհագրական և ժողովրդագրական վիճակը: Անցյալում Իրանի հյուսիսարևմտյան նահանգը, երբեմն ճանաչված որպես Առան կամ Շիրվան, իսկ 1918 թ. մայիսի 28-ից Կովկասյան Ադրբեջանը, որը պաշտոնապես կոչվում է Ադրբեջան ընդհանուր անվամբ, ազգագրական տեսակետից որպես ազերի թուրքերեն խոսող երկիր: Իրանին վերաբերող (հարավային Ադրբեջանի) տարածքը 104 000 քառ. կմ է.....

Հաջորդ քաղվածքը հոլանդական «Բրիլ» հրատարակչության 1960 թ. «Իսլամական հանրագիտարանի» նոր հրատարակությունից է: Այստեղ նույն անվան տակ ներկայացված են Ադրբեջանը (i - 2.5) և Ադրբեջանի Հանրապետությունը (ii - 2.6):

**ADHARBAYDJĀN (AZARBĀYDJĀN)** (i) province of Persia; (ii) Soviet Socialist Republic.

(i) The great province of Persia, called in Middle Persian *Āturpātākān*, older new-Persian *Ādharbādhagān*, *Ādharbāyagān*, at present *Āzarbāydjān*, Greek *Ἄτροπατήνη*, Byzantine Greek *Ἄδραβιγάνων*, Armenian *Atrapatakan*, Syriac *Adhorbāyghān*. The province was called after the general *Atropates* ("protected by fire"), who at the time of Alexander's invasion proclaimed his independence (328 B.C.) and thus preserved his kingdom (*Media Minor*, Strabo, xi, 13, 1) in the north-western corner of later Persia (cf. Ibn al-Muḳaffa', in *Yāqūt*, i, 172, and al-Maḳḏisī, 375: *Ādharbādh* b. *Bīwarasf*). The dynasty of *Atropates* flourished under the *Arshakids* and married into the royal house.

2.5. Բրիլի 1960 թ. Իսլամական հանրագիտարանի էջ 188-ից, հասված Ադրբեջանի հոդվածից:

AN — ADHARGÜN

191

(ii) *Azerbaydĭān*, Soviet Socialist Republic (Az. SSR) in the eastern part of Transcaucasia, between the south-eastern branches of the Caucasus, the Caspian coast and the Araxes (which separates it from the Persian province of the same name). In the north-east it borders on the *Dāghestān* Autonomous republic (part of the Russian Socialist Federal Soviet Republic, RSFSR). In the north-west it borders on the Georgian S.S. Republic (along the *Alazan*) and in the west on the Armenian S.S. Republic (along the line running east of Lake *Sewan* = *Gökče*). In the south-west the autonomous republic (ASSR) of *Nakhčewan*, locked within the Armenian territories, is part of the *Azerbaijan* republic, whereas the highlands of *Ķara-bakh* (with a considerable Armenian population) form an autonomous territory (*oblast*) within *Azerbaydĭān*.

Historically the territory of the republic corresponds to the *Albania* of the classical authors (Strabo, xi, 4; Ptolemy, v, 11), or in Armenian *Alvan-k'*, and in Arabic *Arrān* [q.v.]. The part of the republic lying north of the *Kur* (*Kura*) formed the kingdom of *Sharwān* (later *Shirwān* [q.v.]).

After the collapse of the Imperial Russian army *Bākū* was protectively occupied by the Allies (General *Dunsterville*, 17 August-14 Sept. 1918) on behalf of Russia. The Turkish troops under *Nūrī Pašha* occupied *Bākū* on 15 Sept. 1918 and reorganized the former province under the name of *Azerbaydĭān*—as it was explained, in view of the similarity of its Turkish-speaking population with the Turkish-speaking population of the Persian province of *Ādharbāydjān*. When after the *Mudros* armistice the Allies reoccupied *Bākū* (17 Oct. 1918), General *Thomson* (28 Dec. 1918) recognized the existing *Azerbaydĭān* government of the *Musawāt* party as the only local authority.

2.6. Բրիլի 1960 թ. Իսլամական հանրագիտարանի էջ 191-ից հասված Ադրբեջանի ՍՍՀ հոդվածից:

### Տեքստի թարգմանությունը

ԱԶԱՐԲԱՅՋԱՆ, (i) Պարսկաստանի նահանգը, (ii) Խորհրդային Հանրապետությունը:

(i) Պարսկաստանի մեծ նահանգը, միջին պարսկերենով՝ Ատուրպատական, հին պարսկերենով՝ Ադհարբադգան, Ադհարբայագան, ներկայում՝ Ադրբեջան, հունարեն՝ Ատրոպատինի, ասորերեն՝ Ադիորբայգան, քյուզանդական հունարեն՝ Ադրաբիգանոն, հայերեն՝ Ատրպատական: Նահանգն անվանված է Ատրոպատես զորավարի պատվին.....

### Տեքստի թարգմանությունը

(ii) Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն. (ԱզՍՍՀ) Անդրկովկասի արևելյան մասում՝ շրջափակված Կովկասյան լեռների հարավարևելյան ծայրամասի, Կասպից ծովի սահմանի միջև (որը նրան բաժանում է պարսկական Ադրբեջան նահանգից): Նրա հյուսիսարևելյան սահմանն է Դաղստանի Ինքնավար Հանրապետությունը (Ռուսական ՍՖՍՌ մի մասը) և հյուսիս-արևմուտքում՝ (Ալազանի երկայնքով) սահմանակից է Վրաստանի ՍՍՀ-ին, իսկ արևմուտքում՝ Հայաստանի ՍՍՀ-ին (որի սահմանն անցնում է Սևանա լճի երկայնքով): Հարավարևմտյան սահմանն է Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը: Հայաստանի տարածքում տեղակայված Նախիջևանը Ադրբեջանի Հանրապետության մասն է, մինչդեռ Լեռնային Ղարաբաղը (իր հայ մեծամասնությամբ) Ադրբեջանի տարածքում ինքնավար (շրջան) է:

Պատմականորեն հանրապետության տարածքը համընկնում է դասական աշխարհի և Ստրաբոնի Ալբանիային (հայերեն՝ Ադվանք, արաբերեն՝ Առնան): Հանրապետության Կուրից հյուսիս ընկած մասը կոչվում էր Շարվանի թագավորություն (ապագայում՝ Շիրվան):

Այս հանրագիտարանի՝ 47 տարի հետո կրկին հրատարակված հատորի էջ 188–ը նշում է՝ (i) Աղբբեջանը Իրանի հնագույն նահանգն է եղել և .... (ii) Աղբբեջանի Հանրապետությունը, ըստ էջ 191–ի երրորդ պարբերության, ստեղծվել է 1918–ին: Մեջբերում՝ Մուղրուսի զինադադարից և Անտանտի ուժերի՝ Բաքուն կրկին գրավելուց հետո (17 հոկտ., 1918 թ.) գեներալ Թոմսոնը (28 դեկտ., 1918 թ.) Աղբբեջանի Մուսավաթ կուսակցությանը ձանաչեց որպես միակ տեղական իշխանություն<sup>8</sup>:

Թուրքական Իսլամական հանրագիտարանի 1991 թ. հրատարակումը արդիականացրել, վերանայել և ամբողջովին փոխել է տարածաշրջանի պատմությանը վերաբերող իր տեսակետը՝ այս անգամ ներկայացնելով Աղբբեջանի Հանրապետության կեղծված և փոխված տարբերակը: Չորրորդ հատորի էջ 317–ում նշվում է, որ 1828 թ. Աղբբեջանը բաժանվեց երկու մասի. Հյուսիսային Աղբբեջանը գրավեց Ռուսաստանը, իսկ Հարավային Աղբբեջանը գրավեց Իրանը՝ ամբողջովին հակասելով իսլամական և արևմտյան մյուս հանրագիտարաններին<sup>9</sup>՝ այսպիսով առաջադրելով, որ 2000 տարվա պատմություն ունեցող Իրանական նահանգը և 1918 թ. ստեղծված Աղբբեջանի Հանրապետություն կոչված երկիրը միացյալ և մեկ երկիր են՝ ներկայում բաժանված երկու մասի:

Այսպիսով՝ Աղբբեջանի Հանրապետությունը ծրագրված ընդլայնում է իր տարածքը և իր 100 տարվա պատմությունը դարձնում հնադարյան: Իսկ բարեկամ Թուրքիայի պատմաբանների մեծ մասը իր զինակցի այս կեղծիքը սատարում և ընդունում է որպես իրականություն: Սրանցից մեկը Անկարայի Միջին Արևելքի համալսարանի պրոֆեսոր Սուհա Բոլուքբաշին է: Նա իր «Աղբբեջան. քաղաքական պատմություն» հատորում ամենուրեք գրում է Հյուսիսային և Հարավային Աղբբեջանների մասին՝ այսպիսով ընթերցողին ներարկելով դրանց իրական լինելը (տե՛ս հատորիս Գլուխ 7–ը): Նա հաճախ գրում է Աղբբեջանի մասին, բայց երբ գալիս է սահմաններին, ապա գործածում է Խորհրդային Աղբբեջան անվանումը: Այս էլ այդ երկու տարբեր տարածքները միավորելու մեկ այլ միջոց է<sup>10</sup>:

Բոլուքբաշին հնագույն և միջնադարյան մշակույթի մասին գրելիս 100–ամյա Աղբբեջանի Հանրապետության կյանքը երկարացնում է հազարամյակով:

13–14–րդ դդ. շրջանում Իլխանների և Թեմուրի կայսրություններն իրենց սահմանները տարածեցին, օգնեցին տեղի բնակչությանը ընդունելու թրքական նկարագիրը: Իլխանյանների օրոք Աղբբեջանը դարձավ Ամուդարիայից մինչև Սիրիա տարածվող կայսրության կենտրոնը, որի խաները հաստատված էին Թավրիզում<sup>11</sup>:


Այսպիսով՝ հեղինակը ուղղակի հաստատում է Աղբբեջանի Հանրապետության՝ միջին դարերից եկած պետություն լինելը, մինչդեռ նույնիսկ բոլոր իսլամական և պարսկական միջնադարյան քարտեզներում Աղբբեջան անվանումը նշվում է միայն որպես Պարսկաստանի նահանգներից մեկը՝ տեղակայված Արաքսից հարավ:

Երկու երկրների կեղծ միասնական երկիր լինելու հորինվածքը հաստատելու նպատակով նույն հեղինակը գրում է.

1813–1828 թթ. Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Գյուլիստանի ու Թուրքմենչայի պայմանագրերով Աղբբեջանի տարածքի մեկ երրորդը Ռուսաստանի տարածքում է, մնացածը մինչև այսօր Իրանի տարածքում է<sup>12</sup>:

Այսպիսով՝ այս պատմաբանը պնդում է, որ մինչև 1813 թ. Ադրբեջանի Հանրապետության և Իրանի Ատրպատականի տարածքն իրականում «Հյուսիսային և Հարավային Ադրբեջան» երկիրն էր, և տեղում իշխում էր «Ադրբեջան» անունով մի պետություն, սակայն, որի գոյություն վերաբերյալ ոչ մի տեղ ոչ մի նշում կամ փաստ գոյություն չունի:

Իրանում հրատարակված «Իսլամական մեծ հանրագիտարանը» սկսեց լույս տեսնել 1995 թ.: Պատկեր 2.7-ի հատվածում Ադրբեջան անվան նախաբանը սրա Ա հատորից է, որը նշում է.



2.7. Հատված Իսլամի մեծ հանրագիտարան-ից, Թեհրան, 1995 թ.:

### Տեքստի թարգմանությունը

ԱԴԻԲԵՋԱՆ — Իրանի հյուսիսարևմտյան շրջանը, մոտ 109.074 քառ. կմ, որն Իրանի ընդհանուր տարածքի մոտ 6% է: Տեղակայված է 35° 45'–ից մինչև 39° 40' N լայնությունից և 44° 5'–ից մինչև 48° 50' E երկայնությունում: Սահմաններն են. հյուսիսում՝ ԽՍՀՄ-ը, արևմուտքում՝ Իրաքը և Թուրքիան, արևելքում՝ Գիլանը և ԽՍՀՄ-ը, հարավում՝ Ջանջանն ու Իրանի Քուրդստանը: Ադրբեջանը աշխարհագրական տարածք է՝ բաժանված Արևելյան և Արևմտյան Ադրբեջան կոչվող մասերի<sup>13</sup>:


Արդեն 25 տարի է, ինչ Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն ու կեղծ գիտնականները աշխատում են գտնել գոնե մեկ քարտեզ, որտեղ նախքան 1918 թ. Արաքսի հյուսիսում նշված լինի «Ադրբեջան» անունը: Փնտրելով հունա-հռոմեական, իսլամական, միջնադարյան Եվրոպայի բոլոր արխիվները՝ նրանք արդյունքի չեն հասել, քանի որ այս քարտեզներում և դրանց ցուցադրած տարածաշրջանում բացի Իրան-Պարսկաստանից, Ադվանքից, Վրաստանից և Հայաստանից ուրիշ երկրի անուն գոյություն չունի:

Տարբեր երկրների գրադարանները լի են վերոնշյալը փաստող քարտեզներով, որոնցից մի քանիսը վերատպված են գրքիս առաջին գլխի էջերում, ինչպես նաև տարբեր քարտեզագետների հրատարակած բազմաթիվ այլ գրքերում ու քարտեզներում<sup>14</sup>:

Կովկասյանի պատմության կենտրոնի և Ազեր-գոր տեղեկատվական ընկերության միջոցով 2016 թ. Ադրբեջանի իշխանությունները նախագահի վարչական տնօրեն Ֆուադ Ախունդովի հեղինակությամբ «Հայաստանի և Ադրբեջանի արգելված պատմությունը» կոչված մի քարտեզական տեսահոլովակ է հրապարակել, որտեղ մեծ շուքով ներկայացվել է մի բրիտանական քարտեզ, որտեղ «Ադրբեջան» անունը նշված է Արաքսից հյուսիս եղած տարածքում: Խնդրո առարկա քարտեզը «Քարտեզների հավաքածու» կոչված մի հատորից է՝ հրատարակված բրիտանական SDUK կազմակերպության կողմից 1844 թ., որն անվանված է «Ռուսաստանը և Եվրոպան»: Այս քարտեզում ցուցադրված է Վրաստանը և Հարավային Կովկասը


19-րդ դարի կտրվածքով, որտեղ առկա է նաև Հայաստանը՝ ընդգծված կապույտ (տե՛ս պատկեր 2.8), Արարատները, Արաքս գետը և Իրանի Ադրբեջան նահանգը: Հայաստանի և Վրաստանի անունները նշված են մեծ տառերով՝ որպես երկրներ, իսկ Ադրբեջանը որպես շրջան՝ փոքր տառերով: Սա միակ քարտեզն է, որում այս անունը սխալ տեղում է ցուցադրված, որը և մեծ շուքով ներկայացվում է հանրույթյանը: Մինչդեռ տասնյակ հազարավոր ուրիշ քարտեզներ սրա հակառակն են ցույց տալիս<sup>15</sup>:

Վրիպակի բուն պատճառն այն է, որ ամբողջ Կովկասի հարավը մինչև 1813 թ. Իրանի տարածքում էր պարսկական Ադրբեջան նահանգի հետ միատեղ, քարտեզագիրը ուշադիր չի եղել Պարսկաստանի Ադրբեջան նահանգի սահմանները ճշգրիտ նշելու համար, քանի որ դրանք ներառվում էին Պարսկաստանի Ադրբեջանի ընդհանուր տարածքում:



2.8. Հարավային Կովկասը 18–19-րդ դդ., SDUK Atlas, 1844, էջ 72:

Սակայն նույն առևանի էջ 90-ի քարտեզում, որը արտատպված է 2.9 պատկերում, այս սխալը շտկվել է: Քարտեզը տարածքը ցույց է տալիս միջին դարերի դրվածքով, որտեղ Հայաստանը տարածված է Արաքսի երկու ափերին մինչև Ուրմիո լիճ: Ատրպատականը նշված է իր տեղում՝ Արաքսից հարավ:




2.9. Հարավային Կովկասը միջին դարերում, SDUK Atlas, 1844, էջ 90:

Այս տեսահոլովակում ներկայացված է ուրիշ քարտեզ և՛ վերցված 1835 թ. Լոնդոնում Բրադֆորդի հրատարակած «Աշխարհագրական, պատմական, տնտեսական ծավալուն ատլաս»-ից: Հոլովակը պնդում է, որ ըստ էջ 120-ի «Պարսկաստանը, Արաբիան, Թաթարստանը և Աֆղանստանը» կոչված քարտեզում Ադրբեջան անունը գրված է Հայաստանի տարածքի վրա: Բայց քարտեզի մանրակրկիտ ուսումնասիրությունը փաստում է հետևյալը (տես պատկեր 2.10).

1. Քարտեզը գծված է 1813–1828 թթ., երբ Հարավային Կովկասի արևելյան մասը գրավել էր Ռուսաստանը, իսկ արևմտյան մասը, ներառյալ Երևանը, դեռևս Իրանի գրաված տարածքում էր: Այս ժամանակվա սահմանը նշված է մանր կետերի շարքով:
2. Քարտեզի գծված ժամանակ սահմանը նշված էր կետերով, բայց ատլասը կազմվել է 1835-ին, երբ սահմանը 1835-ին արդեն փոխվել ու դարձել էր կանաչով նշված: Ադրբեջան անունը գրված է նախքան 1828 թ., երբ այդ շրջանը Իրանի Ադրբեջան նահանգին կից էր, սակայն կանաչ սահմանը վերաբերում է 1835 թ., երբ Արաքսից հյուսիս ընկած տարածքն արդեն գրավել էր Ռուսաստանը: Այսպիսով՝ գրված անունը 1828-ից առաջվա է, իսկ կանաչ սահմանը՝ 1835 թ.:

3. Քարտեզում Ադրբեջան անվան առաջին տառը՝ Ա տառը, 1835 թվականի և ներկա Պարսկաստանի սահմանից դուրս է՝ ըստ 1813 թ. անմիջապես հետո եղած սահմաններում, իսկ անվան մնացորդը դրված է պարսկական Ադրբեջան նահանգի տարածքում: Քարտեզում կետերով նշված և հետագայում կանաչով գծված երկու տարրեր սահմանների առկայությունը հավանաբար պատճառ է դարձել այս սխալի ու միտումնավոր թյուրիմացություն:
4. Նմանապես, նույն քարտեզում Հայաստան անվանումը նշված է Վանի հարավարևմտքից մինչև Արարատ և Խոյ քաղաքները, այսինքն՝ դրանք պետք է լինեն Հայաստանի մեջ, որոնք, սակայն, տեղակայված են 1835 թ. և ներկա Պարսկաստանի Ադրբեջան/Ատրպատական նահանգի սահմաններից ներս:



2.10. Պարսկաստանի սահմանն ըստ Բրադֆորդի ատլասի, 1835 թ., էջ 120:

Նույն ատլասի մեջ առկա է նաև «Աշխարհն ըստ մեր նախնիների» վերտառությամբ մի քարտեզ: Էջ 176-ի այս քարտեզում մի քաղվածք է ներկայացված (պատկեր 2.11): Այստեղ էլ տարածաշրջանում նշված են միայն Ադվանքը, Հայաստանը, Ասորեստանը, Միջագետքը (Բաբելոն), Սիրիան և Մարաստանը: Վերջինս ապագայում դարձավ Պարսկաստանի Ասորպատական նահանգը: Այստեղ Ադրբեջան անունով երկիր չկա:



2.11. Միջին Արևելքի շրջանը ըստ Բրադֆորդի ատլասի, 1835 թ., էջ 176:

\* \* \*

Վերադառնալով օսմանյան աղբյուրներին՝ պատկեր 2.12-ում վերատպված է ամենամեծ ճանաչում ունեցող օսմանցի աշխարհագրագետ Քյաթիբ Չելեբիի պատրաստած «Ադրբեջանի շրջանը» կոչված քարտեզը՝ գծված 1650-ական թթ., որը ներառված է նրա «Ջիհան նյումա (Աշխարհացույց)» կոչված հանրահայտ և հնագույն օսմանյան աշխարհագրության գրքերից մեկում: Քարտեզը վերցված է նույն գրքի առաջին՝ 1732 թ. տպագրությունից, հրատարակված Կոստանդնուպոլսում, իսլամացած հունգարացի Մովթաֆարրիկայի կողմից, ով հիմնադրեց առաջին թուրքալեզու տպագրատունը:



Վերջերս ատրպատականցի պատմաբան Մասնուդ Էրֆանյանը Թավրիզում հրատարակել է մի լուրջ հետազոտություն, որտեղ ներկայացրել է տարածաշրջանում քսաներորդ դարի սկզբին եղած քաղաքական զարգացումները: Նա խորանում է Մուսավաթ կուսակցության հիմնադիրների կյանքերի և օսմանյան ազգայնամուլների հետ նրանց քաղաքական սերտ կապերին ու համագործակցության հարցերի մեջ: Ըստ նրա՝ օսմանյան պանթուրքիստները չհաջողեցին պարսկական Աղբբեջանին ներգրավել Բալկաններից մինչև Կենտրոնական Ասիա տարածվելիք թրքախոս երկրների գոտին ստեղծելու ծրագրի մեջ, որովհետև Օսմանյան կայսրությունը չկարողացավ ներգրավել Արաքսից հարավ Իրանի Աղբբեջան նահանգը, քանի որ Իրանն այդ ծրագրին համամիտ չէր:

Նույն նպատակին հասնելու համար 1908–1909 թթ. որպես տարբերակ նրանք ընտրեցին զարտուղի ճանապարհ՝ սկսել հիմնել ու զարգացնել սերտ կապեր Արաքսից հյուսիսում հաստատված Շիրվանի, Շաքիի, Դաղստանի ու Կովկասի հարավային շրջանների ազգայնամուլների հետ (այդ ընթացքում Աղբբեջան անունով երկիր դեռևս գոյություն չունեի), նրանց հեռացնելու իրանական քաղաքական և մշակութային ազդեցությունից և շրջանում զարգացնելու հակաիրանական մտածելակերպը: Երբ 1918 թ. այս տարածաշրջանն անկախանում էր, օսմանյան դիվանագետները Ռասուլզադեի և մյուսների աջակցությամբ համոզեցին իրենց երկրի անունը որոշել և դնել հարևան պարսկական նահանգից ընդօրինակված անունը՝ Աղբբեջանը<sup>16</sup>: Հաջորդ քայլը կլինեի այն, որ նորաստեղծ երկիրը հայտարարեր Իրանի Աղբբեջան նահանգն իրենց երկրի մասնիկը լինելը և աշխատեր այդ նահանգն էլ յուրացնել և դարձնել ընդարձակ Աղբբեջանի հարավային հատվածը: Այս ծրագիրը փորձ արվեց իրականացնելու 1946–1947 թթ. Թավրիզում հիմնադրված «Համայնավար» կուսակցության կողմից, որը, սակայն, անհաջողության մատնվեց: Նույն միացման մասին լուրջ հայտարարություն արեց 1992 թ. Աղբբեջանի Հանրապետության ժամանակի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը<sup>17</sup>:

Այս թյուրանվանման մասին Էրֆանյանը գրում է.

Այսպիսով՝ օսմանյան թուրքերի դրոշի ներքո դեմոկրատ Աղբբեջանի Հանրապետությունը ստեղծվեց և հայտարարեց իր անկախությունը: Այս անվանումն ընտրված է Կովկասի մի հատվածի համար, որը ներառում էր Գյանջայի, Շիրվանի, Բաքվի և այլ խանություններ, սակայն սրանք մինչ այդ երբևէ Աղբբեջան չէին կոչվել<sup>18</sup>:

Էրֆանյանն իր գրքում մի քանի տեղ նշում է՝ ինչու Արաքսից հյուսիս շրջանը երբեք Աղբբեջան չի կոչվել: Նրա գրքից բերում ենք հետևյալ մեջբերումները ևա<sup>19</sup>.

Էջ 13 – Այս երկրի հիմնադրման օրից մինչև այսօր նրանք իրենց թիրախում են ունեցել Իրանի տարածքի ամբողջականության խնդիրը և տարածում են այս անհիմն ապատեղեկատվությունը՝ նշելով, որ Աղբբեջանը հնագույն երկիր է, որին իրանա–ոուսական պատերազմից հետո կողմերը կիսեցին և իրար մեջ բաժանեցին:

Էջ 44 – Կովկասի հարավային շրջանում բնակվող երեք բազմամարդ ժողովուրդներ կային, որոնցից էին հայերը, վրացիները և թրքալեզուները կամ թուրքերը. տարբերությունն այն է, որ հայերի ու վրացիների երկրները տասնյակ դարերի ընթացքում

միշտ կոչվել են Հայաստան և Վրաստան, սակայն Կովկասի հարավում Ադրբեջան անունով երկիր երբևէ գոյություն չի ունեցել:

էջ 78 – Վրաստանի անկախության հայտարարությունից հետո նախկին Կովկասյան հանրապետությունների մուսուլման անդամները Ռասուլզադեի գլխավորությամբ Ադրբեջանի Ժողովի 1918 թ. մայիս 28–ի նիստում հռչակեցին Անկախ Ադրբեջան երկրի հիմնադրումը: Այս հռչակագրում երկրի անունը նշված էր որպես *Հարավ և Հարավարևելյան Անդրկովկաս*<sup>20</sup>:

էջ 64 – Ըստ Ռասուլզադեի ղեկավարած 1918 թ. դեկտեմբերի 7–ի նորաստեղծ Ադրբեջանի Ազգային Ժողովի բացման ընթացքի հայտարարության՝ *Այն դրոշմ, որ Ադրբեջանի անունով ծածանվեց, այլևս չի կործանվի*:

\* \* \*

Գլխի վերջում կարիք կա հիշելու պարսիկ մեծագույն պատմաբան և ազատամիտ գիտնական Էնայաթոլահ Ռեզային (1920–2010 թթ.), ով իր կյանքը հիմնականում նվիրել է Կովկասի հարավային տարածքի պատմությունը, ազգագրությունը և լեզուն մանրակրկիտ հետազոտելուն: Քաղաքական հալածանքների պատճառով Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրանից հեռացավ և ապաստան գտավ Խորհրդային Միությունում՝ սովորելով Բաքվում ու Մոսկվայում, աշխատելով Չինաստանում և Ֆրանսիայում՝ ի վերջո իր բարի համբավի շնորհիվ ներման արժանացավ ու 1969 թ. հրավիրվեց վերադառնալու Իրան՝ աշխատելու Թեհրանի համալսարանում: Իսլամական հեղափոխությունից հետո նա իր կյանքը նվիրեց մի քանի հատոր պատմական գրքերի հրատարակմանը: Սրանցից «Ազերբայջան և Առոան» հատորը, որը մանրակրկիտ տեղեկություն է պարունակում Իրանի և Արաքսից հյուսիս ընկած Ադրբեջանի Հանրապետության մասին՝ բացահայտելով և փաստելով նրանց նորաստեղծ լինելու իրականությունը, նրանց ապատեղեկանքների հրապարակումները, ինչպես նաև իրենց թյուրանվանումը և պատմության խեղաթյուրումները<sup>21</sup>: Այս հատորը թարգմանվել է ռուսերեն, հայերեն և անգլերեն, իսկ պարսկերեն բնագիրը վերահրատարակվել է 10–ից ավելի անգամ: Հատկապես հետաքրքրական է գրքի վերջին գլուխը, որը վերնագրված է «Ինչպես Առոանը կոչվեց Ադրբեջան»<sup>22</sup>:

Արաքսի հյուսիսային ափին Ադրբեջան կոչված երկրի անվանման առթիվ հավելյալ տեղեկություններ կարելի է տեսնել սույն հատորի 4–րդ գլխում, որտեղ նաև բացատրություններ կան նրա անվան Կրակի երկիր լինելու հետ կապված, որն ադրբեջանական իշխանությունների ու պատմաբանների հորինած տեսություններից մեկն է:

## Գլուխ 2–ի ծանոթագրություններ

- <sup>1</sup> Գալջյան, Ռուբեն, *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2017 թ., էջ 26–28:
- <sup>2</sup> Բարթոլոյ, Վասիլի Վ., *Կովկասի և Արևելյան Եվրոպայի պատմական ուսումնասիրություններ*, Մոսկվա, 1963, հատոր 2, էջ 703:
- <sup>3</sup> Smith, Anthony D. *The Ethnic Origins of Nations*. Oxford: Blackwell, 1987, էջ 178:
- <sup>4</sup> Hunter, Shireen T. *The Transcaucasus in Transition. Nation–building and Conflict*. Washington DC: Centre for Strategic and International Studies, 1994, էջ 59:
- <sup>5</sup> Wixman, Ronald. *The Peoples of the USSR: An Ethnographic Handbook*. New York: Macmillan, 1984, էջ 17: Ուիքսմանի ուրիշ աշխատություններից են *Language Aspects of Ethnic Patterns and Processes in the North Caucasus*, 1980, “*Ethnic Nationalism in the Caucasus*, 1982:
- <sup>6</sup> Ալեքբերլի, Փարիդ. «Кто мы, от кого произошли и куда идем?», Зеркало. (Баку: 8 августа, 2009. Տես նաև Ռուբեն Գալջյան, Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան, կեղծիքներ ու փաստեր, Լոնդոն և Երևան, Կոմիտաս ինստիտուտ, 2010, էջ 161–162:
- <sup>7</sup> Shnirelman, Victor. *The Value of the Past; Myths, Identity and Politics in Transcaucasia*. Osaka: Museum of National Ethnography, 2001, էջ 93:
- <sup>8</sup> *New Encyclopaedia of Islam*. Leiden: Brill, 1960, հատոր 1, էջ 191:
- <sup>9</sup> *Islam Ansiklopedisi*, 19910, հատոր 4, էջ 317:
- <sup>10</sup> Bolukbasi, Suha. *Azerbaijan: A Political History*, London: IB Tauris, 2014, էջ 19:
- <sup>11</sup> Նույնը, էջ 20:
- <sup>12</sup> Նույնը, էջ 22:
- <sup>13</sup> 1937 թ. Իրանի նախկին Ադրբեջան նահանգը բաժանվեց երկու մասի՝ Արևելյան և Արևմտյան Ադրբեջանների, իսկ 1993 թվականից նույն տարածաշրջանը այս անգամ բաժանվեց երեք մասի՝ Արևելյան և Արևմտյան Ադրբեջանների, իսկ արևելյան ծայրամասը՝ Ադղաբիլի նահանգի: Տես Գալջյան Ռուբեն, *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2017, էջ 28:
- <sup>14</sup> Սրանց մի մասը առկա է հետևյալ աշխատություններում. Ռուբեն Գալջյան, *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ*, Երևան, ՓրինթինՖո, 2005 թ., նույն հեղինակի հետևյալ գրքերում. *Հորինված պատմություն*, Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ, 2010 թ., *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2017 թ., *A Glance into the History of Armenia through Cartographic Records*, Լոնդոն, Բեննետ անդ Բլում, 2015 թ., *Հայ քարտեզագրության պատմությունը մինչև 1918 թ.*, Երևան, Զանգակ, 2017 թ.:
- <sup>15</sup> Այս էջը որպես առանձին քարտեզ տպագրել է Լոնդոնի «Բալդվին և Քրադոկ» հրատարակչությունը 1835 թ.:
- <sup>16</sup> Էրֆանյան, Մասնուր, *Ադրբեջանի Հանրապետության երևան գալը*, Թավրիզ, «Իրան շենախթ» հրատարակչություն, 2016, էջ 101, պարսկերեն:
- <sup>17</sup> Գալջյան, Ռուբեն, *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2017, էջ 25–27:
- <sup>18</sup> Էրֆանյան, նշված աշխ., էջ 79:
- <sup>19</sup> Էրֆանյան, նշված աշխ., էջեր 11, 13, 44, 64, 78:
- <sup>20</sup> Տես նաև Բայաթ, Քավե, *Փոթորիկը Կովկասում*, Թեհրան, Արտգործնախարարության հրատ., 2001 թ., էջ 65: Թիֆլիսի Պարսկական հյուպատոսարանի համար 383 հեռագիր, 1918 թ. հուլիս 28, պարսկերեն:
- <sup>21</sup> Ռեզա, Էնայատոլլահ, *Ազարբայջան և Առան*, հայերեն թարգմ.՝ Երուանդ Փափագեան, Երևան, Փինիկ հրատ., 1994 թ.: Enayatollah Reza. *Azerbaijan and Aran*, translated by Ara Ghazarians. London: Bennett & Bloom, 2014.
- <sup>22</sup> Այս նյութի շուրջ բազմաթիվ պարսիկ պատմաբաններ ու մտավորականներ պարսկերենով գրքեր և հոդվածներ են հրատարակել, որոնց մեկ մասն են հետևյալները.
  1. Ահմադ Մոդադդամ, *Իրական Ադրբեջանը որտեղ է*, Գերմանիա, Ասեման, 2008 թ.:
  2. Զամիլ Հասանլի, *Ադրբեջանի Դեռոկրատ կուսակցության վերելքն ու անկումը*, Թեհրան, Նեյ, 2005 թ.:
  3. Քավե Բայաթ, *Ադրբեջանը պատմության ալիքների մեջ*, Թեհրան, Շիրազա, 2000 թ.:
  4. Ահմադ Քասրավի, *Ազերի, հնագույն Ադրբեջանի լեզուն*, Թեհրան, Հազար, 2008 թ.:
  5. Համիդ Ահմադի, *Յեղաբանությունը և ցեղային խորականությունն Իրանում*, Թեհրան, Նեյ, 2014 թ.:
  6. Ռոդիյե Բեհզադի, *Հնագույն ցեղերը Կովկասում և Անդրկովկասում և Միջագետքում*, Թեհրան, Նեյ, 2005 թ.:

### 3. «ՄԵԾ ՀԱՅՔ» ԵՎ «ՓՈՔՐ ՀԱՅՔ» ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Հին հունա-հռոմեական աշխարհի բոլոր պատմիչներն ու աշխարհագրագետներն իրենց գրականության մեջ նշել են Հայաստանի անունը և հաճախ գրել Մեծ Հայքի և Փոքր Հայքի մասին լատիներեն *Armenia Maior, Armenia Minor* անվանումներով:

Նույնիսկ քարտեզագրության նախահայր Պտղոմեոսը բացատրել և պատկերել է Մեծ և Փոքր Հայքերը, իսկ երկու Հայքերի վերաբերյալ Ստրաբոնը (մ. թ. ա. 64 թ. մինչև 25 թ.) իր մանրակրկիտ «Աշխարհագրություն» 17 հատորանոց աշխատության մեջ գլուխներ է հատկացրել Հայաստանին: Գրքի 11-րդ հատորի 12-րդ մասի երրորդ գլխում նա գրում է.

Այստեղից հոսում են երկու մեծ գետեր, որոնք շրջապատում են արևելքը, մոտենում են իրար Բաբելոնի մոտ և թափվում Պարսից ծոցը, որոնք են Եփրատն ու Տիգրիսը: Այս երկուսից մեծագույնը Եփրատն է, որն անցնում է ոլորապտույտ հոսանքով՝ սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային մասում, հոսելով դեպի արևմուտք՝ Մեծ կոչված Հայաստանի միջով՝ մինչև Փոքր Հայք, աջում ունենալով այս երկիրը<sup>1</sup>:

Նրա գրքի նաև մյուս գլուխներում, օրինակ, 11.12.4 և 11.3.1, Ստրաբոնն ավելի քան 50 տեղ մանրամասն նշումներ է կատարում Մեծ և Փոքր Հայքերի պատմության ու աշխարհագրության մասին:

Հռոմեացի բնագետ Գայոս Սեկունդոս Պլինիոսը, ճանաչված նաև որպես Պլինիոս Ավագ (23–79 թթ.), իր «Բնագիտություն» կոչված հանրագիտարանում գրում է երկու Հայքերի մասին, իսկ նրա 6-րդ գրքի 9-րդ գլուխը կոչվում է «Մեծ և Փոքր Հայքեր», որտեղ շարադրված են հետևյալ տեքստերը.


Մեծ Հայքը սկսվում է Պարիեդրի [հավանաբար Պոնտոսյան] լեռներից և Կապադոկիայից առանձնանում է, ինչպես ասացինք, Եփրատ գետով մինչև այնտեղ, որտեղ Եփրատը թեքվում է դեպի արևելք, իսկ Միջագետքից նրան բաժանում է Տիգրիս գետը: Այս երկու գետերի ակունքները Հայաստանում են... Այսպիսով՝ նրա սահմանները հասնում են մինչև Ադիաբենե, որտեղ որ այս երկրի լեռնաշղթաները նրա միջով են անցնում: Այստեղից երկրի սահմանները ձգվում են դեպի ձախ՝ անցնելով Արաքսը և հասնելով Կուր, իսկ նրա լայնությունը հասնում է մինչև Փոքր Հայք<sup>2</sup>:

.... Կուրից այն կողմ գտնվող հարթավայրը բնակեցված է այլբանական ցեղերով և ապա իբերներով, որոնք Ալբանիայից առանձնանում են Ալազան գետով<sup>3</sup>:

Պլինիոսի աշխատության մեջ որևէ տեղ Ադրբեջան երկիր նշված չէ: Նույնիսկ Իրանի հյուսիսարևմտյան նահանգը նա կոչում է Մարաստան, քանի որ այդ ընթացքին նրա Ատրպատական-Ատրոպատեն անվանափոխումն ընդհանրացած չէր (տե՛ս հատորիս գլուխ 2-ը): Ինչպես նախապես ասվեց, Մարաստան-Ատրոպատենի տարածքի անվանումը՝ արաբների նվաճումից հետո աստիճանաբար տրոհվեց ու վերջում դարձավ Ադրբեջան, իսկ հայերը պահեցին նրա հնագույն՝ «Ատրպատական» անվանումը<sup>4</sup>:

Դարեր շարունակ աշխարհագրագետներն ու քարտեզագետները գրում էին երկու՝ Մեծ և Փոքր Հայքերի մասին: Մեծ Հայքը տեղադրված էր այսօրվա Հայաստանի Հանրապետության, Նախիջևանի, Արցախի և ներկա Թուրքիայի արևելյան մասում տեղակայված պատմական Հայաստանի հողերի վրա: Նրա հյուսիսում՝ Սև ծովից հարավ, Պոնտական լեռներն են, իսկ արևմտյան սահմանը Եփրատն է: Հարավային սահմանն է Տավրոսյան լեռնաշղթան ու Միջագետքի հարթավայրը, իսկ արևմտյան սահմանն են Իրանը և Փոքր Մարաստանից մի հատված: Փոքր Հայքը տեղակայված է Եփրատից անմիջապես արևմուտք և զբաղեցնում է ոչ մեծ տարածք:

Այս երկու Հայքերը լավագույն կերպով ներկայացրել է երկրորդ դարի ալեքսանդրիացի աշխարհագրագետ և «Աշխարհագրովիշուն» հատորի հեղինակ Կլավդիոս Պտղոմեոսը:



3.1. Պտղոմեոսի Մեծ Հայքի ու Փոքր Հայքի քարտեզը՝ տպագրված Հռոմում 1482 թ.:

Պտղոմեոսը համարվում է արդի քարտեզագրության հիմնադիրը, և նրա առաջադրած մեթոդներից մեծ մասը գործածվում էին մինչև 16-րդ դ.: Պատկեր 3.1-ի քարտեզը նրա պատրաստած Մեծ և Փոքր Հայքերի քարտեզն է, որը տպագրվել է 1482 թ. Հռոմում հրատարակված նրա «Աշխարհագրություն» հատորում: Քարտեզը վերցված է Լոնդոնի Բրիտանական գրադարանում պահպանված արխիվից:

Իր «Աշխարհագրություն» գրքում Պտղոմեոսը ճանաչված աշխարհից հավաքել է շուրջ 8000 տեղանուն՝ դրանք տեղադրելով պատկան երկրները բացատրող գլուխներում ու դրանց համար հատուկ պատրաստված քարտեզներում: Գլուխներում ցուցակագրված են երկրի քաղաքները, գետերը, լեռները և լճերը: Սրանցից մեկը կոչված է Մեծ Հայաստան, որտեղ առկա է 85 տեղանուն, իսկ Փոքր Հայաստանի գլխում տրված է 79 տեղանուն<sup>5</sup>:

Իր հատորում Պտղոմեոսը «Ադրբեջան» անունը չի նշում, և ներկա Ադրբեջանի Հանրապետության տարածքի մեծ մասը նա անվանում է «Կովկասյան Ալբանիա-Աղվանք»: Իսկ Կուրից հյուսիս տեղակայված «Ալբանիային» նվիրված գլխում նա նշում է միայն 37 տեղանուն:

Եվրոպական միջնադարյան քարտեզներում «Հայաստան» անունը առկա է երբեմն իր երկու՝ Մեծ և Փոքր բաժանումներով, իսկ երբեմն էլ երկուսը միացված ներկայացված են որպես «Հայաստան»: Այս անվանումները կարելի է տեսնել Պապուս Օրոսիոսի (385–420 թթ.), Սևիլիայի Իսիդոր եպիսկոպոսի (560–636 թթ.), Բեդա Երանելու (672–735 թթ.) և այլոց քարտեզներում:




Քարտեզագրության կարևոր մի աշխարհացույց քարտեզում (3.2), որը պահպանվում է Էքս-ան-Փրովանսի Մեծան գրադարանում, վերի՝ Ասիայի հատվածում առկա են երկու Հայաստաններ. մեկը՝ Աղվանքի մոտ (1), իսկ մյուսը՝ Կիլիկիայում (3):

3.2. Իսիդորի Աշխարհացույցի 12-րդ դարի օրինակը, Էքս-ան-Պրովանս, Ֆրանսիա:

3.2 պատկերում, ըստ ժամանակի սովորության, արևելքը վերն է, քարտեզի վերի կեսը ներկայացնում է Ասիան, որտեղ նաև Երկրային Դրախտն է: Այստեղ է Մեծ Հայքը (1)՝ տեղակայված Միջագետքից (2) հյուսիս, Փոքր Հայքը (3) տեղակայված է Կապադովկիայից և Կիլիկիայից (4) հյուսիս: Սրանք համապատասխանում են Մեծ Հայքի և Կիլիկիայի, երբեմն «Փոքր Հայք» կոչվող աշխարհագրական դիրքին: Դրանց արևմուտքում է Փոքր Ասիան (5):

Պատկեր 3.3-ը Սբ Զերոմի (340–420 թթ.) 5-րդ դարի «Գիրք վայրերի» կոչված աշխատության մեջ առկա քարտեզներից մեկն է՝ նվիրված ճանաչված աշխարհին, որտեղ նշված են կարևոր երկրների ու վայրերի տեղանունները, իսկ մյուսը ցուցադրում է «Ավետյաց երկիրը»: Պատկեր 3.3-ը հատված է առաջին քարտեզից, որտեղ կարելի է տեսնել Միջին և Մերձավոր Արևելքի տեղանունները:



3.3. Ասիայի շրջանը Սբ Զերոմի 4-րդ դարի քարտեզից:

Հյուսիսը քարտեզի ձախում է: Քարտեզը պարունակում է լեռնաշղթաները՝ աղեղների շարքով, գետերը՝ երկու գուգահեռ գծերով, քաղաքները՝ տարբեր չափերի ամրոցներով ու տներով: Քարտեզի կենտրոնում՝ Տիգրիս (1) և Եփրատ (2) գետերի միջև, Վերին [Մեծ] Հայքն է (3)՝ տեղակայված Միջագետքից (4) և Պարթևստանից (5) ու Ադիաբենեից (6) հյուսիս՝ Հայկական լեռների (7) շրջանում: Ստորին [Փոքր] Հայքը (8) տեղակայված է Արարատներից և Նոյյան տապանից (9) արևմուտք՝ Հայաստանին (12) և Կապադովկիային (10) կից: Արարատները (9) և Հայաստանը (12) Կասպից դարպասներից հարավ են, որը նշում է «Ալանաց դուռը» կամ Դարյալի կիրճը (11)՝ Կովկասի հարավն ու հյուսիսը միացնող ճանապարհը:

Վերոհիշյալ բոլոր քարտեզները և աշխարհագրական գրականությունը փաստում են, որ Մեծ և Փոքր Հայքերը որպես Greater Armenia, Armenia Maior, Armenia Superior և Lesser Armenia, Armenia Minor, Armenia Inferior գործածվել են հնագույն ժամանակներից մինչև ուշ միջնադար: 1375 թ. Կիլիկիայի հայկական թագավորության՝ մամլուքների ասպատակումից և անկումից հետո տարածքը գրավեցին բյուզանդացիները, արաբները, պարսիկները և ապա Կենտրոնական Ասիայից ներխուժած թրքական ցեղերը՝ վերացնելով Կիլիկիայի անկախ Հայկական իշխանությունը: Դրանով հանդերձ բոլոր իսլամական, եվրոպական և այլ քարտեզներում Մեծ Հայքի տարածքը շարունակում էր կոչվել «Հայաստան», քանի որ տեղում բնակվում էին բնիկ հայերը, անկախ նրանից, թե ժամանակին այդ տարածքն ում գերիշխանությունն էր՝ ոտակական, պարսկական կամ օսմանյան:

Ասորական գրականության ամենամեծ դեմքերից է բանաստեղծ, պատմաբան, բժշկապետ և բանասեր Գրիգորիսը՝ Յուհաննա Բար-Էբրոյոն կամ Բարիեբրետուր՝ ճանաչված նաև որպես «Աբու-Ֆարաջ»: Նա ծնվել է 1226 թվականին Մալաթիայում և մահացել 1286 թվականին Մարաղայում (Պարսկաստան): Նրա «Մինարեթ Ղուզե (Սրբավայրի լույսը)» աշխատության մեջ առկա է աշխարհացույց մի քարտեզ, որը պատկերում է բնակելի աշխարհի կիսաշրջանը՝ բաժանված եղանակային 7 գոտիների: Քարտեզի 5-րդ գոտին պարունակում է Մեծ ու Փոքր Հայքերը և դրանց մի քանի քաղաքներ ու լճեր<sup>6</sup>:

Մուհամեդ բին Աբդուլլահ բին Իդրիս ալ-Շարիֆ ալ-Իդրիսին (1099-1166 թթ.) 12-րդ դ. իսլամական կարևորագույն աշխարհագրագետներից էր: Նա ճամփորդել էր աշխարհով մեկ և հրավիրվել աշխատելու Միկիլիայի Ռոժե 2-րդ թագավորի արքունիքում: 1154 թ. նա պատրաստեց իր հանրահայտ «Ռոժեի գիրքը», որը պարունակում է 1 փոքր Աշխարհացույց քարտեզ և 70 մեծադիր աշխարհամասերի քարտեզներ՝ բաժանված ըստ 7 եղանակային գոտիների՝ ամեն գոտու համար ունենալով 10 քարտեզ:



Կուրից ու Արաքսից հյուսիս ընկած տարածքն այստեղ կոչված է Ալուան, որն արաբերենով Աղվանքի անվանումն է (5):

Քարտեզում առկա են նաև Մեծ և Փոքր Հայքերը:

3.4. Իդրիսիի 1154 թ. Հարավային Կովկասի շրջանի քարտեզը, վերագծումը և տառադարձումը՝ Կոնրադ Միլլերի: Ըստ իսլամական քարտեզների՝ հարավը վերնում է:

Պատկեր 3.4-ի քարտեզում Արաքսից հարավ նշված է «Հայաստանը» (1), որը տարածվում է Արաքսից հյուսիս (2): Դրանից արևմուտք նշված է նաև երկրորդ «Հայաստանը» (3), մինչդեռ «Աղբբեջանը» (4) և «Դեյլամը» նշված են որպես Պարսկաստանի երկու նահանգներ, որոնք տեղակայված են Կասպից ծովից հարավ՝ քարտեզի վերին ձախ կողմում:

Պետք է նաև նշել, որ միջին դարերի քարտեզներում ընդհանրապես երկրների սահմանները չէին նշվում, քանի որ նրանք հաճախ փոփոխական էին՝ հաճախ փոխվելով նույնիսկ մինչև քարտեզի պատրաստելն ու գծելը: Դրա փոխարեն երկրամասերի տարածքները կոչվում էին տեղաբնիկ ժողովուրդների անուններով: Այդ պատճառով էլ ներկա Թուրքիայի արևելքի՝ պատմական Հայաստանի տարածքում մինչև 1920-ական թվականները գրվում էր «Հայաստան», քանի որ այդտեղ ապրում էին հայեր, որոնք, սակայն, բնաջնջվեցին 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության ժամանակ:

13-14-րդ դդ. Միջերկրականի հյուսիսարևելյան անկյունում տեղակայված Կիլիկիայի հայկական թագավորությունը սերտ առևտրական կապեր և ներկայություն ուներ Ջենովայի, Վենետիկի, Կատալոնիայի և այլ եվրոպական առևտրական կենտրոնների հետ: Հայ առևտրականները համարվում էին Հայաստանի ոչ պաշտոնական ղեսպաններ: Նրանց թողած տեղեկությունների շնորհիվ ծովագնացների համար 12-16-րդ դդ. պատրաստված «պորտոլան» կոչված բազմաթիվ քարտեզներում նշված են նաև Մեծ ու Փոքր Հայաստան անվանումները, ինչպես նաև Արարատը, Նոյյան տապանը և մի քանի քաղաքների անուններ:

Մայրկղացի քարտեզագետ Անջելինո Դուսերտի 1339 թ. պորտոլան քարտեզը և դրանց հատվածները վերատպված են ստորև և հաջորդ էջում:



3.5. Անջելինո Դուսերտի 1339 թ. պորտոլան քարտեզից Արևելյան Միջերկրականի շրջանը:

Այս շարքի պորտոլաններն ունեն յուրահատուկ դրվածք: Ինչպես ասվեց և տեսանելի է 3.5 պատկերում, պորտոլաններն ընդհանրապես միայն ցույց են տալիս ծովափնյա տարածքների մանրամասները, քաղաքներն ու գյուղերը, գետերը, խովթերը, կղզիները և ծովագնացի համար այլ կարևոր և բնորոշ տվյալներ: Դրանք ավերից հեռու տարածքների վրա հազվադեպ են նշում որևէ այլ տվյալ: Այսպիսով՝ ծովի ավերից հեռու երկրներից շատերը դրանց մեջ նշվելու համար չեն արժանանում: Կիլիկիայի հայկական թագավորությունը, ունենալով ծովային կապեր և նավեր, բնականաբար նշվում էր պորտոլաններում, բայց Մեծ Հայքը, լինելով ծովերից հեռու, դրանց մեջ առկա չպիտի լիներ: Սակայն բոլոր պորտոլաններում, որոնք ներառում են այդ աշխարհամասը, Մեծ Հայքը նշված է՝ իր կարևորագույն քաղաքներով ու այլ հատականիչներով:

Քարտեզ 3.6-ում ցուցադրված Միջերկրականի հյուսիսարևելյան անկյունում տեղադրված Կիլիկիայի հայկական թագավորությունը, լինելով խաչակիրներին կրոնակից երկիր, գծված է կանաչ կամարի ներքո, որը նշում է տեղացիների բարեկամ և քրիստոնյա լինելու պարագան: Տարածքում ցուցադրված են Կիլիկյան թագավորական երկու ընտանիքների դրոշները, կարմիրով նշված է նաև Փոքր Հայաստան անունը (որը երբեմն գործածվում էր նշելու Կիլիկիան), և նրա կարևոր քաղաքներից Տարսուսը, Սիսը, Այասը և 8 այլ քաղաք:

Մեծ Հայքի (3.7) հատվածը Դուսերտի քարտեզի վերին աջ անկյունում է, որտեղ առկա է երկգագաթ Արարատը՝ գծված ձախ կողմում՝ վրան Նոյյան տապանով, իսկ նրանից ձախ Հայկական լեռներն են (կանաչ), և դրանցից ակունք առնող Եփրատ ու Տիգրիս գետերը՝ որոնք բոլորն անվանված են: Հայաստանի քաղաքներից կարելի է տեսնել Երզնկան ու Միաֆարկինը: Նույնանման ցուցադրումներ կարելի է տեսնել հանրահայտ Կրեսկի, ինչպես նաև շատ այլ պորտոլանների վրա, որոնք վկայում են Հայաստանի կարևորությունը եվրոպական քարտեզագիրների տեսանկյունից<sup>8</sup>:




3.6. Կիլիկիայի հայկական թագավորությունը Անգելինո Դուսերտի 1339 թ. քարտեզում:



3.7. Մեծ Հայքը Անգելինո Դուսերտի 1339 թ. քարտեզում:

Ֆրանսիացի քարտեզագետ Ֆիլիպ Դե լա Ռյուն 1653 թ. պատրաստել է Հայաստանի քարտեզը՝ ըստ Հուստինիանոս կայսեր (485–565 թթ.): Մեծ Հայքի արևելյան և հիմնական մասն այդ տարիներին պարսից գերիշխանության ներքո էր, իսկ Մեծ Հայքի արևմտյան ծայրամասը, ինչպես նաև ամբողջ Փոքր Հայքը, Բյուզանդիոնի գրաված տարածքում էր՝ բաժանված երեք վարչական մասերի՝ Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայաստանների:


Ստորև պատկեր 3.8-ը Դե լա Ռյուի քարտեզն է, որը կոչված է «Հայաստանը հնում՝ իր չորս բաժանումներով», որը ցուցադրում է վերոնշյալ շրջանների սահմանները: Աջ կողմում ARMENIA մակագրվածը Մեծ Հայքն է, որն այդ ընթացքում Սասանյան Իրանի գերիշխանության ներքո էր:



3.8. Հայաստանը Հուստինիանոս կայսեր օրոք՝ Բյուզանդիոնի բաժանումներով: Դե լա Ռյու, 1653 թ., Փարիզ:

Մուսթաֆա իբն Աբդուլլահը (1609–1657 թթ.), ճանաչված որպես Քյաթիր Չելեբի կամ Հաջի Խալիֆա, առաջին կարևոր օսմանցի աշխարհագրագետն ու քարտեզագիրն էր: Չելեբին տարիներ շարունակ ապրել և մասնակցել է օսմանյան պատերազմներին և իր կարևորագույն աշխատությունը՝ «Ջիհան Նյուման (Աշխարհացույցը)», շարադրել է 1654–1657 թթ. դեպի արևելք կատարած ճամփորդությունների ընթացքում:

Ստորև Բրիտանական թանգարանում պահվող նրա ձեռագրի 121ա էջից է, որտեղ նա շարադրել է «Ջիհան Նյումայի» Հայաստանին նվիրված գլուխը: Տեքստը արաբատառ օսմանական թրքերեն է, որը, սակայն, ներկա Թուրքիայի ժողովրդի համար անընթեռնելի է:



3.9. Հատված Քյաթիր Չելեբիի «Ջիհան Նյուման»-ի ձեռագրի տեքստից, 1653 թ.:

**Առաջին յոթ տողերի թարգմանությունը հետևյալն է.**

**Գլուխ Հայաստանի վիլայեթի մասին.** Հայաստանը երկու մասից է բաղկացած՝ Մեծ և Փոքր: Փոքր Հայքը Իրանին կից չէ և գտնվում է Միջերկրականի արևելքում, որի քաղաքներն են Ադանան և Մարաշը: Նրանց մայրաքաղաքը Սիսն է: Նախկինում նրանց մայրաքաղաքը Խլաթն էր, բայց պետության անկումից հետո նրանք դարձան «ռայա» (անհող գյուղացիներ), իսկ մայրաքաղաք ընտրեցին Սիսը: Մեծ Հայքը Իրանի սահմաններում է, նրա քաղաքներն են Վանը, Կարսը և Էրզրումը: Նրանց մայրաքաղաքը նախկինում Խլաթն էր: Նրանք սերված են Հայկից ու Արմենակից<sup>9</sup>:

Թրքերենի գրավոր տառափոխումները կատարվեցին Եղեռնից հետո, երբ 01.01.1929 թ. թրքերենի այբուբենը արաբականից փոխվեց եվրոպականի: Սա այն ընթացքում էր, երբ թուրքերեն արդեն իսկ մերժում էին Հայոց ցեղասպանությունը: Դրանից հետո թրքերենի տառափոխումներում քաղաքական նպատակներով «հայ» կամ «Հայաստան» անուններն ընդհանրապես հանվում էին գրականությունից ու բոլոր գրավոր փաստաթղթերից, կամ էլ «Հայաստանը» դառնում էր «Դողու Անադոլու»: «Դողու» բառը օսմաներեն նշանակում է արևելք, իսկ Անատոլիան նույն նշանակությունն ունի հունարենում: Այսպիսով՝ «Դողու Անադոլու» անվանումը թարգմանվում է «Արևելյան Արևելք», որն աշխարհագրության մեջ մի նոր և անհասկանալի տերմին էր:

Այն դժվար վիճակից դուրս գալու նպատակով սկզբում Հայաստանի տարածքի անվանումը դարձվում էր «Արևելյան Թուրքիա»: Սակայն 1920–ականների վերջերին ավելի հիմնական ճանապարհ գտնվեց: Աթաթուրքը «Անատոլիա» անվանման ընդգրկած տարածքը ընդլայնելով Փոքր Ասիայից հասցրեց մինչև Պարսկաստանի սահմանները, այսինքն՝ Թուրքիայի ամբողջ տարածքի վրա: Պատմական Հայաստանի տարածքը, լինելով այս նորանուն շրջանում, հայտնվեց նոր ընդլայնված «Անատոլիայի» արևելյան ծայրամասում, այսինքն՝ «Արևելյան Անատոլիայում»: Այսպիսով՝ «Հայաստանը», դուրս բերվելով «Հայկական բարձրավանդակից», տեղադրվեց «Անատոլիայի» մեջ: Այս անվանափոխության վերաբերյալ տես նաև սույն աշխատությանս հաջորդ գլուխը:

Հակառակ վերոնշյալ բոլոր հունա–հռոմեական, իսլամական, պարսկական, միջնադարյան եվրոպական և այլ փաստերի՝ Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն ու պատմաբաններից շատերը պնդում են, որ հայերը Կովկասի հարավային շրջանում նորեկներ են, որոնց այդտեղ են բերել ցարական Ռուսաստանի բանակը, մինչդեռ ադրբեջանցիները, ավելի ճշգրիտ՝ Ադրբեջանի Հանրապետության ներկա բնակիչները, նույն այդ տարածաշրջանի բնիկներն են, որոնք տվյալ վայրում բնակվել և պետություն են ունեցել ավելի քան 3000 տարի<sup>10</sup>: Մանրամասների համար տես աշխատությանս 8–րդ գլուխը:

Սրանց ավելանում են ադրբեջանական պնդումները, որ Մեծ Հայք անվանումը հայերի հորինած անվանումն է, մինչդեռ իրենք՝ ադրբեջանցիներն են իրական Մեծ ազգն ու պետությունը: Նրանք մոռացության են տալիս այս գլխում բերված բոլոր պատմական ու աշխարհագրական փաստարկները, ըստ որոնց՝ Մեծ և Փոքր Հայքերը ամեն տեղ նշված են սկսած նախքան մեր թվարկությունը, իսկ Կովկասից հարավ՝ մինչև Արաքսի մոտակա տարածաշրջանը, բացի Իրանի Ադրբեջան–Ատրպատական նահանգից, Ադրբեջան անունով որևէ այլ երկիր ընդհանրապես գոյություն չի ունեցել:

## Գլուխ 3–ի ծանոթագրություններ

---

- <sup>1</sup> Ստրաբոն, *Աշխարհագրություն*, հատոր 11, անգլերեն թարգմանությունը՝ Վ. Ֆալքոների, Լոնդոն, 1903:
- <sup>2</sup> Պլինիոս Ավագ, *Բնագիտություն*, անգլերեն թարգմանությունը՝ Ֆ. Հոլանդի, Լոնդոն, Վերներյան ակումբ, 1847 թ., գլուխ 6.9.25:
- <sup>3</sup> Նույնը, Գլուխ 6.11.29
- <sup>4</sup> Ավելի մանրամասի համար տե՛ս Ռուբեն Գալջյան, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2017 թ.:
- <sup>5</sup> Hewsen, Robert & Khachaturian, Mkrtich. *Armenian Place Names in Ptolemy's Geography*, Paris: 1982.
- <sup>6</sup> Գալջյան, Ռուբեն, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում*, Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ և Երևան, Փրինթինգոն, 2007 թ., հայերեն տեքստի էջ 79–80:
- <sup>7</sup> Նույնը, էջ 55, 56:
- <sup>8</sup> Գալջյան, Ռուբեն, *Հայաստանը օտարների քարտեզներում*, Երևան, Զանգակ, 2018, էջ 58–61:
- <sup>9</sup> Նույնը, էջ 71:
- <sup>10</sup> Ավելի մանրամասի համար տե՛ս Ռուբեն Գալջյան, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2017 թ., էջ 77–86:



# 4. ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՆՈՒՆԸ, ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳԻՐԸ<sup>1</sup>

## Ադրբեջանի անվան ծագումը

Երբ քննարկում ենք նախաքրիստոնեական Հարավային Կովկասի և Միջին Արևելքի աշխարհը, այնտեղ առկա են Մարաստանը, Պարթևատանը, Ատրեատանը Բաբելոնը և Վիրքը: Ժամանակին Մարաստանի հյուսիսարևմտյան մասը կոչվում էր Փոքր Մարաստան: Կյուրուրը, միացնելով Մարաստանն ու Պարթևատանը, մ.թ.ա. 6-րդ դ. հիմնադրեց Իրանի Աքեմենյան կայսրությունը: Իսկ հարևան երկրները մեծ մասամբ դարձան նրանց ինքնիշխան սատրապությունները<sup>2</sup>:

Ալեքսանդր Մակեդոնացու (մ.թ.ա. 356–323 թ.) արշավանքների ընթացքում Փոքր Մարաստանի ղեկավար Ատրոպատտ գորավարը կարողացավ իր երկիրը նրանից պաշտպանել և իր սիրանքների առիթով տվյալ երկրամասը իր պատվին կոչվեց Ատրոպատեն կամ հայերենով՝ Ատրպատական: Այս առիթով աշխարհագրության նախահայր Ստրաբոնը (մ.թ.ա. 64 – 24 թթ.) գրում է.

Մյուս մասն է Ատրոպատյան Մարաստանը, որն իր անունն առնում է Ատրոպատեսից, նա էր, որ չթողեց որպեսզի այս երկիրը, որը Մեծ Մարաստանի մասն էր, ընկնի Մակեդոնացոց գերիշխանության ներքո: Իրեն թագավոր հայտարարելով՝ երկիրը անկախ դարձրեց, և իր հաջորդությունը շարունակվում է մինչև այժմ՝ իր ժառանգորդների, Հայոց, Ատրոց և ապա Պարթևաց թագավորականների հետ կնքված խնամակալությամբ<sup>3</sup>:

Պատկեր 4.1-ի քարտեզը ցուցադրում է Աքեմենյան կայսրության գրաված տարածքը մ.թ.ա. առաջին հազարամյակի կեսերին:



4.1. Նորաստեղծ Աքեմենյան կայսրության տարածքը: Տեքսասի համալսարանի հավաքածու:

Պարսիկ պատմաբան և քաղաքական գործիչ Ահմադ Քասրավին (1890–1946 թթ.) իր հոդվածների հավաքածուում նշում է.

Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից այստեղ մի դեպք է պատահել, որի հետևանքը մեր լեզվի մեջ դեռ ապրում է, և սա մեր երկրի «Ադրբեջան» անվանումն է:... այս շրջանը Փոքր Մարաստան էր կոչվում մինչև այն, երբ Ալեքսանդրն ամբողջ շրջակայքը գրավեց, բայց այստեղ դրա դեմ դուրս եկավ Ատրոպատ անունով մի տեղացի գորավար և իր երկիրը պաշտպանեց ու մինչև իր կյանքի վերջն այս շրջանում իշխեց: Այսպիսով՝ այս երկիրը նրա անունով անվանվեց Ատրոպատական, որն աստիճանաբար տրոհվեց ու դարձավ Ազերբայջան: Տեղեկություններ կան, որ Ատրոպատի ժառանգները մի քանի հարյուր տարի այդ տարածքի տիրակալներն էին<sup>4</sup>:

Ատրպատականի տեղացիների լեզվով, որը հնդեվրոպական Պարսկաստանի հին՝ փահլավերենի տարբերակներից էր, Ատրոպատեն անունը փոխվել ու դարձել է Ատորպատական, ապա արաբական արշավանքներից հետո արաբերենի ազդեցության բերմամբ տրոհվել է ու դարձել Ադհերբիզան, Ադհերբիջան և ապա Ազերբիջան ու Ազերբայջան, հայերենով՝ Ադրբեջան: Պարսկական՝ իրական Ադրբեջանին հայերը մինչև այսօր անվանում են հին՝ Ատրպատական անունով:

Քանի որ Ադրբեջանի Հանրապետությունը հարուստ է նավթի հանքերով և գետնից բխող ու վառվող գազերով, նաև այն, որ պարսկերեն «ազար» բառը նշանակում է հուր–կրակ, ապա այս երկրի ներկա իշխանությունները պնդում են, որ իրենց անունը գալիս է հուր–ազար բառից և նշանակում է կրակի երկիր: Սակայն սա ամբողջովին կեղծ տեսություն է և սխալ անվանում մի քանի պատճառով.

1. Միայն պատահականություն է, որ երկրամասի անունը, որը «Մարաստան» էր, ժամանակին ընդունեց գորավարի անունը և արաբների լեզվական փոփոխությունների պատճառով դարձավ «Ազերբայջան»: Խոսքը Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգի մասին է:
2. Հնագույն ժամանակներից Բաքվի շրջանը հարուստ է եղել նավթահանքերով, իսկ այդ օրերին երկրամասի անվանումն էր «Աղվանք», արաբերենով «Առան», եվրոպական լեզուներով՝ «Կովկասյան Ալբանիա»:
3. Միջին դարերում, երբ Արաքսից և Կուրից հյուսիս շրջանն արդեն իսկ նավթի առատությամբ էր զբաղվում, շրջանը ճանաչված էր ընդհանուր «Շիրվան» անունով:
4. Իրական Ադրբեջան/Ազերբայջանը, որը Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգն է, նավթահորեր չունի, հետևաբար չէր կարող անվանվել ազար–կրակ անունով: Վառվող հանքերը Իրանի Ազերբայջան նահանգից մի քանի հարյուր կիլոմետր հյուսիս են՝ Ապշերոնյան թերակղզու և Բաքվի մոտակայքում:
5. Երբ այս երկրամասը 1918 թ. հետո անվանվեց «Ազերբայջան», միայն դրանից հետո էր որ անվան նմանության վրա հիմնվելով՝ տեղական իշխանություններն սկսեցին առաջ քաշել «Կրակի երկիր» տեսությունը:

6. Ուշադրություն արժանի է, որ պարսկերեն «ազար» բառը մաքուր պարսկական աղբյուր ունի և տեղական թուրքերենում գոյություն չունի: Շատ անհավանական է, որ Բաքվի շրջանում ապրող թուրքերեն խոսող մուսուլմաններն իրենց նորաստեղծ երկրի անունը հիմնեին օտար, այն էլ՝ պարսկերեն մի բառի վրա:

Արաքսից և Կուրից հյուսիս ընկած Ադրբեջան երկրի անվանման մասին տե՛ս նաև այս աշխատության երկրորդ՝ «Ադրբեջան» թյուրանվանումը գլուխը:

### Ադրբեջանի Հանրապետության լեզուն<sup>5</sup>

Երբ Ադրբեջանի Հանրապետությունում խոսում են իրենց լեզվի մասին, դրան տալիս են «ազերի» անունը, որը տվյալ լեզվի համար ամբողջովին սխալ ու մոլորեցնող անուն է: Նրանց լեզուն իրականում Կենտրոնական Ասիայի թյուրքական օղուզ ցեղի ենթալեզուններից է, որոնք Կովկասի և Պարսկաստանի շրջան հասան 11-րդ դարում: Այս մասին հավելյալ տեղեկություններ են տրված սույն աշխատության Ներածական գլխում: Թուրքիայի հանրաձանաչ Իլբեր Օրթայլի պատմաբանը հետևյալն է ասում.

Ադրբեջանի լեզուն մեր լեզվի բարբառներից է, որը գործածվում էր մեր քաղաքակրթության նախնական շրջանում: Պարսկերեն տերմինները նրանց լեզվում շատ ավելի տարածված են, քան մեր լեզվում: Դրան հավելյալ, մեր լեզուն զարգացել է, իսկ նրանցը՝ ոչ<sup>6</sup>:

Ըստ պարսիկ պատմաբանների և լեզվաբանների՝ պարսկական Ատրպատականի գործածական լեզուները մինչև 15–16-րդ դդ. ոչ թե թուրքերեն էին, այլ ազերի կամ ադրբեջաներեն կոչվողը, որը հաստատում է պարսկական լեզուների մասնագետ, լեզվաբան Ուալտեր Հեննինգը (1908–1967 թթ.) իր «Ադրբեջանի հնագույն լեզուն» հոդվածում<sup>7</sup>: Ազերի լեզուները թյուրքական չեն և սերվում են միջին պարսկերեն պահլավական լեզվից, որոնք այսօր հազվագյուտ են գործածվում և ընդհանրապես մոռացված են:

Պատմիչ և աշխարհագրագետ Իբն Հաուքալն իր 978 թ. աշխարհագրական «Սուրաթ ու արդհ (Երկրի պատկերը)» աշխատության մեջ հաստատում է այս՝ ասելով.

Ադրբեջան/Ատրպատականում և Հայաստանի որոշ շրջաններում խոսակցական լեզուն պարսկերենն է, իսկ ոմանք նաև խոսում են արաբերեն... Հայաստանի տարբեր շրջաններում և Նախիջևանում ու Դվինում խոսում են հայերենի մի բարբառով: Հայաստանի Խլաթ քաղաքում խոսում են երեք լեզվով՝ արաբերեն, պարսկերեն և հայերեն<sup>8</sup>:

Իր «Մուշամ ու Բուլղան (Քաղաքների բառարան)» գրքում Հարավային Կովկասի մասին սիրիացի պատմիչ Յաղութ ալ-Համաուին (1179–1229 թթ.) բացատրություններ է տալիս աշխարհի տարբեր քաղաքների և երկրների մասին: Գալով Իրանի Ատրպատական նահանգին և նրանց խոսակցական լեզվին՝ նա գրում է.

Երկիրը հրաշալի եղանակ ունի, իսկ մարդիկ գեղեցիկ են ու գրավիչ, սպիտակ և նուրբ մաշկով: Նրանց լեզուն կոչվում է ազերի, որը իրենցից բացի ուրիշ ոչ ոք չի հասկանում<sup>9</sup>:

Այս դիտողությունը ճիշտ է նույնիսկ այսօր Ատրպատականի որոշ գյուղերում, որտեղ հին լեզուն, որը պարսկերենի հնագույն տարբերակներից է, միայն խոսում է տեղացիների փոքրամասնությունը:

Պարսիկ աշխարհագրագետ և պատմիչ Համրուլլահ Մոսթոֆի Ղազվինին (1203–1283 թթ.) իր «Նուզհաթ ու-Ղուլուբ (Սրտի երանություն)» աշխատության մեջ նահանգների և նրանց բնակչության վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ է տալիս: Ատրպատականի Մարաղա քաղաքի և ընդհանրապես Ատրպատական նահանգի մասին նա գրում է հետևյալը.

Բնակչությունը սպիտակամորթ է և պատկանում է իսլամի մի ուղղափառ աղանդի և խոսում է պահլավական լեզվի մի բարբառով<sup>10</sup>:

Պարսիկ լեզվաբան Աբդուլալի Քարանգն իր «Թաթերեն և հարզաներեն. հնագույն Ադրբեջանի լեզվի երկու բարբառներ» աշխատության մեջ նշում է, որ նախկինում Ադրբեջանի խոսակցական լեզուն կոչվում էր ազերի<sup>11</sup>: Ապա նրանց համեմատելով Նոր Զուղայի հայերի հետ, որոնք դեռևս պահպանել են իրենց նախնիների լեզուն՝ հայերենը, հայտարարում է.

Քանի որ հայերենը գրավոր և զարգացած լեզու է, ապա իր հրատարակությունների և գրականության շնորհիվ շարունակում է մնալ կենդանի և գործածական, իսկ Ատրպատականի նախկին հնագույն բարբառները, որոնք միասնաբար *ազերի* անվանումն ունեին և պատկանում էին արիական լեզուների ընտանիքին, չունենալով գիտական ու գրական հիմք ու գրականություն, շատ ուրիշ բարբառների նման աստիճանաբար փոփոխությունների ենթարկվելով՝ վերջապես համարյա մոռացվեցին ու անցան մեռած լեզուների շարքին<sup>12</sup>:

Ատրպատականի հնամյա այս լեզուն, որին արևմտյան լեզվաբաններն ու պատմաբանները նույնպես «ազերի» են կոչում, համարվում էր մարերի վաղ միջնադարյան արիական արմատներ ունեցող լեզվի փոփոխված և զարգացած տարբերակը: Բուն ազերի լեզվի բարբառներից մի քանիսը դեռևս գործածվում են Իրանի Ատրպատական նահանգի որոշ գյուղերում ու շրջաններում: Ատրպատականի Քարինգան, Արզին, Քիլասուր, Մարգար, Դիզմար և այլ գյուղերում, որոնք տեղակայված են Թավրիզից հյուսիս՝ դեպի Արաքս ընկած տարածաշրջանում, խոսում են թաթերեն, իսկ դրանցից դեպի արևմուտք՝ Գելին-Ղիյե գյուղում, խոսվում է հարզանի բարբառը: Սրանք երկուսն էլ հին ազերի լեզվի ենթաճյուղավորումներից են<sup>13</sup>:

Աշխարհահռչակ արևելագետ Վլադիմիր Մինորսկին (1877–1966 թթ.) իր «Կովկասյան պատմության ուսումնասիրություններ» աշխատությունում թարգմանել և քննարկել է 16-րդ դարի օսմանցի պատմիչ Մյունաջլիմ-բաշիի «Շիրվանի և Դերբենդի պատմությունը» մեծածավալ աշխատության 10–11-րդ դդ. Շադդադյաններին վերաբերող հատվածը: Այստեղ նա նշում է.

9–10-րդ դարերի արաբական արշավանքների ընթացքում [Իրանի] Ատրպատականի բնիկ ժողովուրդը կազմված էր գյուղացիական զանգվածներից, որոնց արաբները տվել էին *ուլուջ* նվաստացուցիչ մականունը, որը նման է քրիստոնյաներին տրված օսմանական *ու՛յա* [հպատակ] անվանմանը: Գյուղաբնակ այս ժողովրդի միակ զենքն էր պարսաստիկը (տե՛ս *Թարիխե Թաբարի*, III, 1379–1389): Սրանք խո-

սում էին մի քանի (ազերի և թալիշի) բարբառներով, որոնց մնացորդները դեռ առկա են որոշ կղզիացած թրքախոս համայնքներում<sup>14</sup>:

*Ամերիկացի լեզվաբան և համաշխարհային համբավ ունեցող իրանագետներ, Հարվարդի համալսարանի պրոֆեսորներ Ռիչարդ Ֆրայը և Պատրիկ Ջեքսոնը նույնպես հաստատում են, որ բուն ազերի լեզուն իրանական լեզվի բարբառներից է եղել<sup>15</sup>: Մեր օրերին նույն նյութի վերաբերյալ հողված ունի նաև Երևանի սլավոնական համալսարանի իրանագիտության կենտրոնի ղեկավար պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը, որտեղ նա քննարկել է իրանական Ադրբեջանի հնագույն և այսօր մեռյալ համարվող լեզուն<sup>16</sup>:*

*Նիքոլաս Աուդը և Ֆրեդ Ջեյմզ Հիլը իրենց խմբագրած «Ադրբեջանցիները» աշխատության մեջ, որը լույս է տեսել «Ժողովուրդներ, մշակույթ և պատմություն մատենաշարով», գրում են հետևյալը.*

Ադրբեջանի մշտափոփոխ անցյալին ավելանում է նաև այն պարագան, որ անհամար քոչվոր ցեղեր և ռազմատենչ ցեղախմբեր իրենց տեղափոխումների համար օգտվում էին հյուսիսային տափաստաններից Կասպից ծովի արևմտյան ափերով դեպի Պարսկաստան ձգվող ճանապարհներից: Նման անցյալ ունենալն անդրադարձել է ներկա Ադրբեջանի Հանրապետության բնակչության վրա, որ իրենք էլ սերված են տարածաշրջանում ժամանակին բնակված թյուրքական, պարսկական, կովկասյան և այլ ժողովուրդներից<sup>17</sup>:

*Լայդենի համալսարանի պատմաբան, ծագումով պարսիկ Թուրաջ Աթաբաքին, իր «Ադրբեջան. էթնոսն ու իշխանության պայքարն Իրանում» աշխատության մեջ հղումներ անելով տարբեր աղբյուրների, գրում է.*

Թուրքերենը Ատրպատական հասավ 11-րդ դարում, երբ մեծ թվով օղուզներ սկսեցին քոչել Փոքր Ասիա: Օղուզ թուրքերի առաջատար խումբը պատկանում էր այսպես կոչված *Իրաքի թուրքմեններ* ցեղախմբին, որոնց Պարսկաստանի Ղազնավի թագավորները հալածեցին ու քշեցին Խորասանից: Սրանց առաջնորդ Արսալան բին-Սելջուկը բանտարկվեց և բանտում մահացավ 1034 թ.: Օղուզների առաջին խումբը 2000 վրանով Ատրպատական հասավ 1029 թվականին, որոնց ընդունեց տեղի տիրակալ Վահսուտանը՝ նորեկներին օգտագործելով իր թշնամիների դեմ և նրանց միջոցով գրավելով Արձեշը<sup>18</sup>:

*Նորեկ օղուզների բերած լեզվի՝ հարավարևմտյան թյուրքական լեզվախմբի մասին նա գրում է այսպես.*

Այս լեզուն էլ իր հերթին որոշ չափով ազդվեց նախքան թյուրքական նվաճումներն այստեղ գործածվող լեզվից, բայց նորեկ լեզուն, լինելով իշխող դասի առօրյա գործածականը, աստիճանաբար փոխարինեց տեղական լեզվին<sup>19</sup>:

*Իրանի Թավրիզ քաղաքում ծնված ատրպատականցի պատմաբան ու լեզվաբան Ահմադ Քասարավին (1890–1946 թթ.) գրում է.*

Ատրպատականում թուրքերենն արմատավորվելով ազերի լեզվին տեղահան էր

արել նախքան Սեֆյանների թագավորության հաստատումը: Դրա փաստն իրենք Սեֆյաններն են, քանի որ նրանք, լինելով բնիկ ատրպատականցի, արդեն գործածում էին ոչ թե ազերին, այլ թուրքերենը, և միայն գերդաստանի ղեկավար Շեյխ Սեֆին էր, որից ունենք հին ազերի լեզվով գրի առնված երկտող բանաստեղծություններ: Բայց երբ հասնում ենք Սեֆյանների թագավորության հիմնադիր Շահ Իսմայիլին, նրանց լեզուն արդեն թուրքերեն էր դարձել<sup>20</sup>...

Վերոհիշյալ նյութին հանգամանորեն անդրադարձել է նաև պարսիկ պատմաբան Ռոդրիգես Բեհզադին իր կովկասյան ցեղերի և նրանց պատմության վերաբերյալ շարադրած վերջին աշխատությունում<sup>21</sup>: Նույնը նաև հաստատում է «Քեմբրիջի Իրանի պատմությունը» հանրահայտ ութհատորյակը, որի վեցերորդ հատորը անդրադառնում է Թիմուրյանների և Սեֆյանների շրջանի (1335–1736 թթ.) պատմությանը, լեզվին ու մշակույթին<sup>22</sup>:

Պարսիկ պատմաբան ու լեզվաբան պրոֆեսոր Էնայաթոլլահ Ռեզան (1920–2010 թթ.) Ադրբեջանի և Ադվանքի հնագույն լեզուների ու կրոնների վերաբերյալ ունի ծավալուն աշխատություն, որտեղ նա էլ իր հերթին մանրամասնորեն քննարկում է այս տարածաշրջաններում գործածված տարբեր տեղական լեզուները և հանգում վերը բերված եզրակացությանը<sup>23</sup>:

Վերոնշյալ բուն պատճառներով էր, որ Ատրպատականի բնիկների հինավուրց «ազերի» լեզուն սելջուկյան արշավանքներից սկսած աստիճանաբար անհետացել ու գործածությունից դուրս է մղվել՝ տեղը զիջելով թյուրքական նորեկ ցեղերի լեզվին, որոնք, գրավելով Պարսկաստանի այս շրջանը, հաստատեցին թյուրքական նոր իշխանություններ:

Վերջերս պարսիկ մտավորականներն ու պատմաբաններն ազերի լեզվի և թուրքերենի, ինչպես նաև Ադվանքի ու Ադրբեջանի վերաբերյալ մեծ թվով աշխատություններ են հրատարակել Իրանում և այլուր, բայց քանի որ սրանք հիմնականում պարսկերեն են, դրանց համար միջազգային շուկա դուրս գալը կամ Եվրոպայի ու Ամերիկայի գիտական շրջանակներում տարածվելը բավականին բարդ խնդիր է: Հատորիս ներկա գլխում նշված աշխատություններից զատ՝ վերջին տասնամյակներին հրատարակվել են մի շարք կարևոր պատմական և լեզվաբանական ուսումնասիրություններ, որոնք մեծ մասամբ պարսկերեն են (բացառությամբ մի քանիսի) և լույս են տեսել հիմնականում Իրանում, որոնցից օգտվել ենք սույն աշխատասիրության մեջ<sup>24</sup>:

Մոնղոլներին հետևող թյուրքական տարբեր ցեղերը, Ատրպատական հասնելով, մի քանի դար շարունակ շրջանի տերերն ու տիրակալները դարձան: Այս նորեկների տիրակալության ընթացքում էր, որ թուրքերենը հաստատվեց ու դարձավ շրջանի գործածական ու ներկայում «բնիկ» հորջորջվող լեզուն: Այսինքն՝ այսօր «ազերի» կոչվող լեզուն ներկա Իրանի Ատրպատականի լեզուն չէ, այլ ամբողջովին մեկ այլ լեզու, որն իր տեղը զիջել է թուրքերենին ու ամբողջովին մոռացված տրվել, իսկ ներկայիս Ադրբեջանում գործածվող թյուրքական լեզուն միտումնավոր կոչվում է «ազերի», որպեսզի այս հնամենի անունը դառնա ներկա Ադրբեջանի լեզվի անունը՝ այսպիսով ծառայելու և օգնելու, որպեսզի իրենց երկիրն էլ լեզվի նման ընկալվի որպես հնագույն մի երկիր:

Աղբբեջանի Հանրապետության թուրքերենը Կենտրոնական Ասիայից բերված թյուրքական լեզուն է, որը, ազերի լեզվից և պարսկերենից ազդված, ներկայում Ատրպատականում, ինչպես նաև Աղբբեջանի Հանրապետության տարածքում օգտագործվում է որպես խոսակցական լեզու: Հին «ազերի» լեզվից մնացել է միայն անունը, այն էլ՝ կորցնելով իր նշանակությունը և մեծ մասամբ գործածվելով իրեն փոխարինող, բայց ամբողջովին տարբեր լեզվի՝ Աղբբեջանի թուրքերենի համար:

Արդի գենետիկ հետազոտությունները նոր բացահայտումներ են իրականացրել, որոնք, մեր կարծիքով, պարզաբանումներ են մտցնում այս ուղղությամբ ևս: Իրանի Ատրպատական շրջանի թրքախոս համայնքներից նմուշներ վերցնելով՝ մասնագետ գիտնականները եկել են այն եզրակացություն, որ այդ ժողովրդի միայն ութ տոկոսը գենետիկ կապ ունի թյուրքական ցեղերի հետ՝ արդյունքը հետևյալ կերպ եզրակացնելով.

Այս շրջանում թրքերենի հարկադրված գործածությունը արդյունքն է իշխողների, այսինքն՝ սակավաթիվ զավթիչների գերակշռությանը, որոնք շրջանի ներկա բնակչության մեջ թողել են միայն չնչին հայրական գենետիկ հետքեր<sup>25</sup>:

### Աղբբեջանի փոփոխվող այբուբենը

Որևէ հնագույն կամ միջնադարյան կոչվող մշակույթ, որն իրեն համարում է ինքնուրույն և զարգացած քաղաքակրթություն, պետք է ունենա որևէ տեսակի գիր՝ գրված հիերոգլիֆներով, սեպագրերով կամ ինչ-որ այլ տեսակի այբուբենով: Բոլոր հնագույն քաղաքակրթությունները, ինչպիսին են եգիպտականը, բաբելոնյանը, ասորականը, պարթևականը, հայկականն ու հունա-հռոմեականը, ունեին իրենց գրավոր այբուբենը կամ նման մի գրառման միջոց, որով նրանք իրենց պատմությունը, մշակույթը և ավանդույթները փոխանցել են իրենց հաջորդ սերունդներին: Գրություն տեսակը պարտադիր չէր լինելու յուրահատուկ ու սովյալ ազգինը և կարող էր լինել ուրիշից վերցված գիր կամ նիշեր:

Ներկայիս Աղբբեջանի Հանրապետության իշխանություններն ու պատմաբանները պնդում են.

1. Աղբբեջանը տարածաշրջանում որպես երկիր ունեցել է 5000 տարվա պատմություն<sup>26</sup>:
2. Աղբբեջանը որպես անկախ պետականություն գոյություն է ունեցել 2000 տարի<sup>27</sup>:

Այսպիսով՝ այստեղ՝ Հարավային Կովկասում, ներկայում ունենք մի երկիր, որն իբր ունի 5000 տարվա գոյություն և 2000 տարվա պետականություն: Սակայն լեզուն, որով նրանք խոսում են և պետք է մշակույթի և պատմության փոխանցման միջոցը հանդիսանար, թուրքերենն է, որը նույն շրջան է հասել և դարձել գործածական լեզու միայն 500 տարի առաջ, այսինքն՝ իրենց պետականության հաստատվելուց 1500 տարի հետո:

Սկսած 16-րդ դարից՝ Շիրվանի ու Դաղստանի, այսինքն՝ ներկայիս Աղբբեջանի Հանրապետության տարածքի ժողովրդի խոսակցական լեզուն թյուրքերենն է, սակայն նույն ընթացքում նրանց գրավոր և մտավորականության լեզուն պարսկերենն էր: Տեղացի պատմաբանները, օրինակ՝ Աբբասղուլի աղա Բաքիխանովը (1794–1847 թթ.), ով աղբբեջանական պատ-

մագրովյան հիմնադիրն է, ինչպես նաև Միրզա Աղիգյոզալ Բեգը (մոտ 1780–1848 թթ.) և Միրզա Զավանշիր Ղարաբաղին (1773–1853 թթ.), իրենց շրջանի պատմության գրքերը շարադրել են պարսկերենով: Ըստ աղբրեջանցի մասնագետ Ռաուֆ Կարապյոզովի.

Աղբրեջանական [աղբրեջանալեզու] պատմական գրականությունը համեմատաբար նոր է. վաղագույն պատմական աշխատանքները գրվել են 18–րդ դարում, բայց աղբրեջանցի հեղինակների գործերի ձևաչափը մեծամասնությունը 19–րդ դարից են, որտեղ ներկայացվում են տարբեր թրքախոս խանությունների պատմությունները<sup>28</sup>:

Այստեղ Կարապյոզովը չի նշում, որ մինչև 19–րդ դարի վերջին քառորդը իրենց մոտավորապես 100 տարվա անցյալ ունեցող գրավոր մշակույթը միայն պարսկերեն էր: Այսինքն՝ թուրքերեն գրականությունն գոյություն չուներ:

Բաքիխանովի «Դրախտային այգին: Շիրվանի և Դաղստանի պատմությունը վաղ անցյալից մինչև ռուս-պարսկական պատերազմները» աշխատությունը շարադրվել էր 1844–1845 թթ.՝ ժամանակին ընդունված պարսկերենով, որը ներկա Աղբրեջանի հանրության բացարձակ մեծամասնության համար անհասկանալի լեզու և գիր ունի<sup>29</sup>:

Բաքիխանովի պատմության գիրքը 1970 թ. Բաքվում հրատարակվել է բնագիր պարսկերենով: Անկախությունից հետո՝ 1991 թ., Աղբրեջանի ակադեմիկոս Զիա Բունիաթովը գիրքը թարգմանել է ռուսերեն և հրատարակել Բաքվում: Քանի որ բնագիրը պարսկերեն է և Աղբրեջանի հանրության համար անհասանելի, Բունիաթովը, օգտվելով թարգմանչի իր հնարավորություններից, հրատարակության մեջ բնագրից հանել է Հայաստան և հայ անունները: Այսպիսով՝ ներկա իշխանություններն ու կեղծ պատմաբաններն Աղբրեջանի պատմության գիրքը հարմարեցրել են ռուսախոս հանրությանը մատուցելու համար՝ նրանից մաքրելով անընդունելի անվանումները: Պարսիկ պատմաբաններ Հասան Զավադին և հոլանդացի Ուիլլեմ Ֆլորը Բաքիխանովի գիրքը թարգմանել են անգլերեն և իրենց՝ պարսկերենից արված թարգմանությունը համեմատել են Բունիաթովի ռուսերեն թարգմանության մեջ կատարված հետևյալ կոպիտ աղավաղումները, որոնցից են գրքի մեջ «հայ» անունը հանելը և գրքի վերջին գլուխներն ընդհանրապես թարգմանությունից հանելը, քանի որ այնտեղ հեղինակը գրել է կրոնական և ազգային խտրականությունների դեմ՝ քարոզելով միասնաբար ապրել և գոյատևել առանց իրար հանդեպ ունենալու թշնամական վերաբերմունք<sup>30</sup>:

Վիկտոր Շնիրելմանին իր աշխատություններում Աղբրեջանի պատմաբանների վերաբերյալ հայտարարել է սեփական տեսակետը, որոնցից մեկը հետևյալն է.

Աղբրեջանի պատմության հիմնադիր Բաքիխանովի Գյուլիստան–է Էրամ. Դաղստանի և Շիրվանի պատմությունը աշխատությունը սկսվում է վաղ շրջաններից և հասնում մինչև 1813 թվականը: Այդ ժամանակվանից մինչև խորհրդային շրջանը Աղբրեջանում [տեղի բնակչության լեզվով] ոչ մի երևելի աշխատանք չի գրվել: Մինչև 1917 թվականը Աղբրեջանն իր պատմաբանները չուներ<sup>31</sup>:

Հնագույն ժամանակներից մինչև 1918–1920 թթ. Աղբրեջանի առաջին հանրապետության հիմնադրվելը համարյա ամբողջ թյուրքալեզու բնակչության գրականությունը պարսկե-

րեն և պարսից–արաբատառ այբուբենով էր: 1922–1929 թթ. գրավոր լեզուն աստիճանաբար փոխվեց թյուրքերենին հարմարեցված մի լատինատառ տարբերակի: Հազիվ մեկ տասնամյակ անց՝ 1937–1939 թթ., կիրիլատառ գիրը ստալինյան տարիներին սկսեց գործածվել ԽՍՀՄ–ի համարյա բոլոր հանրապետություններում, բացառությամբ երկուսի՝ Հայաստանի և Վրաստանի, որոնք հակասեցին կենտրոնից տրված հրամաններին ու պահպանեցին իրենց այբուբենը: Ադրբեջանում ևս այբուբենը փոխվեց կիրիլատառ մի տարբերակի, որը գործածության մեջ մնաց մինչև 1991 թ.<sup>32</sup>:

Անկախությունից հետո՝ 1992 թ., այբուբենը կրկին փոխվեց լատինատառի, այս անգամ մեկ այլ տարբերակի, որը շատ բաներով նման էր Թուրքիայում ընդունված այբուբենին, որը սկսել էր գործածվել 1929 թ. հունվարից<sup>33</sup>:

Այսպիսով՝ 1918 թ. և 1939 թ. Խորհրդային Ադրբեջանի ժողովուրդը, որն արդեն իսկ մինչև 1918 թ. իրենց ունեցած պարսկերեն գրականությունն անկարող էր կարդալ և հազիվ էր սկսել ընտելանալ նոր՝ լատինատառ գրությունը, այժմ կարիք ուներ սովորելու մեկ այլ՝ կիրիլատառ այբուբեն, որը գործածության մեջ մնաց հաջորդող 50 տարիներին: 1992 թ. այբուբենը կրկին փոխվեց՝ դառնալով լատինատառ, այս անգամ՝ մեկ այլ տարբերակի, որն արդեն երրորդ անգամ առաջացրեց գրագիտական լուրջ խնդիրներ:

Այստեղ նկատելի է Ադրբեջանի Հանրապետության իշխանավորների, գիտական աշխարհի և գրականագետների հնագույն քաղաքակրթություն ունենալու պնդումների վերաբերյալ մի արտասովոր հակասություն: Իր գիրը չունեցող տարածաշրջանը վերջին 300 տարին Պարսկաստանի նշանակված խաների իշխանության ներքո էր, որտեղի առաջադեմ խավի լեզուն նույնպես պարսկերենն էր: Իսկ վերջին մեկ դարում ժողովրդի գործածական այբուբենը քաղաքական առումով ոչ միայն մեկ, այլ երեք անգամ փոխվեց՝ ամեն փոփոխության հետ բերելով ամբողջ գրականության տառադարձության խնդիրը, որն անհրաժեշտ էր դառնում ու նաև առաջացնում խնդիրներ: Սակայն խնդիրների հետ միասին տառադարձումներն իշխանություններին և երկրի ղեկավարությանը անսահման հնարավորություններ էին տալիս տեքստերում նորանոր հիմնական քաղաքական և քարոզչական խմբագրումներ կատարելու:

Եղած գրականությունը պետք է տառափոխվեր և կրկին գրվեր նոր այբուբենով: Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն այս գործը կատարում էին մեծ ոգևորությամբ և հաճույքով, քանի որ բնիկների խոսակցական լեզվով գրված համարյա ոչ մի լուրջ գրականություն գոյություն չունեի, իսկ եղածն էլ սակավաթիվ և հիմնականում պարսկերեն էր գրված:

Տառադարձության ամենամեծ հնարավորությունն այն էր, որ 1992 թ. հետո կարիք կար հիմնականում սովետական և ավելի հին ժամանակների գրականությունը տառադարձելու նոր այբուբենով շարադրանքների: Այս գործը թարգմանիչներին հնարավորություն և ափիթ էր տալիս առաջին հերթին ընտրելու և թարգմանելու քաղաքական նպատակներին ծառայող և թարգմանության արժանի ու հարմար գրքերը և նյութերը՝ բաց թողնելով ոչ հարիր աշխատությունները: Թարգմանվող նյութերն էլ իրենց հերթին, ըստ քաղաքական իշխանությունների կարգադրությունների, «մաքրվում և բարելավվում» էին, որպեսզի զերծ մնան «անհարմար և վնասակար» նյութերից ու տեքստերից, և հնարավոր լինեի դրանք ավելի ազդեցիկ կերպով

օգտագործել հարևանների, հատկապես հնամյա Իրանի և Հայաստանի դեմ ծրագրած քարոզչությունը տարածելու նպատակին:

Եթե մեկը ծրագրում է փոխել և մաքրել պատմությունը, ապա այբուբենի հիմնական փոխվելը դրա ամենահարմար և անփոխարինելի գործիքն է: Նորաստեղծ Ադրբեջանի Հանրապետություն կոչված երկիրն այս գործիքն իր տրամադրության տակ ուներ մի քանի անգամ և տարբեր քաղաքական ժամանակաշրջաններում՝ դրանք գործի դնելով խորհրդային օրերին արագ բազմացող և գրագետ դարձող բնակչությանը «կրթելու» նպատակին: Ամեն դեպքում հասարակության հոծ մեծամասնության համար 19–20–րդ դդ. դեռևս առկա պարսկերեն գրականությունը անհասանելի և հատկապես անընթեռնելի է:

Անկախությունից հետո հանրապետության պատմաբաններն ու գրականագետները կարգադրություններ ստացան իրենց նորաստեղծ երկրի համար ստեղծել պատշաճ հակահայկական աշխատություններ՝ այսպիսով կերտելով նոր պատմություն և մշակութային «ժառանգություն»: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, առանց իր նպատակները թաքցնելու, իրենց պատմաբաններին բացահայտ առաջադրանք տվեց ստեղծելու պատմություն, որը կփաստի, որ հայերը Կովկասի հարավում նորեկներ են և ոչ թե բնիկներ՝ դրա համար նրանց խոստանալով պարգևներ:

2005 թվականի դեկտեմբերի 14–ին Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի 60–ամյակին նվիրված հոբելյանական նիստի իր ելույթում Նախագահ Իլհամ Ալիևը համաշխարհային հանրության առջև ադրբեջանական գիտնականներին կոչ արեց մասնակցելու և օժանդակելու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Արցախի հայության պատմական իրավունքների բացակայությունը հիմնավորելու գործընթացին: Նախագահ Ալիևը խոստացավ ֆինանսավորել ադրբեջանցի գիտնականների ջանքերով իրականացված ծրագրերը, որոնք կզան փաստելու՝ իբր հայերը եկել են Ադրբեջանի անքակտելի մասը հանդիսացող Լեռնային Ղարաբաղ իբրև հյուրեր և ուստի բացարձակապես իրավունք չունեն պնդելու Լեռնային Ղարաբաղը նախկինում պատկանել է իրենց տեսությունը<sup>34</sup>:

Իսկ 2011 թվականի ապրիլի 26–ին Ալիևը Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր նիստի ընթացքում հայտարարեց.

Ուրախ եմ, որ մեր գիտնականները, դրական անդրադառնալով իմ կոչին, կարճ ժամանակամիջոցում այս տարածաշրջանի վերաբերյալ ստեղծեցին հրաշալի աշխատանքներ: Պատմականորեն ամենակարևորը Երևանի խանության մասին եղած աշխատություններն են, քանի որ աշխարհի համայնքը համարյա անտեղյակ է, որ ներկա Հայաստան երկիրը կառուցվել է պատմական Ադրբեջանի հողերի վրա<sup>35</sup>:

Պատմության վերաշարադրումն ու «հայեր» ու «Հայաստան» անունները տարածաշրջանի պատմագրությունից հանելն այժմ մեծ թափով առաջ է ընթանում: Այդ տեսլականով ներկա Ադրբեջանի Հանրապետությունում «Աղվանք» անունն աստիճանաբար փոխվում և ներկայացվում է որպես «Հյուսիսային Ադրբեջան», իսկ հնադարյան պարսկական «Ադրբեջան–Ատրպատականը» ներկայացվում է որպես «Հարավային Ադրբեջան»: Պատմությունը խեղաթյուրողների համար շատ նպատակահարմար էր, որ պատմական աշխատությունների

բնագրերը պարսկերեն են, որոնք, բացի մի քանի գիտաշխատողների, մյուսների համար անընթեռնելի են: Նույնիսկ խորհրդային տարիներին՝ 1939–1991 թթ., գրված կիրիլատառ տեքստերն էլ արդեն շատերի համար անհասկանալի են դարձել: Համեմատության համար բուն տեքստերի անընթեռնելի լինելու պատճառով հասարակությունն ընտրություն չունի՝ բացի հավատարուց, որ եղած տառադարձվածը հավատարիմ է բնագրին, նաև ամբողջական է և վավերական: Վերաշարադրողներն այս դասը շատ լավ ընկալել էին Խորհրդային Միության և Թուրքիայի պատմագիրներից, որտեղ այսպիսի խեղաթյուրումներ և հապավումներ դեռևս կատարվում են:

Պատմության նման ծրագրված թարգմանություններ և խմբագրումներ իրականացնողներից ամենացայտունը ակադեմիկոս Զիա Բունիաթովն էր (Զիյա Բունիադով, 1923–1997 թթ.): Նա կրթել է պատմաբանների մի ամբողջ դասակ, որոնք հետևում են իր շեղված ուղղությամբ, որոնցից ամենաակտիվներից է Ֆարիդա Մամեդովան: Նրա «Կովկասյան Ալբանիայի քաղաքական պատմությունն ու պատմական աշխարհագրությունը» հատորը հորինումների մի հավաքածու է<sup>36</sup>: Գրքում Մամեդովան նշում է, որ իր նյութերը մեծ մասամբ վերցված են աղվանական աղբյուրներից, սակայն մի հայացքը բավական է տեսնելու համար, որ հղված 466 աղբյուրներից 160–ը հայկական են, 203–ը՝ անվստահելի խորհրդային գրքերից և այլն: Գրականության ցանկում ընդհանրապես աղվանական որևէ աղբյուր գոյություն չունի, քանի որ բոլոր պատմաբանները տեղյակ են, որ այսպիսիներն ընդհանրապես գոյություն չունեն: Ահա այսպիսին են Ադրբեջանի կարևոր գիտական և ակադեմիական աշխատությունների մեծամասնությունը<sup>37</sup>:

1980–ական թվականներից հետո Ադրբեջանի գրականության մեջ տառադարձումներում և թարգմանություններում փոփոխություններն ու հապավումները դարձան սովորական երևույթ: Բազմաթիվ պատմաբաններ այս մասին քննադատություններ են հրապարակել: Սրանցից են Կանադայի համալսարանի պատմաբան Քավե Ֆառտիխը<sup>38</sup>, ԱՄՆ–ի Իոնա քոլեջի նախկին դասախոս Զորջ Բոտնությունը<sup>39</sup> և մի քանի ուրիշներ:

Պետք է նաև նշել երկու այլ պարսիկ պատմաբանների, որոնք հրատարակել են լուրջ քննադատական աշխատություններ: Սրանք են Հոսեյն Ահմադի Ադրբեջանի Հանրապետությունը. 23 տարի պայքար երկիր–պետականություն ստեղծելու համար (Թեհրան, 2015 թ.) և վերը նշված Մասուդ Էրֆանիանի Ադրբեջանի Հանրապետության երևան գալը (Թավրիզ, 2016 թ.), որոնց համար տե՛ս այս աշխատության երկրորդ գլուխը:

Վերադառնալով Բունիաթովի և գործակիցների կեղծիքներին՝ դրանցից մի քանիսը նշված են ստորև.

1. Շիլտերբերգերի «Կապանքներ և ճամփորդություններ» աշխատության թարգմանության մեջ Բունիաթովը հիմնականում հանել է «հայ և Հայաստան» անունները և, որպես վերջնական հարված, գրքի 63–66 գլուխները ամբողջովին վերացրել թարգմանությունից, քանի որ դրանք վերաբերում են Կովկասի հարավում բնակվող հայերին, նրանց կենցաղին և մշակույթին<sup>40</sup>:


Շիլտերբերգերի գրքից հանված են հետևյալ գլուխները.

- 63. Հայերի կրոնը
- 64. Գրիգոր Լուսավորչի մասին
- 65. Վիշապը և միանդջյուրը
- 66. Հայերի և բյուզանդացիների թշնամությունը

*Շիլաբերգերն իր գրքի վերջում հայերենով և արաբատառ թուրքերենով գրի է առել «Հայր մեր»-ը, որն, իհարկե, հանված է թարգմանությունից:*

2. *1847-ին Միրզա Ջավանշիր Ղարաբաղին շարադրել է իր Ղարաբաղի պատմությունը, որն ամբողջովին գրված է պարսկերենով: Գրքի 4-րդ էջում նա գրում է. «Հնագույն Պարտավ քաղաքի բնակչությունը հիմնականում հայեր են և մի քանի այլ ազգեր»<sup>41</sup>: 1959 թ. Ֆ. Բաբակը գիրքը թարգմանել է պարսկերենից թուրքերեն և գրի առել ժամանակին գործածվող կիրիլական այբուբենով՝ պահպանելով հեղինակի վերոնշյալ նախադասությունը: 1989 թ. Նազիմ Ախունդովը նույն գիրքը վերախմբագրել է՝ այս անգամ աշխատությունից հանելով տեղաբնակ հայերին վերաբերող հիշատակումները, սակայն սրանով չբավարարվելով, առանց որևէ նշում կատարելու, ընդհանրապես նաև ամբողջովին հանել է Պարտավին և հայերին վերաբերող վերոնշյալ նախադասությունը<sup>42</sup>՝ այսպիսով Ղարաբաղի պատմության գիրքը մաքրելով ոչ ցանկալի հայերի անուններից, գիրքն արդեն դարձնելով ընդունելի աղբբեջանցի ընթերցողների համար:*

*Պատկեր 4.2.1, 4.2.2 և 4.2.3-ում տես Ղարաբաղի բնագրից և երկու թուրքերեն թարգմանություններից մեջբերված հատվածները, որտեղ 4.2.3 պատկերի հարցական նշանը ցուցադրում է որպես տառադարձման և վերջին խմբագրման արդյունք՝ նախկին օրինակների տեքստերից հանված նախադասության փոխարեն:*



4.2.1. Միրզա Ջավանշիր Ղարաբաղիի «Ղարաբաղի պատմությունը» ձեռագրի 4-րդ էջից հատված<sup>43</sup>:

Ընդգծված մասը Պարտավի վերաբերյալ նախադասությունն է, որն ասում է.

Այս [Բարդա-Պարտավ] հին քաղաքի բնակչությունը կազմված է հայերից և այլ ազգերից:

Гарабағ вилајәтиндә салынан биринчи шәһәр Тәртәр ча-  
 жынын үстүндә вә Күр чајынын үч ағачлыгында<sup>1</sup> олан Бәрдә  
 шәһәри вә галасыдыр. Гәдимдә о шәһәрин әһалиси ермәни вә ја  
башга бир милләт имиш. Бағдады абад вә дарүлхүлафә едә-  
 рәк, орада сакин олан кечмиш Бәни Аббасијјә хәлифәләри  
 заманында, ислам тарихи илә 306, христиан тарихи илә исә

4.2.2. Նույն տեքստի Ֆ. Բարանի 1959 թ. կիրիլատառ թարգմանությունը, որտեղ կարմիրով ընդգծված պահպանված է տեքստը՝ ամբողջությամբ<sup>44</sup>:

Гарабағ вилајәтиндә салынан биринчи шәһәр Тәртәр чајынын  
 үстүндә вә Күр чајынын үч ағачлыгында<sup>1</sup> олан Бәрдә шәһәри вә  
 галасыдыр.<sup>?</sup> Бағдады абад вә дарүлхүлафә едәрәк, орада са-  
 кин олан кечмиш Бәни Аббасијјә хәлифәләри заманында, ислам  
 тарихи илә 306, христиан тарихи илә исә 886-чы илдә,<sup>2</sup> бу шәһә-  
 рин әһалиси мүсәлман олду. Бундан сонра олан Бејләган шәһәри-  
 дир ки, ону Иран вә Фарс шаһларындан бири олан Губад падшаһ

4.2.3. Նույն գրքի 1989 թ. Ախունդովի վերախմբագրած տարբերակը, որտեղ վերևի նախադասությունն այս անգամ ամբողջովին հանված է: Այդ տեղը նշված է կարմիր հարցական նշանով<sup>45</sup>:

## Գլուխ 4–ի ծանոթագրություններ

- <sup>1</sup> Այս գլխում եղած նյութերի մի մասը վերցված է հեղինակի *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները* գրքից, Երևան, «Զանգակ» հրատ., 2017:
- <sup>2</sup> Ռեզա, Էնայաթոլլահ, *Ազարբայջան և Առան*, թարգմ.՝ Երուանդ Փափագեան, Երևան, «Փինիկ» հրատ., 1982, էջ 12–17:
- <sup>3</sup> Ստորաբոն, *Աշխարհագրություն*, գիրք 11, գլուխ 13.1, թարգմանությունը՝ Հ. Աճառյանի, Երևան, ԵՊՀ, 1940, էջ 45–47:
- <sup>4</sup> Քասրավի, Ահմեդ, *Երկերի հավաքածու. 78 հոդվածներ և նամակներ*, Թեհրան, «Քեթաբհայե Ջիբի» հրատ., 1973, էջ 322, պարսկերեն:
- <sup>5</sup> Հաջորդ էջերը վերցված են հեղինակի *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները* գրքից, Երևան, «Զանգակ» հրատ., 2017:
- <sup>6</sup> Օրթայլին իր 27.04.2013 թ. *Իշին ապի* հաղորդման մեջ հաղորդավար Սարֆիրազ Էրգյունի հարցին՝ «Ազերիների հայրենիքը ո՞րն է, և նրանք որտեղից են գալիս, արդո՞ք մենք՝ Թուրքիայի թուրքերս, և ազերիները նույն ցեղերից ենք» հարցին պատասխանեց՝ ասելով. «Այո, մենք բոլորս Կենտրոնական Ասիայից ենք, որ այստեղ ենք հասել հորասանի վրայով: Նրանք Կովկասում բնիկներ չեն, հակառակ դրան, որ նրանց որոշ կողմնակիցներ նման տեսություններն ընդունում են: Բայց նրանք ամեն դեպքում օղուզներ են: Ադրբեջանի լեզուն մեր լեզվի բարբառներից է, որը գործածվում էր մեր քաղաքակրթության նախնական շրջանում: Պարսկերեն տերմինները նրանց լեզվում շատ ավելի տարածված են, քան մեր լեզվում: Դրան հավելյալ, մեր լեզուն զարգացել է, իսկ նրանցը՝ ոչ»:
- <sup>7</sup> Henning, Walter Bruno. *The Ancient Language of Azerbaijan*. Transactions of the Philological Society, 1954, Oxford: Basil Blackwell, 1955, էջ 157–177.
- <sup>8</sup> Իրն Հաուբալ, *Սուրաթ ու Արդի*, թարգմանությունը՝ Շոարի, Թեհրան, «Բոնյադե Ֆարհանգ», 1966, էջ 96, պարսկերեն:
- <sup>9</sup> Յաղութ ալ–Համաուի, *Մուջամ ալ–Բուրան*, թարգմանությունը՝ Ա. Մոնգավիի, Թեհրան. «Միրասե Ֆարհանգ», 2001, էջ 160, պարսկերեն:
- <sup>10</sup> Համրոլլահ Մոսթոուֆի Ղազվինի, *Նուզհաթ ուլ–Ղուրուբ*, թարգմանությունը՝ Դաբիր–Սիադիի, Թեհրան, 2002, էջ 135, պարսկերեն:
- <sup>11</sup> Արդոլլաի Քարանգ, *Թաթերեն և հարզաներեն. հնագույն Ադրբեջանի լեզվի երկու բարբառներ*, Թավրիզ, 1954, էջ 10, պարսկերեն:
- <sup>12</sup> Անդ, էջ 24:
- <sup>13</sup> Անդ, էջ 25 և 27–35:
- <sup>14</sup> Minorsky, Vladimir. *Studies in Caucasian History*. Cambridge: 1957, էջ 112:
- <sup>15</sup> *The Cambridge History of Iran, Volume 6 of 8*, Peter Jackson, ed. Cambridge: 1986, էջ 950:
- <sup>16</sup> Гарник Асатрян, "Заметки об Азари — исчезнувшем языке Азарбайджана", *К освещению проблем истории культуры Албании и восточных провинций Армении, Том 1*, Ереван, 1991, էջ 484–492:
- <sup>17</sup> Nicholas Awde & Fred James Hill, ed., *The Azerbaijanis*. London: 2009, էջ 11:
- <sup>18</sup> Atabaki, Touraj. *Azerbaijan. Ethnicity and the Struggle for Power in Iran*. London & New York: IB Tauris, 2000, էջ 9: Տե՛ս նաև Richard. Frye, ed., *The Cambridge History of Iran*. Volume 4. Cambridge: 1975, էջ 238:
- <sup>19</sup> Atabaki, նշված աշխ., էջ 9–10:
- <sup>20</sup> Քասրավի, Ահմեդ, նշված աշխ., էջ 333:
- <sup>21</sup> Ռոդիլյե Բեհզադի, *Հնագույն ցեղերը Կովկասում, Անդրկովկասում, Միջագետքում և Բերրի Կիսալունի տարածքում*, Թեհրան, «Նեյ» հրատ., 2005, էջ 116–118, պարսկերեն:
- <sup>22</sup> *The Cambridge History of Iran. Volume 6*, նշված աշխ., էջ 951–954:
- <sup>23</sup> Էնայաթոլլահ Ռեզա, *Աղվանքը հնագույն ժամանակներից մինչև մոնղոլների շրջանը*, Թեհրան, 2003, էջ 179–274, պարսկերեն:

- 24 Դր. Ռեզա, Էնայաթոլլահ, նշված աշխ.: Տես նաև հետևյալները.
- Դր. Փարվիզ Վարջավանդ, *Իրանն ու Կովկասը, Առանն ու Շիրվանը*, Թեհրան, 1999:
  - Բեհզադի, Ռոհիլյե, *Հնագույն ցեղերը Կովկասում, Անդրկովկասում, Միջագետքում և Բերրի Կիսալունի տարածքում*, Թեհրան, 2005:
  - Ջավադի, Աբրասալի, *Ադրբեջանն ու նրա լեզուն, ազերի-թուրքերեն խնդիրն Իրանում*, ԱՄՆ, 1989:
  - Մոդադրամ, Ահմադ Խալիլովլահ, *Որտեղ է իրական Ադրբեջանը և ո՞րն են ազերի լեզուն ու պատմությունը*, Բոնն, 2008:
  - Դր Ռեզա, Էնայաթոլլահ, *Առանն ու Ադրբեջանը (Կովկասյան Ալթանիան)*, Թեհրան, 1981 թ.: Վերահրատարակված 8 անգամ: (Այս մեկը թարգմանվել է հայերեն և ռուսերեն):
- 25 Andonian, L., Rezaie S., et al, “Iranian Azeri Y–Chromosomal Diversity in the Context of Turkish–Speaking Population of the Middle–East”, *Iranian Journal of Public Health*. Vol. 2011/1, էջ 119–127:
- 26 Махмудов, Ягуб. *Азербайджанцы (взгляд на этнополитическую историю)*. Баку, 2009, էջ 4–10:  
Հավելյալ տեղեկությունների համար տես Румянцев, Сергей. "Национализм и конструирование карт исторических территорий": Обучение национальным историям в странах Южного Кавказа". *Ab Imperio*. 2010/4. էջ 419:
- 27 Heydarov, Tale & Bagiyev, Taleh (editors). *Azerbaijan: 100 Questions Answered*. Baku: 2008, էջ 21:
- 28 Карагезов, Рауф, *Метаморфозы коллективной памяти в России и на Центральном Кавказе*, Баку, 2007, էջ 148:
- 29 Բաքիխանովի աշխատությունը 1991 թ. ռուսերեն թարգմանվել և հրատարակվել էր Բաքվում: Այս հրատարակության մեջ գիրքը ենթարկվել էր հիմնական փոփոխության, սկսած վերնագրից, որից հանվել են *Շիրվանի և Դաղստանի պատմությունը*, իսկ *Հայաստան և հայ անունները* դարձել են *Աղվանք և աղվանացի*:
- 30 Bakikhanov, Abbas Qoli Aqa. *The Heavenly Rose–Garden: A History of Shirvan and Daghestan*, translated by Hasan Javadi & Willem Floor. Washington DC: Mage, 2009, էջ xvi: Տես նաև Ռուբեն Գալսյան, *Ադրբեջանի պատմաաշխարհագրական գեղծարարությունները*, էջ 48–53:
- 31 Виктор Шнирельман, *Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье*, Москва, 2003, էջ 123:
- 32 Frings, A. “Playing Moscow off against Kazan: Azerbaijan Maneuvering to Latinization in the Soviet Union”, *Ab Imperio*, 2009/4, էջ 249–266.
- 33 Մովսիսյան, Լիլիթ, «Ադրբեջանի այբուբենի պատմության ուրվագծերը», *21–րդ դար*, 2008, թիվ 4, էջ 155–166:
- 34 Գալսյան, Ռուբեն, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները*, էջ 45–46.
- 35 <http://en.president.az/articles/2041>; Կայքը ներկայում հեռացված է:
- 36 Мамедова, Фарида, *Политическая история и историческая география кавказской Албании*, Баку, 1986.
- 37 Գալսյան, Ռուբեն, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները*, նշված աշխ., էջ 68–69:
- 38 Տես <http://kavehfarrok.com/2011/11/>. See <http://kavehfarrok.com/2011/11/>.
- 39 Տես [https://en.wikipedia.org/wiki/George\\_Bournoutian](https://en.wikipedia.org/wiki/George_Bournoutian).
- 40 Bournoutian, George A. “Rewriting History”, *Journal of the Society for Armenian Studies*. Fresno: 1992–1993/6 էջ 185–6:  
See also George Bournoutian, *Two Chronicles on the History of Karabagh*. Costa Mesa, CA: 2004, էջ 265–69: Նաև տես Գ. Արզարյան, *Հայերը Շիրվանի ուղեգրություններում*, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1997/2, էջ 103–112:
- 41 Միրզա Ջավանշիր Ղարաբաղի, *Ղարաբաղի պատմություն*, Ադրբեջանի Ազգային գիտությունների ակադեմիա, 1840–1847, ձեռագիր B712/11603:
- 42 Տես նաև Ռուբեն Գալսյան, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները*, 2017, նշված աշխ., էջ 51–53, 235:
- 43 Mirza Javanshir Qarabaqi. *History of Kahrnanagh*. Baku: Azerbaijan Academy of Sciences, 1959. էջ 4. Facsimile publication of the original, Persian manuscript.
- 44 Мирза Чамал Чаваншир Гарабаги. *Гарабаг Тарихи*. Тарчума Ф. Бабаиев. Баку: Азербайжан Елмлер Акаедмийасы Нашрияти, 1959, էջ 11–12:
- 45 Мирза Чамал Чаваншир Гарабаги. *Гарабаг Тарихи*. Тарчума Х. Ахундов. Баку, Йазичи, 1989, էջ 108:



## 5. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ ԿԱՄ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ

«Բարձրավանդակ» բառը նշանակում է բարձր դիրք ունեցող հողամաս կամ ծովերից բարձր տեղակայված աշխարհամաս: Եվրոպական լեզուներով գործածվող՝ ֆրանսերեն ծագում ունեցող plateau բառը գործածության մեջ մտավ ուշ միջնադարում<sup>1</sup>: Մինչ այդ գործածական լատիներեն բառն էր Montibus կամ Montes՝ հաճախ կրճատվելով ու դառնալով Mons կամ Mt.: Այստեղ վերատպված միջնադարյան քարտեզներում կարելի է տեսնել Տավրոսյան ու Կովկասյան լեռները կամ լեռնաշղթաներն անվանված Montes կամ Mons: Սրանց շարքին են նաև հայկական լեռնաշխարհը կամ բարձրավանդակը:

«Հայկական լեռնաշխարհ կամ բարձրավանդակ» անվանումը լատիներեն ինչ-որ տարբերակներով նշված է հին և միջնադարյան քարտեզներում՝ տեղադրված է Պոնտական Տավրոսից հարավ և բուն Տավրոսից հյուսիս տարածքում, արևմուտքում սահման ունենալով Եփրատ գետը, իսկ արևելքում՝ իրանական Զագրոս լեռնաշղթան (տե՛ս քարտեզ 5.1–ը): Ներկա Ադրբեյջանի Հանրապետության որոշ աշխարհագրագետներ պնդում են, որ Հայկական լեռնաշխարհ կամ բարձրավանդակ անվանումները հորինված են, որոնք պատմականորեն երբեք ուրիշների կողմից չեն գործածվել: Ավելացնելով, որ հայերը Կովկասի հարավում նորեկներ են, որ տարածքում ներկայացել են 1828 թ. հետո:

Աշխարհագրության մեջ տարածաշրջաններում գոյություն ունեցող ծովերը, լճերն ու նշանակալի տվյալների մեծ մասն ազգագրական արմատներ ունեն, որոնք ամենահաճախ նկատելի են երկրների անվանման մեջ: Հին աշխարհի շատ երկրներ կրում են իրենց տարածքում բնակվող բնիկ ազգերի ու ժողովուրդների անվանումները: Սրանց հանդիպում ենք Եվրոպայում, Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում, բայց հազվադեպ են Նոր աշխարհում՝ Ամերիկայում:

Հայացք գցելով քարտեզներում ցուցադրված աշխարհագրական համեմատաբար մեծ տարածքներին, ինչպիսիք են ջրային տարածքները, սրանք հաճախ կրում են իրենց սահմաններում ու տարածքում ապրող ազգերի անունները: Օրինակ՝ սրանցից են Չինական ծովը, Պարսից ծոցը, Մեքսիկական ծոցը, Հնդկական օվկիանոսը, Արաբական ծովը, ինչպես նաև Հայկական, Իրանական, Տիբեթի և ուրիշ բարձրավանդակները:

Անվանումների վերաբերյալ տարածայնություններից են Արաբական Էմիրությունների, Քաթարի և Պարսկաստանի միջև տեղակայված ծոցը, որը հնագույն ժամանակներից բոլոր քարտեզներում անվանված է «Պարսից ծոց (Persian Gulf)», քանի որ դրա ամբողջ հյուսիսային տարածքում է աշխարհի հնագույն երկրներից մեկը՝ Պարսկաստանը: Վերջին տասնամյակներում ծոցի հարավի նորաստեղծ արաբական մի քանի պետություն, շփացած իրենց նոր ձեռք բերած նավթային դոլարներից, աշխատում են ծոցի անունը փոխել ու իրենց քարտեզներում արդեն դարձրել են «Արաբական ծոց (Gulf of Arabia)», որն, իհարկե, արժանացել է միջազգային ու Իրանի քարտեզագրագետների բուռն բողոքներին<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, լեռնաշխարհների ու լեռնաշղթաների անվանումներն էլ մասամբ հետևում են այդ սովորույթյանը, ըստ որի՝ մի մասը դրանք կոչվում են տարածաշրջանում ապրող բնիկ ցեղերի և ժողովուրդների անուններով: Աշխատույթյան այս գլխում կխոսենք միջնադարյան և այլ պատմական ու համաշխարհային քարտեզագրական մշակույթի կարևոր մաս կազմող քարտեզների և քարտեզագրական ու աշխարհագրական փաստաթղթերի մասին, որտեղ «Հայկական լեռնաշղթա և Հայկական լեռներ ու բարձրավանդակ» անվանումը հիմնականում տրված է Պատմական Հայքի կամ Մեծ Հայքի տարածքին:

Ըստ բոլոր հնադարյան ու միջնադարյան քարտեզների և աշխարհագրական արխիվների՝ ներկա Թուրքիայի արևելյան մասը ավելի քան երկուսուկես հազարամյակ բնակեցված է եղել հայերով: Դրա վերաբերյալ արձանագրությունները սկսվում են ավելի քան մ. թ. ա. 6-րդ դարից, շարունակվում բոլոր պատմիչների, Հերոդոտոսի, Մելայի, Ստրաբոնի և Պտղոմեոսի շարադրանքներում, անցնում տարածքի իսլամական գերիշխանության դարաշրջանով և հասնում են մինչև ուշ միջնադարյան եվրոպական գրքերին ու քարտեզներին<sup>3</sup>: Այս բոլոր ժամանակներում, երբ Հայաստանը նույնիսկ անկախ պետականություն չունեի, հայաբնակ այս աշխարհամասը կոչվել և կոչվում էր Հայաստան:

Բազմաթիվ եվրոպացի ճանապարհորդներ, որոնք անցել են Թուրքիայի արևելքով, Արարատի մոտակայքով, Իրանի հյուսիսարևմտյան և Կովկասի հարավով, գրել են այդ շրջաններում ապրող և կենտրոնացած հայ ժողովրդի մասին<sup>4</sup>:



5.1. Անատոլիայի և Հայկական բարձրավանդակի տեղագրական քարտեզը:

Աղբյուրը՝ Source: freeworldmaps.net <http://www.freeworldmaps.net/europe/turkey/map.html>



Այս քարտեզի ներքևում հանրագիտարանը տալիս է հետևյալ բացատրությունը.

**Հայկական բարձրավանդակ**, ռուսերենով՝ **Արմյանսկոյե նագորյե**, Արևմտյան Ասիայում լեռնային մի շրջան: Հիմնականում Թուրքիայի տարածքում է, ներկայացնում է ամբողջ Հայաստանը, Վրաստանի հարավային մի շրջան, Ադրբեջանի արևմտյան և Իրանի հյուսիսարևմտյան տարածքները: Ունի շուրջ 154 400 քառ. մղոն (400 000 քառ. կմ) տարածք: Հայկական բարձրավանդակի միջին բարձրությունը [ծովի մակերեսից] 5000–ից մինչև 6500 ոտնաչափ է (1,500–2000 մետր), բայց որոշ գագաթներ ունեն մինչև 14000 ոտնաչափ (4000 մետր) բարձրություն: Այս բարձրավանդակը Միջերկրական և ալպիական հրաբխային ծավալաձևային գոտու մի մասն է և ունի մերձարևադարձային՝ ցամաքային եղանակ: Հարուստ է քրոմի, ոսկու և երկաթի հանքերով:

Միջնագորյան աշխարհացույցներում Հայկական լեռներ կամ լեռնաշղթա տերմինը երևացել է 4-5-րդ դդ. Սբ Զերոմի կամ Սբ Հիերոնիմոսի անգլիական քարտեզում, որը նաև բննարկված է գրքիս երրորդ գլխում:

Քարտեզ 5.3-ը բնագրից մի հատված է: 1-ով նշված տեղանունը Հայկական լեռներն են, որը սկսվում է Նոյան տապանից (8) և Արարատի արևմուտքից (9)՝ լատիներենով անվանված *Armenian Pila*, որը թարգմանվում է «Հայկական բարձրավանդակ»<sup>5</sup>: Այս լեռնային շարքը տեղադրված է Մեծ Հայքի (2 *Armenia Superior*) և Փոքր Հայքի (3 *Armenia Inferior*) միջև: Այս քարտեզի հատվածում 4-ը Կասպից ծովն է, իսկ 5-ը՝ Սև ծովը:



5.3. Արևմտյան Ասիայի հատվածը Սբ Զերոմի 4-5-րդ դդ. քարտեզից, որտեղ արևելքը վերևում է:

5.4 քարտեզի հատվածը վերցված է իսիդորյան 1055 թ. աշխարհացույց քարտեզից, որը տեղադրված է գերմանական մի ձեռագրի մեջ<sup>6</sup>: Քարտեզի այս մասում ցուցադրված են Հարավային Կովկասը և Հայաստանը, հատկապես տեսանելի են «Արարատները» (1), իրենց վրա իջած «Նոյան տապանով» (2): Դրանցից հարավ նշված են «Հայկական լեռները» (3), այսինքն՝ բարձրավանդակը, «Մեծ Հայքը (6), Արաքսը (4) և Եփրատն ու Տիգրիսը (5)», որոնք ակունք են առնում Հայկական լեռներից:



5.4. Կովկասի հարավի և Հայաստանի շրջանի հատվածը Իսիդորի 1055 թ. ձեռագրի Աշխարհացույց-ից.  
Մյունխենի քաղաքային գրադարան:

\* \* \*

Ֆրանսիացի քարտեզագետ Պիեռ Դեսեյլեն 1487–1553 թթ. աշխատում էր Մոնմորենսի քաղաքում: Նրա մեծագիր Աշխարհացույցն ունի 260x130 սմ չափեր, որը բավական ճշգրիտ կերպարանքով ներկայացնում է ամբողջ աշխարհը, ներառյալ Ամերիկաները: Այսպիսի հսկայական չափերի քարտեզը կարելի է մոտիկից տեսնել միայն դրա շուրջը պտտվելով, այդ պատճառով էլ տեղանունները գրված են ուղղորդված դեպի քարտեզի շուրջը, այսինքն՝ քարտեզ կարդացողը: Քարտեզը պահպանվում է Մանչեստրի համալսարանի գրադարանում: Պատկեր 5.5–ն այս քարտեզից վերցված Կովկասի շրջանն է<sup>7</sup>:



5.5. Հատված Դեսելինի 1546 թ. Աշխարհագրոյցից:

Պատկեր 5.5-ի հատվածը ներկայացնում է Կովկասի շրջանը: Այստեղ հյուսիսը ներքևում է, և դրա համար էլ Կասպից ծովը ձախում է (*Mer d'Hircanie ou de Caspie*), իսկ Սև ծովը՝ աջում: Այսպիսով՝ Հայաստանը տեղադրված է այս երկու ծովերից հարավ և Փոքր Ասիայից (*Petite Asie*) ձախ, այսինքն՝ արևմուտք: Վրաստանը (*Georgie*), Վիրքը (*Iberia*) և Աբխազիան (*Colces*) նշված են Կովկասյան լեռներից հարավ:

Քարտեզում Հայաստանի անունը նշված է լեռների վրա, իսկ դրանից վերև՝ աջում, լեռների անունը նշված է որպես «Հայաստանի լեռներ (*Montes d'Armenie*)»: Երկու տեղանունների մեջտեղից ակունք է առնում դեպի հարավ՝ վեր հոսող Եփրատ գետը, որը, անցնելով Միջագետքով, հոսում է դեպի Պարսից ծոց:



5.6. Հառլիի Աշխարհացույց քարտեզից Կովկասի շրջանը, 1547 թ., Բրիտանական գրադարան:

Քարտեզ 5.6-ը հատված է Հենրի Երկրորդի «Հառլի» կոչված քարտեզից, որը ծովագնացության համար պատրաստված ֆրանսիական պորտուլան աշխարհացույց քարտեզ է, հետևաբար ծովափերից հեռու երկրամասերում, բացի կարևոր երկրներից ու քաղաքներից, մանրամասը չի ցուցադրում: «Mer Minor»-ը «Սև ծովն» է, «Asie la Petite»-ը նշում է «Փոքր Ասիան», որի արևելքում է «Monts d'Armenie (Հայկական լեռները)», որոնցից վեր (հարավ) մեծ տառերով նշված է ԱՐՄԵՆԻԱ անունը: Քարտեզը պատկանում է ֆրանսիական Դիեպ անունով ճանաչված դպրոցին:

Հայաստանի հյուսիսում է տեղադրված Կովկասյան «Աղվանքը (Albanie)», որի տարածքի մեծ մասը գրավում է ներկա Ադրբեյջանի Հանրապետությունը: Դրանից արևմուտք է «Colcos/Colchis Աբխազիան»: Այս քարտեզում, ինչպես նաև նախորդում, Եփրատ և Տիգրիս գետերը ակունք են առնում Հայկական լեռներից կամ Հայկական լեռնաշխարհից:



↑ 5.7. Ալեքսանդր Մակեդոնացու գրաված տարածքի քարտեզը, Աբրահամ Օրտելիուս, 1595:

← 5.7ա. Վերի քարտեզի մի մասը, որտեղ առկա է Մեծ Հայքի տարածքը:

Այս քարտեզում Եփրատի և Տիգրիսի միջև ընկած տարածքը կոչված է Հայկական լեռներ (Armenia Montes): Հայաստանի հարևանությամբ են արևելքում՝ Մարաստանը, հարավում՝ Ասորեստանը և Միջագետքը, իսկ դեպի արևմուտք Փոքր Ասիան է, այսինքն՝ Անատոլիան:

Այստեղ նշված Amazonum-ը առասպելական ամազոնուհիներին է վերաբերում, որոնք, իբր, ապրում էին Սև ծովի հարավ-արևելքում:



5.8. Հատված Արևելքի հին միապետությունների քարտեզից, Ռոբերտ դե Վուգոնդի, 1779 թ., Փարիզ:

Ֆրանսիացի քարտեզագետ Վուգոնդիի քարտեզից վերցված 5.8 պատկերը Կովկասի հարավում ցույց է տալիս Grand Arménie (Մեծ Հայքը), որը գրավում է Colchide (Կովսիդայի-Աբխազիայի) և Albanie (Կովկասյան Ալբանիայի – Աղվանքի), այսինքն՝ ներկա Ադրբեջանի Հանրապետության տարածքի մեծ մասը: Եփրատ և Տիգրիս գետերի միջև ընկած տարածքը անվանված է Mesopotamie (Միջագետք) և Montainnes Arménie (Հայկական լեռնաշխարհ): Միջագետքը տարածքի հնագույն աշխարհագրական անվանումն է, քանի որ տեղակայված է երկու կարևոր գետերի՝ Եփրատի և Տիգրիսի միջև, որտեղ հնում Ասորեստանն էր:

Եփրատից արևմուտք ընկած երկրամասը ևս այստեղ կոչված է Arménie (Հայաստան), քանի որ սա Փոքր Հայքի շրջանն է:

Հերման Վիլհելմ Աբիլը (1806–1886 թթ.) գերմանացի երկրաբան և հանքաբանության պրոֆեսոր էր: Նա դասավանդում էր ցարական Ռուսաստանի գիտական կարևոր կենտրոն Դորպատի հանրահայտ համալսարանում, որն այսօր Էստոնիայի Տարտու քաղաքն է:

Նշանակման առաջին տարիներից ի վեր նա սկսեց ճամփորդել դեպի Կովկաս, որտեղ անցկացրեց ավելի քան 30 տարի՝ հետազոտելով Հարավային Կովկասի ու Հայկական բարձրավանդակի երկրաբանությունն ու ընդերքը: Նա հետազոտում էր շրջանի հրաբխային զարգացումները՝ հասկանալու տեղանքի տեկտոնական և սեյսմիկ անկայունության պատճառները: Ապա սկսեց հետազոտել Վրաստանի քարածխային պաշարները և նույնպես Բաքվի և Ապշերոնյան թերակղզու գազի ու նավթի հանքերն ու ցեխի հեյզերները<sup>8</sup>:

Դորպատի համալսարանը Նիկոլայ Առաջինի թագադրությունը նշելու առթիվ մի շարք ձեռնարկներ էր կազմակերպում, որոնց շարքին Աբիլը «Հայկական բարձրավանդակի երկրաբանական հիմունքները» նյութով մասնագիտական դասախոսություն կարդաց: Դասախոսությունից հետո նրա կարգացած նյութը հրատարակվեց, որտեղ «Հայկական բարձրավանդակ» անվան տակ նա բացատրություն էր տվել՝ ասելով.

Կովկասյան և Հյուսիսային Տավրոսյան լեռնաշղթաների տեսական հանդիպման վայրը, որտեղ միջին բարձրությունը ծովի մակարդակից շուրջ 900 մետր է (Արարատյան դաշտավայր) և համարվում է Հայկական բարձրավանդակի սկիզբը, տեսականորեն Կովկասի և Հայկական լեռնաշխարհի միացման կետն է<sup>9</sup>:

Մեծ Հայքի շրջանին վերաբերող իր հոդվածներում, գրականության մեջ, ինչպես նաև իր դասախոսություններում նա միշտ արտահայտվում է *armenische Hochebene – Hochland* (Հայկական բարձրավանդակ կամ լեռնաշխարհ)–ի մասին: Կարելի է ասել, որ գերմաներեն գիտական և ակադեմիական լեզվում ու հանրագիտարաններում ամենուրեք նույն տերմինը գործածվել և գործածական է նաև ներկայում<sup>10</sup>:

Աբիլի «Հայկական բարձրավանդակ» տերմինը գործածելուց հետո անգլերեն *Armenian Hoghland* կամ *Armenian Plateau* տերմինները կրկին գործածական դարձան, որոնք նշում էին Փոքր Ասիա կամ Անատոլիա թերակղզուց արևելք ընկած մասսայական լեռների խմբին կամ լեռնաշղթաներին, որոնք հիմնականում Եփրատից արևելք էին:

Նույնիսկ ներկա Թուրքիայի գիտական և աշխարհագրական գրականության մեջ, երբ խոսք է գնում Անատոլիայից արևելք ընկած տարածքի մասին, հաճախ կարելի է հանդիպել Հայկական բարձրավանդակ անվանմանը: Ստորև երկու օրինակները թուրքական գիտական նյութերից են վերցված:

Ալբորգ լեռների [հյուսիսարևմտյան Իրան] հարավում նրանք դեմ են կանգնում մյուս լեռներին, որոնց Հայկական բարձրավանդակ են անվանում<sup>11</sup>:

Կամ՝

Հայկական բարձրավանդակը Փոքր Կովկասից հարավ է<sup>12</sup>:

## Armenians (Armyanin, Hay, Somekhi)

### GEOGRAPHY

The Armenian people originated in the land of the Lesser Caucasus Mountains in Southwest Asia. Historic Armenia, or the Armenian highland, refers to a vast area of land, about 249,000 square miles, that constitutes the continuation of the Caucasus Mountains. Today most of the Armenian highland is in eastern Turkey, with some parts in Iran and the western part of Azerbaijan.

Արմենյանց (Հայ, Արմյանին, Սոմեխի)

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ ազգը սկիզբ է առել Փոքր Կովկասի շրջանում՝ հարավարևմտյան Ասիայում: Պատմական Հայաստան կամ Հայկական բարձրավանդակ է անվանվում մի մեծ շրջան, որն ունի շուրջ 640 000 քառ. կմ տարածք և համարվում է Կովկասյան լեռնաշղթայի շարունակությունը: Ներկայում Հայկական բարձրավանդակի մեծ մասը արևելյան Թուրքիայում է, մի մասն էլ՝ Իրանում և Ադրբեջանի արևմտյան մասում:

5.9. Հատված Ասիական ժողովուրդների հանրագիտարան–ից (2009 թ.) և դրա թարգմանությունը<sup>13</sup>:

Ցավալի է այն պարագան, որ Ադրբեջանի Հանրապետության գիտնականներն ու մասնագետները, քաղաքական դրդապատճառներով և դրանցից բխող պայմաններն արդարացնելու նպատակով կեղծում և փոխում են նույնիսկ միջազգայնորեն ճանաչված աշխարհագրական տեղանուններն ու անվանումները՝ դիմելով ամեն միջոցի, ընդհուպ մինչև նյութականով գայթակղելով օտար մասնագետների<sup>14</sup>: Տեղանունները հաճախ ներկայացվում են ամբողջովին փոխված ու կեղծված՝ դրանց տալով նույնիսկ նոր՝ ամբողջովին առնչություն չունեցող և անհիմն անվանումներ:

Այս գլխում կարդացողին բավականաչափ տեղեկություն տրվեց անդրադառնալու և հասկանալու, որ հակառակ Ադրբեջանի իշխանությունների ու պատմաբանների տեսությանը, հայերը չէին Հայկական լեռնաշխարհին կամ բարձրավանդակին այս անվանում տվողները, քանի որ այս անվանումը ժամանակին տրվել է հնագույն և միջին դարերի բոլոր աշխարհագրագետների ու մասնագետների կողմից:

Այս նյութին է նաև վերաբերում հաջորդ գլխի Անաստուլիա անվանման հիմնախնդիրը և դրան առնչվող տեղանունների, ինչպես նաև նույնիսկ կենդանական աշխարհի գիտական անվանափոխումների դրդապատճառները:

# Գլուխ 5–ի ծանոթագրություններ

- <sup>1</sup> Etymology Dictionary, online dictionary accessed by link [www.etymonline.com/word/plateau](http://www.etymonline.com/word/plateau).
- <sup>2</sup> Sahab, Mahammed–Reza. *The Persian Gulf: Atlas of Old and Historic Maps*. Tehran: Sobhe Sadegh Publications, 2005.
- <sup>3</sup> Գալջյան, Ռուբեն, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, «Զանգակ» հրատ., 2017 թ., էջ 85–92:
- <sup>4</sup> Անդ, էջ 108–126:
- <sup>5</sup> Pilaе հին լատիներենով այստեղ նշանակում է լեռների խումբ, դեզ, կույտ կամ հավաքածո:
- <sup>6</sup> Քարտեզի և մանրամասի համար տե՛ս Գալջյան, Ռուբեն, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում*, Երևան, Փրինթինֆո և Լոնդոն, «Կոմիտաս» ինստիտուտ, 2007 թ., աշխատության հայերեն տեքստի 34–35, անգլերենի 54–55 էջերը:
- <sup>7</sup> Ամբողջական քարտեզի համար տե՛ս Գալջյան, Ռուբեն, *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ* աշխատությունը, Երևան, Փրինթինֆո, 2005 թ., էջ 134–135:
- <sup>8</sup> *Die geologische natur des armenischen Hochlandes: Fest–Rede am 22 August. dem Krönning Ihrer Kaiserlichen Majestäten Nikolai Pawlowitsch und Alexandra Feodorova von Dr Hermann Abich*. Dorpat, 1843, էջ 43–44.
- <sup>9</sup> Abich, Herrmann. *Ein Ciclus fundamentaler barometrischer Höhenbestimmungen auf der armenischen Hochlands*. St Petersburg Academy of Sciences, 1880.
- <sup>10</sup> Wagner, Moritz. *Reise nach dem Ararat und dem Hochland Armenien, 1848*. Saarbrucken: Fines Mundi, 2013. Reprint.
- <sup>11</sup> Hurriet [Liberty] *Encyclopedia Yearbook*: Istanbul, 1974, 323.
- <sup>12</sup> Özfirat, Aynur. “Eastern Anatolia Plate Cultures: 2nd millennium BC”. *Archaeology and Art Publications*, 2001, 13.
- <sup>13</sup> West, Barbara A., *Encyclopedia of the Peoples of Asia and Oceania*. New York: Infobase Publishing, 2009, էջ 47:
- <sup>14</sup> Ռուս պատմաբան Վ. Ա. Զախարովը հայտարարեց, որ 2010–ականներին Մոսկվայի Ադրբեջանի դեսպանությունն իրեն առաջարկել է ամսական 1000 դոլար, որպեսզի նա հայամետ հոդվածներ չհրատարակի:

## 6. ԻՆՉ ԵՎ ՈՐՆ Է ԱՆԱՏՈՒԻԱՆ

Անատոլիա անվանումն ունի հետաքրքրական պատմություն: Երբ Հոտմեական կայսրությունը բաժանվեց երկու՝ Արևելյան և Արևմտյան մասերի, նրա արևելյան մասն անվանվեց Բյուզանդիոն կամ Բյուզանդական կայսրություն, որն իշխում էր Ասիա և Եվրոպա մայրցամաքների միացման շրջանի տարածքներում: Ասիական մասը ընդգրկում էր Փոքր Ասիա թերակղզին, որը երեք կողմից շրջապատված է ծովերով, հյուսիսում՝ Սև ծովը, արևմուտքում՝ Էգեյան ծովը և նրան հարակից ջրային տարածքները, իսկ հարավում՝ Միջերկրականը, ինչը կարելի է տեսնել 6.1 քարտեզում:

Երկրի մայրաքաղաքը Կոստանդին կայսեր պատվին 330 թ. անվանվեց Կոստանդնուպոլիս, որը նա հիմնադրել էր Մարմարա ծովի և Բոսֆորի նեղուցի ափերին: Օսմանյան կայսրության անկումից հետո քաղաքը վերակոչվեց Ստամբուլ: Այս անվան մեկ վարկածը, որն ամենատրամաբանականն է, այն է, որ անունը հիմնված է հունարեն «իս թին պոլի» (դեպի քաղաք) տերմինի խեղաթյուրված տարբերակի վրա: Մայրաքաղաքից դեպի արևելք էր կայսրության հսկայական տարածքը, որը նրանք կոչեցին «Արևելք», հունարեն՝ «Անատոլիա»: Այսպիսով՝ Կոստանդնուպոլիսից արևելք ընկած երկրամասը կոչվեց «Անատոլիա», այսինքն՝ արևելյան երկրամաս:



6.1. Փոքր Ասիայի և Անատոլիայի սահմանի քարտեզը, 19-րդ դար, Բրիտանիա: Դրանից արևելք է տեղակայված Հայաստանը՝ ARMENIA-ն: Այստեղ նշված են Փոքր Ասիայի տարբեր հնագույն երկիր/իշխանություններ:

Ըստ Բյուզանդիոնի կայսր Կոստանդին Ծիրանածնի (905–959 թթ.)՝ Բյուզանդիոնից արևելք էին մի քանի երկրամասեր, որոնցից էին առաջինը՝ Անատոլիկոնի թեմատան, երկրորդը՝ Արմենիակոնի թեմատան, ապա Խաղիայի և Կապադովկիայի թեմատանները և այլն՝: Այսպիսով, ըստ կայսեր, Անատոլիան կայսրությանը կից շրջանն էր, որին արևելքում հետևում էին Արմենիա–Հայաստանը և մյուս շրջանները:

Մինչև 19–րդ դ. վերջերը Օսմանյան կայսրության մեջ հրատարակված բոլոր քարտեզներում «Անատոլիա» անվանումը կարելի էր տեսնել Փոքր Ասիա թերակղզու վրա, որի սահմանները նշված են 6.2 քարտեզում: Սրա սահմաններն են երեք կողմից ջրային տարածքները, իսկ արևելքում՝ Ալեքսանդրեստայից՝ ներկայիս Իսկենդերունից, անցնելով Մարաշի, Մալաթիայի, Երզնկայի, Բայբուրթի վրայով դեպի Սև ծովի ափերը՝ Հոպա և Բաթումի քաղաքները: Ներկա Թուրքիայի արևելյան մնացած տարածքը Հայկական բարձրավանդակն է, որտեղ տեղադրված էր պատմական կամ Մեծ Հայքը: Թերակղզու այս սահմանն անցնում է Եփրատի արևմտյան ափերով:

Այսպիսով՝ նախքան 1920–ականների անվանափոխումը «Անատոլիա» կամ «Փոքր Ասիա» թերակղզին նույնն էին, որոնք սահմանափակվում էին թերակղզով, և որոնցից արևելք էր «Հայկական բարձրավանդակը»: Այսպիսով՝ Անատոլիա անվանվող երկրամասը տարածվում է ներկա Թուրքիայի հողի մոտ 70 տոկոսի վրա և ոչ՝ ամբողջի:



6.2. Ներկա Թուրքիայի տեղագրական քարտեզը՝ իր բաժանումներով:

6.2 քարտեզը ցույց է տալիս շրջանի տեղագրությունը, որտեղ Անատոլիան նույն Փոքր Ասիան է, իսկ դրանից արևելք ընկած տարածքը Հայկական բարձրավանդակը կամ Հայկական լեռնաշխարհն է:

Եթե նայենք մինչև 1923 թ. հրատարակված օսմանյան քարտեզներին, ապա բոլոր քարտեզներում էլ Անատոլիան միայն նշված է որպես Փոքր Ասիա թերակղզու տարածքը մինչև Եփրատ գետը: Այս անվանումը կարող էր նաև տեսնել 6.3 և 6.4 և այլ օսմանական քարտեզներում՝ հրատարակված նախքան 20–րդ դ.:




6.3. Քյաթիբ Չելեբիի Իչի, Քարաման, Անատոլիա և Սիվաս վիլայեթների քարտեզը, նրա Ջահան Նյումա աշխատության առաջին՝ 1732 թ. տպագրությունից, պատրաստողն է Իբրահիմ Մուլթեֆերրիկան: Քարտեզում հարավը վերևում է:

Քյաթիբ Չելեբին (1609–1657 թթ.) օսմանյան առաջին լուրջ քարտեզագետն էր, բայց նրա կարևորը՝ «Ջահան Նյումա (Աշխարհացույց)» աշխատությունը մնաց անավարտ: Նա ճամփորդել էր Արևելք և տեսած երկրների մասին շարադրել իր աշխատության մեջ, նրանց մեջ նաև գծել և տեղադրել քարտեզներ, որոնցից մի մասն անավարտ մնացին: Նրա աշխատության գլուխներից երկուսը Հայաստանի մասին են, որտեղ նա տալիս է պատմական և աշխարհագրական տեղեկություններ հայերի ու Հայաստանի մասին՝ սկսած Հայկ նահապետից ու Արմենակից մինչև իր օրերը:

Նրա այս աշխատությունը առաջին գրքերից էր, որը տպագրվեց կայսրության նոր՝ 1732 թ. Պոլսում հիմնադրված տպարանում՝ կրոնափոխ հունգարացի Իբրահիմ Մուլթեֆերրիկայի նախաձեռնությամբ:

Քարտեզն անվանված է «Իչի, Քարաման, Անատոլիա և Սիվաս վիլայեթները», իսկ պատկերված տարածաշրջանը Փոքր Ասիա թերակղզին է: Այսպիսով՝ ըստ Չելեբիի տված տեղեկության՝ փաստվում է, որ «Անատոլիան» թերակղզու վիլայեթներից միայն մեկն էր, որը «Սիվասից (Կեսարիայից) դեպի արևմուտք էր:



6.4. Մահմուդ Ռաիֆի Օսմանյան կայսրության ափսկան մասը, Ուշքուդար, Թուրքիա, 1803–1804 թթ.:

6.4 քարտեզում Օսմանյան կայսրության Փոքր Ասիա թերակղզու անունը նշված է որպես Անատոլիա, որն առանձնացված է կապույտ գծով և տարածվում է մոտավորապես մինչև Եփրատի արևմտյան ափերը, ինչը նաև ցուցադրված է 6.2 քարտեզում: Սրանից արևելք ընկած տարածքում է Հայկական բարձրավանդակը, այսինքն՝ Մեծ Հայքի տարածքը, որի հյուսիսային հարևանն է Վրաստանը, իսկ Ատրպատական կամ պարսկական Ադրբեջան նահանգը նրանից արևելք է: Դրանից հարավ են Քուրդստանը և Միջագետքը: Քարտեզի գույները ներկայացնում են օսմանյան վիլայեթների սահմանները:

Ռաիֆի նույն ատլասի մեջ առկա է նաև մեկ այլ՝ ամբողջ Օսմանյան կայսրության, ինչպես նաև Սև ծովի քարտեզները, որոնց վրա նույնպես նշված են Հայաստանը և Անատոլիան ու օսմանական այլ երկրամասերի/վիլայեթների սահմանները:

خريطة الجزير

بين الدولتين العثمانية والروسية سنة ١٨٧٧ - ١٨٧٨  
مرسمت للجوانب



6.5. Ռուս-թուրքական պատերազմական քարտեզ, Օսմանյան Ռազմական նախարարություն, 1877 թ.:

Քարտեզ 6.5-ը ցույց է տալիս ամբողջ Օսմանյան կայսրությունը, ներառյալ եվրոպական ու ասիական շրջանները: Քարտեզում Փոքր Ասիա թերակղզու տարածքը անվանված է «Անատոլիա»: Իրանից արևելք ընկած շրջանը, որը մեծ մասամբ հայերով էր բնակեցված, անվանված է «Արմենիա-Հայաստան», իսկ սրանից հարավ տարածքն անվանված է «Քուրդստան»: Իրանցից արևելք է պարսկական «Ադրբեջան» կամ Ատրպատական նահանգը:

Ըստ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի երկիրը միատարր էր և բնակեցված էր թուրքերով, հետևաբար հայտարարածն իրականացնելու համար «Հայաստան» կամ «հայ» անուններն իրենց երկրից պետք է վերացվեին: Օգտվելով Առաջին

համաշխարհային պատերազմի առկայության առիթից՝ 1915–1923 թթ. Օսմանյան տերությունը երկիրը բնիկ հայերից մաքրագարդելուց հետո պետք է նաև հաներ «Հայաստան» և «հայ» անվանումները: Իսկ դրա համար անհրաժեշտ էր համաշխարհային պատերազմից հետո ստեղծված նոր հանրապետության ամբողջ տարածքը, սկսած Հունաստանից մինչև Իրան և Կովկասը, կոչել հայերի հետ բնավ կապ չունեցող մի աշխարհագրական անունով: Սկզբնական շրջանում Անատոլիայից արևելք ընկած տարածքը սկսեցին կոչել «Դողու–Անադոլու»: «Դողու» թուրքերեն նշանակում է արևելք, իսկ «Անատոլիան» նույնպես նշանակում է արևելք, բայց այս անգամ՝ հունարենով: Հետևաբար Թուրքիայի արևելյան մասի անունը դառնում էր «Արևելյան արևելք»: Այս անհարիր լուծումը կարճ ժամանակ անց բարելավվեց, երբ Թուրքիայի Հանրապետության ամբողջ տարածքը այս անգամ սկսեցին կոչել «Անատոլիա կամ Անադոլու» անունով, անկախ նրանից, որ սկսած վաղ միջնադարից՝ այդ անունը նույնիսկ օսմանյան քարտեզներում տրված է եղել միայն Փոքր Ասիա թերակղզու տարածքին:

Այս բոլորը կատարվել է՝ ծառայելու միայն մեկ նպատակի. վերացնել «Հայկական» որևէ անուն Թուրքիայի արևելյան շրջաններից: Այսպիսով՝ նոր ընդունված «Անատոլիա» անունը քողարկում է «Հայկական բարձրավանդակ» կամ «լեռնաշխարհ» անունը՝ իր մեջ ներառելով բարձրավանդակի ու լեռնաշխարհի, այսինքն՝ Մեծ Հայքի ամբողջ տարածքը:

Բազմաթիվ հայ և օտար պատմաբաններ Թուրքիայի լարած այս թակարդի մեջ են հայտնվում, երբ գրում կամ խոսում են Հայկական բարձրավանդակում տեղակայված Մեծ Հայքի մասին՝ նրա տեղը նշելով «արևելյան Անատոլիայում», այսպիսով համաձայնվելով թուրք մասնագետների տված այլ կեղծ անվանմանը: Իրականությունն այն է, որ Մեծ Հայքը ոչ թե արևելյան Անատոլիայում է, այլ Անատոլիայից արևելք եղած տարածքում:



6.6. Կիպերտի Ասիական Թուրքիայի քարտեզի մասը, 1844 թ., դրա բնագրից: Քարտեզում Փոքր Ասիան անվանված է Անադոլիա՝ ընդգծված կարմիր, իսկ Հայկական լեռնաշխարհի վրա գրված է Արևելիս–Հայաստան՝ ընդգծված կապույտ:

1840–1850–ական թվականներին գերմանացի քարտեզագետ Հայնրիխ Կիպերտը երկար ժամանակ է անցկացրել Փոքր Ասիայում, Միջին Արևելքում և Կովկասում, որտեղ նա պատրաստել է տարածաշրջանի վերաբերյալ բազմաթիվ մանրակրկիտ և ճշգրիտ քարտեզների շարք: Նրա քարտեզների անվանումներն են՝ «Թյուրքական կայսրություն», «Ասիական Թուրքիա», «Թուրքիան Ասիայում» և նման անվանումներ, որոնցից ոչ մեկում Թուրքիայի արևելյան մասը «Անատոլիա» չի անվանված (տե՛ս 6.6 քարտեզը): Այս քարտեզում վերոնշյալ անվանումները շատ պարզ են: Կարմիրով ընդգծված է «Անատոլիան»՝ Փոքր Ասիան. սա Թուրքիայի արևմտյան մասն է, իսկ արևելյան մասը այստեղ անվանված է «Հայաստան», որը տարածվում է Եփրատից Սևան:

Կիպերտի քարտեզներից շատերը թարգմանվել և հրատարակվել են օսմանական թուրքերենով՝ գրված արաբատառ, իսկ թարգմանված քարտեզներից մի մասում «Թուրքիա» բառը փոխվել է «Անատոլիա» անվանմամբ՝ այսպիսով օրինականացնելով և նույնիսկ Կիպերտին վերագրելով այս անվանափոխումը:

Տեղանունների փոփոխությունները մեզ՝ հայերիս համար նորություն չեն: Ինչքան իշխող քաղաքական ռեժիմներն ավելի շատ թաքցնելիք և ոչ ցանկալի պատմական անցյալ ունեն, այնքան հաճախակի են կատարվում նրանց անվանափոխումները: ԽՍՀՄ-ում կոմունիզմի ամրապնդումից հետո դրանք դարձան առօրյայի մասը: Սանկտ Պետերբուրգը դարձավ Լեոնինգրադ, Յարիցինը՝ Ստալինգրադ և այլն: Հսկայական երկրի ամենախույս անկյուններից ոչ մեկը զերծ չմնաց կոմունիստ ղեկավարների անունները վայելելու պատվից: Սրանք բոլորը անցյալը մոռանալու և ջնջելու միջոցներ են:

Նման երևույթը հաճախ տեսանելի է Օսմանյան կայսրությունում ու դրա ժառանգորդ Թուրքիայում: Այստեղ անվանափոխումներն ավելի հաճախակի ու համատարած էին այնպես, որ Թուրքիայի քաղաքների ու գյուղերի տարբեր անուններ նշող աշխատություններում հաճախ կարելի է տեսնել մեկ գյուղի առջև գրված հինգից յոթ անուն, որոնք փոփոխվել են վերջին 150 տարիների ընթացքում: Ամեն մի կոտորած իր հետքը ջնջելու համար բերում էր անվանափոխումների մի նոր շարան:

Տեղանունների փոփոխությունները Թուրքիայում այնքան ընդհանրացված են, որ դրանց ծավալուն ցուցակը, որը կազմել է հայագգի Սևան Նշանյանը, շուրջ 550 էջ է: Աշխատության մեջ ներառված են տեղանունների հերթական փոփոխությունները, որոնց մեջ մեծ մաս են կազմում հայկական տեղանունները և նրանց նոր անվանումները<sup>2</sup>:

1920–ական թվականներից Թուրքիայի քարտեզներում սկսեց երևան գալ «Անատոլիա» անվանումը, որը տրվում էր Թուրքիայի ամբողջ տարածքին՝ նպատակ ունենալով աստիճանաբար երկրի արևելյան մասից ընդհանրապես հանել «Հայաստան» ու «Քուրդիստան» անվանումները, ինչպես նաև «Հայկական բարձրավանդակ» կամ «Հայկական լեռնաշխարհ» տեղանունները և դրանք բոլորը ներառել համապարփակ «Անատոլիա» անվան մեջ: Այս նպատակին հասնելում հույժ և հիմնական դեր ունեցավ թուրքական այբուբենի փոփոխությունը արաբերենից լատիներենի: Երկրի բնակչությունը, եթե նույնիսկ գրագետ էր, մեկ սերունդ հետո այլևս չէր կարողանալու կարդալ հին գիրը և անդրադառնալ քարտեզներում, ինչպես նաև

ամենուր կատարված անվանափոխումների իսկությունը: Քաղաքական այս կանխածրագրված գրի փոփոխության գործունը պարտադրեց տառադարձել ամբողջ պատմական, աշխարհագրական և մշակութային ժառանգության գրականությունը՝ այս գործողության ընթացքում դրանք վերափոխելով ու անվանափոխելով, տեղանունները դարձնելով երկրի ղեկավարի քաղաքականությանը համահունչ և սատարող, որոնց հույժ կարիքն ուներ նորաստեղծ հանրապետությունը՝ փաստելու իր միատարր թուրք լինելու թիրախային տեսությունը:

Պետք է նշել, որ աշխարհագրական և տեղագրական տեղանունները, ինչպիսիք են գետերի, ծովերի, լեռների և այլ անուններ, ընդհանրապես թարգմանության ընթացքում մնում են անփոփոխ: Այս ասպարեզի որևէ փոփոխություն ընդհանրապես ունի քաղաքական և ռազմավարական դրդապատճառ և նպատակ: Տեղանունների փոփոխությունների ավելի հաճախ ենք հանդիպում քաղաքների և գյուղերի, երբեմն էլ՝ կղզիների անվանումներում, որոնք նույնպես կատարվում են երկրի ղեկավարության ու համակարգի հիմնական փոփոխությունների արդյունքում:

Որպես օրինակ կարելի է նշել Սիբիրը, որը, չնայած անվան բացասական ընկալմանը, մնացել է անփոփոխ ցարական, խորհրդային և անկախ Ռուսաստանում: Կորեաները, որոնք այժմ հակադիր ռեժիմների երկրներ են, պահպանել են իրենց անունը: Սակայն Թուրքիայում այս փոփոխության պատճառն ուներ շատ ավելի հետին նպատակներ, այն է՝ ջնջել բնիկ ժողովրդի անունը և հետքը նրանց պատմական և հայրենի հողից, որի հանդեպ անտարբեր մնացին միջազգային կազմակերպությունները: Թուրքիայի առաջին Աշխարհագրական կոնֆրենսը 1941 թ. ստեղծեց երկու նոր երկրամաս, որոնք էին Արևելյան Անատոլիան և Հարավարևելյան Անատոլիան, որոնք համընկնում էին մինչ այդ նույն Թուրքիայի քարտեզներում նշված Հայաստանի և Քուրդստանի երկրամասերին<sup>3</sup>:

Հայերին վերաբերող անունների վերացման գործն այնքան ծայրահեղության հասավ, որ նույնիսկ բնագիտական կամ կենդանաբանական գիտական լատիներեն եզրովթարանությունը դրանից զերծ չմնաց: 2005 թ. Թուրքիայի գիտնականները և մասնագետները սկսեցին փոխել բույսերի ու կենդանիների այն անունները, որոնք իրենց լատիներեն անվան մեջ պարունակում էին «հայ» կամ «հայկական» բառը: Թուրքիայի բնապահպանման նախարարության մի պաշտոնյա հայտարարեց, թե հնում եղած անվանումների մի մասը հակասում է Թուրքիայի միատարր երկիր լինելուն: Ըստ Ռոյտեր գործակալության՝ պաշտոնյան ասել է.

Դժբախտաբար, Թուրքիայում առկա են անվանումներ, որոնք միտումնավոր դրված են այլ նպատակներով: Մեր տարածքում գոյություն ունեցող այս միտումնավոր թյուրանվանումները կասկածի տակ են դնում մեր միատարր թուրք լինելու փաստը<sup>4</sup>:

Որոշ թուրք պաշտոնյաներ պնդում են, որ ներկա անվանումները գործածվում են հիմնականում փաստելու, թե իբր քրդերը կամ հայերն ապրել են Թուրքիայի այս տարածքներում, որը, ըստ նրանց, իրականությունը չի համապատասխանում: Բայց իրականությունն այն է, որ կենդանիների այս տեսակները 100 տարի առաջ բնակվում էին այդ տարածքներում, երբ շրջանները դեռևս հայաբնակ կամ քուրդաբնակ էին: Դրանց անվանում տվող բնագետները կենդանիների անվանումները դրել են՝ հիմքում ունենալով նաև տեղաբնակ ցեղերի անուն-

*ները, որոնք կենդանիների հետ համատեղ բնակվում էին նույն տարածաշրջաններում: Այս անվանումներից մի քանիսը հետևյալն են.*

- *Օվիս արմենիակա կոչված վայրի ոչխարն այժմ Թուրքիայում անվանվում է Օվիս օրիենտալիս անատոլիկուս<sup>5</sup>:*
- *Կոպրեոլուս կոպրեոլուս արմենուս այժմա՞ի տեսակը անվանափոխվել է՝ դառնալով Կոպրեոլուս կոպրեոլուս կոպրեոլուս<sup>6</sup>:*
- *Վուլպես վուլպես քուրդիտանիկա կարմրավուն աղվեսը դարձել է պարզապես Վուլպես վուլպես:*

*Այսպես նաև ուրիշ անվանումներ:*

*Քաղաքական նպատակներն ու ծրագրերն իրականացնելու ընթացքում «հայ» և «հայկականությանը» վերաբերող անունները Թուրքիայի տարածքից ամբողջովին վերացնելու և դրան ուղղակի շաղկապվող վախի զգացումը ստեղծել են մի այնպիսի էյֆորիա, որ բացի աշխարհագրական տեղանունների մաքրելուց ու անվանափոխելուց, հասել են մինչև անգամ կենդանիների ու բույսերի գիտական՝ լատիներեն անվանումներին:*

## Գլուխ 6–ի ծանոթագրություններ

---

- <sup>1</sup> Emperor Constantine VII Porphyrogenitus compiled his book *De Thematibus*, 1588. Liber 1.
- <sup>2</sup> Nişanyan, Sevan. *Adini unutan ülke. Türkiye’de Değiştirilin Yerler Sözlüğü (Անունը մոռացած երկիրը. Տեղանունների փոփոխությունները թյուրքական բառարանում)*. Istanbul: Everest, 2010.
- <sup>3</sup> Տես Վիքիպեդիա <https://en.wikipedia.org/wiki/Anatolia>.
- <sup>4</sup> Ռոյտեր գարծակալության զեկույցը *Թուրքիան վերանվանում է օտար կենդանիներին*: Մարտի 4, 2005 թ. 4:34 Գրինվիչի ժամանակով, Անկարա:
- <sup>5</sup> Այս անվանափոխումները արվում են, որպեսզի *հայկական* անվանումը փոխվի և դառնա *արևելյան անատոլիական*: Այս կենդանիները հայտնաբերվել են Հայկական բարձրավանդակում, և դրա համար էլ նրանց տրվել է *Արմենիկա* անվանումը: Հայկական բարձրավանդակը Անատոլիայում չէ, սակայն կենդանու անունն այսպիսով կապվում է Անատոլիայի հետ:
- <sup>6</sup> Տես նաև <http://hyeforum.com/index.php?showtopic=10976>, մարտի 4, 2005 թ.:

## 7. «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ», «ՀԱՐԱՎԱՅԻՆ» ԵՎ «ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆ» ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

Աղբբեջանի պատմաբանների ու գիտնականների նպատակն է փաստել, որ «Հարավային Աղբբեջան», «Հյուսիսային Աղբբեջան» և «Արևմտյան Աղբբեջան» երկրամասերն ու անվանումները ունեն դարերից եկած պատմական անցյալ: Այս կեղծ և շինծու անվանումները ավելի քան 50 տարի է, ինչ գործածում են առաջին հերթին Պարսկաստանի Աղբբեջան-Ատրպատական նահանգին տիրանալու, իսկ վերջին 25 տարին էլ՝ նաև Հայաստանի տարածքին տիրանալու ընդհանուր ծրագրի դեպքում: Աղբբեջանի անկախությունից հետո «Հյուսիսային» և «Հարավային Աղբբեջան» անվանումներն արդեն դարձել են մշտական գործածության առարկա, այնքան հաճախ, որ բանից անտեղյակ անձինք դրանք սկսել են ընդունել որպես իրականություն: Այսպիսով՝ նրանց քարոզչությունն արդեն մասնակի հասել է իր նպատակին, քանի որ տեղաբնակ, հատկապես երիտասարդ սերունդը այլ տեղեկությունների բացակայության պատճառով սկսել է դրանց ամբողջովին հավատալ:

Տեղացի որոշ պատմաբանների տեսությամբ այս տերմինները սկսեցին գործածվել Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի ստորագրումից հետո, երբ Արաքսից հյուսիս ընկած՝ 2 դար առաջ Իրանի գրաված տարածքները հանձնվեցին Ռուսական կայսրությանը: Նրանք պնդում են, որ այսպիսով միատեղված Աղբբեջանը բաժանվեց երկու՝ «Հյուսիսային» և «Հարավային» մասերի՝ ամբողջովին մոռացության տալով, որ այդ տարածքներն ուրիշին են պատկանում և ոչ՝ նորաստեղծ Աղբբեջանի Հանրապետությանը<sup>1</sup>:

Սակայն Զիա Բունիաթովը (Զիյա Բունիադով, 1923–1997 թթ.) ներկայացրեց մեկ այլ տեսություն և, որով նա պնդում է, թե այս տերմինները ոչ թե 100, այլ 1500 տարվա անցյալ ունեն: Նա գրում է.

Ըստ պատմական քարտեզների հավաքածուների՝ «Աղբբեջան» հասկացությունը իրավասու է կիրառելու Հյուսիսային և Հարավային Աղբբեջանի տարածքների նկատմամբ սկսած մ. թ. VI դարից: Մ. թ. VI դարում Սասանյան արքա Խոսրով Անուշիրվանը ստեղծեց Կովկասյան [երկրների] խումբը (կուստր), որը կոչվում էր Աբդուլբադահան, համաձայն արաբա-պարսկական ավանդույթի՝ Աղբբեջանը, որի մեջ, ի թիվս այլ երկրների, մտնում էին Հյուսիսային Աղբբեջանը՝ Աղվանքը, և Հարավային Աղբբեջանը՝ բուն Ատրպատականը: Համաձայն արաբական և պարսկական աղբբյուրների՝ Խալիֆայության փուլից և հետագայում, այսինքն՝ VIII դարից Աղբբեջան ասելով՝ հասկանում էին միաժամանակ և Հյուսիսային, և Հարավային Աղբբեջանները: Աղբբեջանը դառնում է քաղաքավարչական, աշխարհագրական կամ էլ քաղաքական հասկացություն<sup>2</sup>:

Բունիաթովի այս պարբերության մեջ առկա են արտաքուստ շատ պարզ, բայց նպատակասլաց և միտումնավոր ապատեղեկատվություններ:

1. Հնագույն պապիրոսը, որի վրա առկա է առաջին արաբերեն տեքստը, թվագրվում է 7-րդ դարի կեսերից՝ իսլամը կազմավորվելու տարիներից, իսկ առաջին աշխարհագրական նյութը, որը մեզ է հասել արաբական աղբյուրներից, 9-րդ դարից է: Այսպիսով՝ Բունիաթովի՝ առանց հղումների հիշատակած աղբյուրն ընդհանրապես անհայտ է և հավանաբար պատկանում է իր՝ Բունիաթովի գրչին, ուստի ամբողջովին անհիմն է ու անվստահելի:
2. Նա միտումնավոր խեղաթյուրել է «Ատորպատեն» կամ «Ատրոպատեն» անունը՝ դարձնելով արաբերենին նմանվող «Աբդուլբադահան» անվամբ, որին ոչ ոք ծանոթ չէ, փոխարենը Արաքսի հարավային ափի «Ատրպատական» նահանգը բոլորին քաջածանոթ է որպես Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգը:
3. 9-րդ դ. հետո մեզ հասած իսլամական աշխարհագրական աշխատություններում, ինչպիսին են Բավխիի, Իսթախրիի, Մողադդասիի, Իբն-Հաուքալի, Իգրիսիի, Մոսթոուֆիի, Ղազվինիի և ուրիշների քարտեզներում, Արաքսից և Կուրից հյուսիս տարածքը միշտ կոչվել է Առան-Աղվանք, որը նույն կովկասյան Ալբանիան է: Դրանից հարավ՝ Արաքսի մյուս ափին է Ադրբեջանը, իսկ Հայաստանը դրանց միջև է տեղադրված: Միջնադարյան որևէ քարտեզում Հյուսիսային և Հարավային Ադրբեջան կամ նման անվանումներ գոյություն չունեն: Սրանց վկաներն են աշխատությանս «Գլուխ 1»-ի իսլամական քարտեզներ 1.3-ը և 1.4-ը<sup>3</sup>:
4. Սակայն Բունիաթովը որպես «փաստ» պատրաստել է մի առկա<sup>4</sup>, որից հանված երկու քարտեզը արտատպված են 7.1 և 7.2 պատկերներում: Սրանք ամբողջովին գծված են ըստ Բունիաթովի անհիմն և կեղծ տեսությունների, որտեղ նա Ադրբեջանը ձգում ու դարձնում է հյուսիսում Դերբենդից, հարավում՝ մինչև Իրանի Համադան և Ղազվին քաղաքները՝ ամբողջ տարածքից վերացնելով Իրանի, Վրաստանի և Հայաստանի անվանումները:

Լինելով պատմաբան՝ Բունիաթովն անպայման մոտիկից ծանոթ էր իսլամական պատմական և աշխարհագրական նյութերին, այդ իսկ պատճառով նրա խեղաթյուրումներն ու հորինումները տվյալ գիտնականի և հատկապես Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահի համար աններելի են: Այսպիսով պարզ է, որ այդ բոլոր կեղծիքներն ու խեղաթյուրումները կատարվել են միայն քաղաքական նպատակներ և իշխանավորների պատվերները կատարելու և նրանց գոհացնելու նպատակով:


Բունիաթովն ու նրա հավատարիմ ուսանող Ֆարիդա Մամեդովան պնդում են, որ սկսած մ.թ.ա. 1-ին դարից մինչև 8-րդ դարը Աղվանքի տարածքն անփոփոխ էր ու պարունակում էր ներկա Ադրբեջանի Հանրապետությունը, Սյունիքի, Սևանի, Երևանի, Էջմիածնի, Նախիջևանի, Գաբալայի (Կոտկաշեն), Շաքիի, Գուգարքի, ինչպես նաև Իրանի հյուսիսարևմտյան՝ Ատրպատական շրջանները և նահանգները<sup>5</sup>: Բաքվում 2001 թ. կայացած «Կով-

կասյան Ալբանիայի [Աղվանքի] ազգագրական ու մշակութային ժառանգությունը» կոչված համագումարում Մամեդովան այս շրջանի տարիքը երկարաձեց՝ դրա սկիզբը հասցնելով մինչև մ.թ.ա. երրորդ դարը<sup>6</sup>: Այստեղ նրա հղումները նույնպես կատարված էին միայն իր ու Բունիաթովի զծած քարտեզներին, քանի որ այլ քարտեզներում նման տեղեկություններ հնարավոր չէ գտնել:

7.1 և 7.2 քարտեզները, վերցված «Ադրբեջանի պատմական քարտեզները» գրքից, ցուցադրում են Ադրբեջանի պատկերացրած՝ իրենց երկրի տարածքը 7–13-րդ դդ.: 7.1 քարտեզում Ադրբեջանի ու Առանի տարածքը շրջապատված է նարնջագույն զծով, երկու երկրամասին տալով տարբեր անվանումներ, սակայն Կուրից հյուսիս տարածքը նաև անվանված է Շիրվան, որը մի նոր երկրամասի և ավելի ծանոթ անուն է:



7.1. Աղվանքն ու Ադրբեջանը Արաբական խալիֆայության մեջ, 7–13-րդ դդ.: Ադրբեջանի պատմական քարտեզները ատլասից, 1994 թ.:



7.2. Ադրբեջանը 9-րդ դարում, Ադրբեջանի պատմական քարտեզները ատլասից, 1994 թ.:

Քարտեզ 7.2-ում 7.1-ի ամբողջ նույն տարածքն անվանված է Ադրբեջան, ներառյալ մյուս քարտեզում նշված Առան շրջանը: Քարտեզում նարնջագույն գծված Ադրբեջանի սահմանը Դերբենդից հասնում է Համադան և Ղազվին:

Երկու քարտեզներում առկա են հակասություններ, մեկում Առանն ու Ադրբեջանը նշված են որպես երկու առանձին երկիր, իսկ մյուսում առկա է միայն Ադրբեջանը, որը գրավում է Ադրբեջանի և Շիրվանի ամբողջ տարածքը: Սա ադրբեջանական քարոզչությանը հակասում է, քանի որ, ըստ նրանց, Առանն իրենց հնագույն հայրենիքն է համարվում, որը, սակայն, 7.1 քարտեզում Ադրբեջանից առանձին ցուցադրված է որպես ուրիշ երկրամաս: Իսկ մյուս քարտեզում Առանը ներառված է Ադրբեջանի կազմում: Սրանցից որին պետք է հավատալ:

Ադրբեջանցի ակադեմիկոս Իզրար Ալին Ալիևն իր կարևորագույն աշխատության մեջ հաճախակի նշում է «Հարավային և Հյուսիսային Ադրբեջաններ» անունները՝ այսպիսով ընթերցողին աստիճանաբար համոզելով, որ այդ անվանումները հավաստի են, պատմական և իրական<sup>7</sup>: Նա աշխատում է նաև փաստել, որ Ադրբեջանի Հանրապետության ժողովուրդը մարեր են և նույն պարսկական Ատրպատականի ազգերն են: Նա ընդունում է, որ ըստ իսլամական գրականության՝ պարսկական Հարավային Ադրբեջան-Ատրպատականում միջնադարում խոսակցական լեզուն պահլավերենն էր, որը պարսկերենի ենթաբաժանումներից ու ազերի լեզուն էր: Նաև հաստատում է՝ ասելով, որ Մաս'ուդին նշում է, որ Հարավային Ադրբեջանի լեզուն ազերի էր: Այստեղ կարևոր է հիշել, որ Մաս'ուդիի գրած նախադասության մեջ նա ավելացրել է խնդրո առարկա մեկ բառ՝ «Հարավային» բառը, որը տեքստի բնագրում բացակայում է<sup>8</sup>:

Սրանցով չբավարարվելով՝ նա շարունակում է՝ գրելով. Արաբ աշխարհագրագետներ Իբն-Հաուքալը, Յաղութ ալ-Համաուին և Բալադիորին համաձայն են իր այս առաջադրանքին<sup>9</sup>, հակառակ այն պարագային, որ նշված հեղինակների աշխատություններում որևէ տեղ «Հարավային» կամ «Հյուսիսային Ադրբեջան» անվանումը նշված չէ: Ահա սա էլ մեկ այլ ադրբեջանցի ակադեմիկոսի իրականությունը կեղծելու գործածած միջոցը:

Հեղինակի «Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները» աշխատանքի Հավելվածում ներկայացված են 50-ից ավելի հնագույնից մինչև 1918 թ. քարտեզներ, որոնցում Արաքսից հյուսիս տարածքում Ադրբեջան անունով երկիր ցուցադրված չէ: Սրանցում առկա են 10-13-րդ դդ. գծված տարածքի իսլամական քարտեզներ, որոնցում տեսանելի են Առան-Աղվանքը՝ տեղադրված Արաքսից և Կուրից հյուսիս, պարսկական Ադրբեջան-Ատրպատականը՝ տեղադրված Արաքսից հարավ՝ տարածվելով մինչև Ուրմիո լճի հարավը և Հայաստանը, տեղակայված Արաքսի երկու ափերի վրա, փաստելով քարտեզների վրա դրանց համեմատական տեղադրումը: Սրանցից ոչ մեկի վրա չկա «Հարավային», «Հյուսիսային» կամ «Արևմտյան Ադրբեջան» անվանումը, որոնք շուրջաբար գործածում են ներկա Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն ու գիտական աշխարհը: Արաքսից հյուսիս Ադրբեջանի Հանրապետության գոյությունը անհնար է տեսնել նախքան 1918 թ. գծված որևէ քարտեզում:

Ջարմանալի է, որ մեծ թվով արևմտյան գիտնականներ և մասնագետներ ընկել են հիմնականում Աթաթուրքի ստեղծած և տարածած այս ծուղակը՝ ընդօրինակելով նրա և նրա

նմանների առաջադրած անվանումներն ու հորինված տեսությունները, ինչպիսիք են, օրինակ՝ Բունիաթովը, ում հորինած տեսություններին նույնիսկ հղումներ են կատարում որոշ արևմտյան պատմաբաններ: Սրանցից մեկն է ԱՄՆ Մասսաչուսեթսի Ամհերստ համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Օդրի Ալթշտադը, ով իր աշխատանքներում գործածում է Բունիաթովի հորինած Արևելյան և Արևմտյան Ադրբեջանների տեսությունը և նրանց գոյությունը՝ սկսած մ.թ.ա. 6-րդ դարից: Ալթշտադը գրում է հետևյալը.

Ադրբեջան անվանումը Արևելյան և Արևմտյան Ադրբեջանների առումով ճշգրիտ գործածություն է ունեցել սկսած մ.թ.ա. 6-րդ դարից ... արաբական և պարսկական աղբյուրներում... սկսած 8-րդ դարից Ադրբեջան անվանումը ներկայացնում էր Արևելյան և Արևմտյան Ադրբեջանները<sup>10</sup>:

Որպես պատմաբան, հատկապես 1980 թվականից աշխատելով Ադրբեջանի Հանրապետության արխիվներում՝ նա պետք է տեղյակ լիներ, որ նախքան 8-րդ դարը աշխարհագրական որևէ արաբերեն աշխատություն գոյություն չունի, և հատկապես, որ մ.թ.ա 6-րդ դարում Ադրբեջան անունն ընդհանրապես գոյություն չի ունեցել: Այս ամենը կեղծել և ներկայացրել է Բունիաթովը, և աններելի է, որ Ալթշտադն իր հղումները կատարում է երկրորդական և անվստահելի ադրբեջանական, այն էլ՝ Բունիաթովի գրականությունը, որոնց իրականությունը շրջանցելն ու կեղծիքներ լինելը բազմիցս փաստված է<sup>11</sup>:

Հոլանդիայի Լայդենի համալսարանի Կենտրոնական Ասիայի ամբիոնի վարիչ, պատմություն և սոցիոլոգիա հետազոտող Թուրաջ Աթաբաբին, որը Ատրպատականի զավակ է, այս նյութի վերաբերյալ գրել է հետևյալը.

Աշխարհագրական պարզ եզրերի միտումնավոր սխալ գործածության միջոցով հորինված պատմության վավերականությունը հաստատելու մեկ ուրիշ փորձի օրինակ է պարսկական Ադրբեջանի և նախկին Խորհրդային Ադրբեջանի որոշ մտավորական շրջանակներում Արաքսից հյուսիս և հարավ գտնվող տարածաշրջանների համար Հյուսիսային և Հարավային Ադրբեջաններ անվանումների օգտագործումը: Ակներև է, որ այս եզրերի օգտագործման նպատակն է աշխարհագրական երկու տարբեր շրջանների մշակույթի ընդհանրությունը փաստելը, որը նաև պարունակում է պարսկական և ներկա Ադրբեջանի Հանրապետության վերջնական միացման կոչի բացահայտ ակնարկը<sup>12</sup>:

Իրենց պատկանելությունը Արցախի և Սյունիքի շրջանների վրա արդարացնելու և փաստելու համար Ադրբեջանի իշխանությունները դիմում են 1813-1828 թթ. քարտեզներին, որոնք նշում են Գյուլիստանի պայմանագրից հետո և նախքան Թուրքմենչայի պայմանագիրը միայն 15 տարի գոյություն ունեցող սահմանները, որտեղ Հայաստանի և Շիրվան-Ելիզավետպոլի, ինչպես նաև դրանց հարակից շրջաններն են ցուցադրված:

Սակայն այս քարտեզների բաժանումների հիմնական պատճառներն ընդհանրապես չեն նշվում: Ըստ 1813 թ. Գյուլիստանի պայմանագրի՝ այդ թվականից Ռուսաստանին հանձնվեցին Արաքսի հյուսիսում տեղակայված՝ շուրջ 200 տարի առաջ պարսիկների գրաված Կով-

կասի հարավարևելյան տարածքների մի մասը, որոնք էին Ելիզավետպոլը, Շիրվանը, Դաղստանը, Շաքին, Բաքուն և Շուշին, ինչպես նաև Արցախն ու Հայաստանի մի մասը:

Պարսկաստանի հսկողության տակ մնացին Կովկասի հարավարևմտյան շրջանից Երևանի նահանգի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի և Վրաստանի մյուս մասը, որոնք Ռուսաստանին անցան 15 տարի հետո՝ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով<sup>13</sup>:


Սկզբնական տարիներին Ռուսաստանն այս շրջանի նահանգների բաժանումները պահպանեց նույնովյա՞մբ, ինչը 1813 թ. գոյություն ունեւր: Այդ տարիներին Հայաստանը դեռ բաժանված էր պարսկական վարչական բաժանումներով, ըստ որոնց՝ Հայաստանի տարածքը նաև բաժանված էր տարբեր խանությունների, իսկ հետո՝ նահանգների միջև: 15 տարի հետո այդ բոլորը նույն վարչական բաժանումներով անցան Ռուսաստանին: Ռուսաստանն, ըստ իր հայեցողության, պարբերաբար փոխում էր Հայաստանի և Հարավային Կովկասի տարածքի վարչական բաժանումները (տե՛ս հատորիս Գլուխ 1, էջ 17–19<sup>14</sup>):

Ինչպես նախապես նշվեց, Ադրբեջանի այսպես կոչված գիտական գրականության մեջ երևան էր եկել Արևմտյան Ադրբեջան անվանումը, որը մինչև վերջերս անհայտ մի տարածքի էր վերաբերում: Այս հարցը պարզվեց, երբ 2007 թ. Ադրբեջանի տուրիզմի և մշակույթի նախարարությունը հրատարակեց Ազիզ Ալաբբարլիի «Արևմտյան Ադրբեջանի մշակութային հուշարձաններ» անունով գիրքը, որի խմբագիրները երեք ադրբեջանցի ակադեմիկոսներ են: Գրքի սկզբում տեղադրված է Հայաստանի Հանրապետության քարտեզը (տե՛ս պատկեր 7.3) և նկարատակում գրված է. «Հնագույն օղուգ–թուրքերի երկիրը, Արևմտյան Ադրբեջանը (ներկայիս Հայաստանի Հանրապետությունը)»:

Գիրքը պարունակում է ներկա Հայաստանի Հանրապետության կարևոր պատմական հուշարձանները՝ նրանց բոլորին տալով նոր պատկանելություն: Օրինակ՝

- Թեյշեբախինին անվանված է թյուրքական ամրոց<sup>15</sup>:
- Գառնին դարձել է թյուրքական տաճար<sup>16</sup>:
- Խոթր վիրապը և Հաղպատը դարձել են թյուրքական տաճարներ<sup>17</sup>:
- Էջմիածինը և Գոշավանքը դարձել են հայ–թյուրքական տաճարներ<sup>18</sup>:
- Տաթևը և Հաղարծինը դարձել են աղվանական–թյուրքական քրիստոնյա տաճարներ<sup>19</sup>:
- Նորավանքը դարձել է օղուգ–թյուրքական հուշարձան<sup>20</sup>:
- Սաղմոսավանքը դարձել է թուրք–քրիստոնյա տաճար<sup>21</sup>:

Նույն ապաքարողություններով լի գիրքը հրատարակվել է անգլերեն, ռուսերեն, գերմաներեն և անվճար բաժանվել միջազգային գրքի տոնավաճառներում ու նվիրվել կարևոր գրադարաններին ու համալսարաններին, սակայն գիրքն անհնար է գնել որևէ խանութում կամ նույնիսկ համացանցում:



The map the Ancient Turkish-Oghuz land – Western Azerbaijan  
(present day the Republic of Armenian )

7.3. Հայաստանը, անվանված որպես Արևմտյան Ադրբեջան, Ալաքբարիի  
Արևմտյան Ադրբեջանի հուշարձանները գրքից, 2007 թ.:

Ահա թե ինչպիսի կեղծիքներ և ապատեղեկատվություն են պարունակում Ադրբեջանի Հանրապետության հրատարակած պատմության ու աշխարհագրության նյութերով գրքերն ու հոդվածները, որոնք շարադրում են ու ներկայացնում Ադրբեջանի մասնագետները, որոնք իրենց գազաթնակետին են հասել նախագահ Իլհամ Ալիևի իշխանության օրոք և նրա կարգադրությամբ:

# Գլուխ 7-ի ծանոթագրություններ

- <sup>1</sup> Dragadze, Tamara, ed. *Azerbaijan*. London: Melisende, 2000. Տե՛ս նաև Tale Haydarov, Taleh Baghirov. *Azerbaijan: 100 Questions Answered*, Baku: 2008; ինչպես նաև Nicholas Awde & Fred James Hill. *The Azerbaijanis: People, Culture and History*, Bennett & Bloom: London, 2009, էջ 12.
- <sup>2</sup> Зия Буниятов, редактор. Историческая география Азербайджана (Баку, 1987), էջ 5: Տե՛ս նաև Дж. Гулиев редактор, История Азербайджана (Баку: 1979), էջ 29 և այլն:
- <sup>3</sup> Տե՛ս Գալջյան, Ռուբեն, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները*, Երևան, Զանգակ, 2107:
- <sup>4</sup> *Ադրբեջանի պատմական առկա*, Բաքու, 1994, էջ 9, 11:
- <sup>5</sup> Мамедова, Фарида. *О некоторых вопросах исторической географии Албании I в. до н. э. — VIII в.* «Историческая география Азербайджана». Ред. Зия Буниятов. Баку, Издательство Элм, 1987, էջ 7–8: Տե՛ս նաև Shnirelman, Victor. *The Value of the Past; Myths, Identity and Politics in Transcaucasia*. Osaka: Museum of National Ethnography, 2001, էջ 165–171:
- <sup>6</sup> Мамедова, Фарида. *Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе*. www.bakililar.az/ca/photos/farida/html last opened in 2012.
- <sup>7</sup> Алиев, Играр. *Очерк истории Атропатены*. Баку: Азербайджанское государственное издательство Элм, 1989, էջ 9,42,59:
- <sup>8</sup> Ali Ibn Hussain al-Mas'udi. *Meadows of Gold and Mines of Gems*, translated by Aloys Sprenger. London: John Murray, 1841.
- <sup>9</sup> Алиев, Играр, նշված աշխ., էջ 27:
- <sup>10</sup> Altstadt, Audrey. *Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule*, Stanford: Hoover Institute, 1992, էջ 3: Սա համընկնում է նույն նյութին, որը նշված է թիվ 2 ծանոթագրության մեջ, որի հեղինակն է Ադրբեջանի քարոզիչ-պատմաբան Բունիաթովը:
- <sup>11</sup> Մանրամասի համար տե՛ս աշխատությանս գլուխ 4-ը:
- <sup>12</sup> Atabaki, Touraj. *Azerbaijan. Ethnicity and the Struggle for Power in Iran*. London & NY: IB Tauris, 2000, էջ 2, 25. Վերոհիշյալ աղավաղումների համար տե՛ս երեքատորանոց *Ազերբայջանի Թարիխի (Ադրբեջանի պատմությունը)* աշխատությունը, Բաքու, 1958–1962 թթ.:
- <sup>13</sup> Цуциев, Артур, Атлас этнополитической истории Кавказа (1774–2004), Москва, Издательство Европа, 2007.
- <sup>14</sup> Ռուսական վարչական բաժանումների համար տե՛ս *Հայաստանի ազգային առկա*, Հատոր Բ, Երևան, 2008, էջ 68–74:
- <sup>15</sup> Alakbarli, Aziz. *Les Monuments d’Azerbaijan Ouest*. Baku: Ministry of Tourism, 2007, ֆրանսերեն, էջ 28, 29:
- <sup>16</sup> Անդ, էջ 30,31:
- <sup>17</sup> Անդ, էջ 50, 51, 106, 107:
- <sup>18</sup> Անդ, էջ 60, 61, 90, 91:
- <sup>19</sup> Անդ, էջ 98, 99, 126, 127:
- <sup>20</sup> Անդ, էջ 148, 149:
- <sup>21</sup> Անդ, էջ 124, 155:

## 8. ՀԱՅԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Պատմականորեն հայերի ներկայությունն այժմյան Հայաստանի և Արևմտահայաստանի տարածքում, որը մոտավորապես տարածվում է հյուսիսում՝ Կովկասյան լեռների հարավից մինչև հարավ՝ Տավրոսյան լեռնաշղթան, իսկ արևմուտքում՝ Եփրատից մինչև արևելք՝ Ուրմիո լիճը: Բոլոր մասնագետների կողմից սա ընդունված մի փաստ է, սակայն վերջին հիստոն տարիների ընթացքում մեր արևելյան հարևան երկրի պատմաբանները պնդում են, որ հայերը Կովկասի հարավային շրջանում նորեկներ են, որոնց այդտեղ է տեղափոխել և բերել ուսական բանակը 1828 թ. հետո, երբ նրանք պարսիկներից գրավեցին Երևանի խանությունը և դրա շրջակա տարածքը:

Աշխատության այս գլխում օգտվելով հունա-հռոմեական, վաղ մինչ ուշմիջնադարյան քրիստոնեական և իսլամական աշխարհագրական գրքերից և ուղեգրություններից, ինչպես նաև ճամփորդների վկայություններից՝ փաստում ենք, որ բոլոր հավաստի աղբյուրները նշում են հայերի առկայությունը վերը նշված տարածքում, որն ավելի քան 400 000 քառ. կիլոմետր է կազմում: Պարզաբանումները մենք կսկսենք հնագույն պատմիչների խոսքերով և կշարունակենք մինչև տասնիններորդ դարը՝ մեջբերում անելով պատկան տեքստերից և գրականությունից<sup>1</sup>:

Հերոդոտոս, մ. թ. ա. 484–425 թթ.

Հերոդոտոսը համարվում է արևմտյան պատմագիտության հիմնադիրը: Նա իր «Պատմություն» աշխատության մեջ ութ տեղ նշում է Հայաստանի և հայերի մասին՝ նրանց տեղադրելով Եփրատից հյուսիս ընկած տարածաշրջանում:

Ստրաբոն, մոտ մ. թ. ա. 64 թ. մինչև 25 թ.

Ստրաբոնը համարվում է ներկա աշխարհագրության նախահայրը: Նա իր 17 հատորանոց «Աշխարհագրություն» աշխատության 11–րդ հատորում մանրամասն գրում է Հայաստանի ու հայերի, ինչպես նաև նրանց երկրի մասին: Գալով հայերի արևելյան հարևան Ադվանք երկրին՝ նա գրում է.

Ադվաններն ապրում են իվերների և Կասպից ծովի միջև՝ արևելքում սահման ունենալով ծովը, իսկ արևմուտքում՝ Վիրքը: Մնացած կողմերից հյուսիսը պաշտպանված է Կովկասյան լեռներով, քանի որ սրանք գտնվում են դաշտավայրերից ավելի բարձր, իսկ նրանց դեպի ծով ձգվող մասը կոչվում է Կերավնյան, հարավային սահմանն էլ Հայաստանն է, որը ձգվում է նրա [Ադվանքի] ամբողջ երկայնքով<sup>2</sup>...

Նույն հատորում նա գրում է Հայաստանի տեղագրության, բնության և մարդկանց ու նրանց ապրելակերպի, ինչպես նաև պատմության մասին.

Հայաստանի հարավային մասի որոշ շրջաններ հասնում են մինչև Տավրոս, որը նրան առանձնացնում է Եփրատի և Տիգրիսի միջև տեղակայված Միջագետք երկրից: Մեծ Հայքի արևելյան սահմանն է Ատրոպատենը [Ատրպատականը], հյուսիսում են Կասպից ծովի վեր ընկած Պարաքոթրասի լեռները, ինչպես նաև Ադվանքը, Վիրքն ու Կովկասը, որը շրջապատում է այս երկրները և հասնում մինչև Հայաստան՝ նմանապես հասնելով Մոսքիկյան և Կողքիսի լեռներին, ձգվելով մինչև Տիրարանի, ինչպես որ նրանք անվանվում են<sup>3</sup>:

### Պլինիոս Ավագ, 23–79 թթ.

Գայոս Պլինիոս Սեկունդոսը՝ ճանաչված որպես Պլինի, հայտնի է իր 37 մասանոց «Բնագիտություն» աշխատությունը: Գրքի վեցերորդ հատորը վերաբերում է աշխարհագրական ու պատմական նյութերին: Կովկասից հարավ տարածքի մասին նա շարադրում է Վիրքի, Ադվանքի ու Հայաստանի մասին, սակայն Ադրբեջան անունն այստեղից ընդհանրապես բացակայում է: Ըստ նրա.

Մեծ Հայքը սկսվում է Պարիեդրի [հավանաբար Պոնտոսյան] լեռներից և Կապադովկիայից առանձնանում է, ինչպես ասացինք, Եփրատ գետով մինչև այնտեղ, որտեղ Եփրատը թեքվում է դեպի արևելք, իսկ Միջագետքից նրան բաժանում է Տիգրիս գետը: Այս երկու գետերի ակունքները Հայաստանում են... Այսպիսով՝ նրա սահմանները հասնում են մինչև Ադիաբենե, որտեղ որ այս երկրի լեռնաշղթաները նրա միջով են անցնում: Այստեղից երկրի սահմանները ձգվում են դեպի ձախ՝ անցնելով Արաքսը և հասնելով Կուր, իսկ նրա լայնությունը հասնում է մինչև Փոքր Հայք ...<sup>4</sup>

Այսպիսով՝ Կուր գետից հարավ ընկած տարածքը նա անվանում է «Հայաստան», որը բնականաբար բնակեցված էր հայերով:

### Կլավդիոս Պտղոմեոս, 90–168 թթ.

Պտղոմեոսը համարվում է հնագույն քարտեզագետն ու ներկա քարտեզագիտության հիմնադիրը, ում «Աշխարհագրություն» կամ «Տիեզերագիտություն» անվանված գրքում առաջադրված չափագրության մեթոդները կիրառվում էին մինչև 15–16-րդ դդ.: Գիրքը պարունակում է չափագրության մեթոդներ, ինչպես նաև դրանց կիրառման բացատրություններ, երկրների, դրանց քաղաքների և այլ բնորոշ աշխարհագրական տեղանունների ցուցակներ ու քարտեզներ: Դրանցից մի քարտեզը կոչված է «Ասիայի երրորդ քարտեզը. Վիրքը, Կովխիդան, Ադվանքը և Հայաստանը»: Ինչպես այլ գրքերում, այս գրքից ևս շրջանից հատկապես բացակայում է «Ադրբեջան» անվանումը, մի երկիր, որը, Ադրբեջանի գիտնականների պնդմամբ, ունի 3000 տարվա պետականության անցյալ: Այս քարտեզը կարելի է տեսնել հատորիս մեջ արտատպված պատկեր 3.1-ում:

Պտղոմեոսի «Աշխարհագրություն» հատորյակի հինգերորդ հատորում Հայաստանին վերաբերող տեղանունների ցուցակը երկու մասի է բաժանված: Փոքր Հայքի քաղաքների ցուցակը տրված է «Ասիայի առաջին քարտեզ» գլխում, որը պարունակում է 79 տեղանուն,

դրանցից կարևորներն են «Մեկիտանան (Մալաթիան), Նիկոպոլիսը, Սատալան (Սատաղը) և Կոման»։ Իսկ Մեծ Հայքի ցուցակը տրված է «Ասիայի երրորդ քարտեզ» կոչված գլխում, որտեղ առկա է 85 տեղանուն, ներառյալ «Արտաշատը, Արմավիրը, Տիգրանակերտը, Արշամաշատը և Տուշպան (Վանը)»<sup>5</sup>։ Նույն գլխում Աղվանքի համար ցուցակագրված է ընդամենը 36 տեղանուն։ Հաջորդ վեցերորդ գրքի առաջին գլխում Հայաստանին կից Փոքր Մարաստանի համար ցուցակում առկա է 25 տեղանուն։

#### Իբն Խորդադբեհ, շուրջ 820–912 թթ.

9-րդ դարի այս պարսիկ աշխարհագրագետը իսլամական կարևոր գիտնականներից է։ Նա իր «Քիթաբ ուլ-Մասալիք վա Մամալիք (Գիրք ճանապարհների ու երկրների)» աշխատության մեջ Առան-Աղվանքի ու Ադրբեջանի մասին հետևյալն է գրում.

Հյուսիսում, որը Պարսկաստանի քառորդ մասն է կազմում, իշխում էր Ադապատ-կան անունը կրող զորավարը։ Այս շրջանի մեջ են մտնում Հայաստանը, Ադրբեջանը, Ռեյը, Դեմավենդը, որի կարևոր քաղաքն է Շալանքան...<sup>6</sup>

#### Աբու Իսհազ բին-Մոհամմադ ալ-Ֆարսի ալ-Իսթախրի, մոտ 357 թ.

Հավանաբար իսլամական ամենամեծ պարսիկ աշխարհագիրը, ով հանրահայտ է որպես Իսթախրի, ում «Քիթաբ ուլ-Մասալիք վա Մամալիք (Գիրք ճանապարհների ու երկրների)» աշխատությունը պարունակում է 19–21 քարտեզ։ Սրանցից առաջինն «Աշխարհացույցն» է, իսկ մյուսները պատկերում են հիմնականում իսլամական երկրներն ու նահանգները։ Ամեն մի շրջանը ներկայացված է առանձին գլխում, որի տեքստի մեջ տեղադրված է նաև այդ շրջանի քարտեզը, իսկ տեքստը պարունակում է տվյալներ, որոնցից են շրջանի կամ երկրամասի կարևոր քաղաքների անունները և տեղեկություններ տեղի բնակչության ու նրանց մշակույթի մասին։ Սրանցից Հարավային Կովկասի վերաբերյալ շրջանի քարտեզն անվանված է «Հայաստանի, Ադրբեջանի և Առանի [Աղվանքի] քարտեզը», որտեղ նաև ներկայացված են երեք երկրների կարևոր քաղաքների անունները։

Հայաստանի քաղաքների վերաբերյալ նա տալիս է հետևյալ ցուցակը.

Դաբիլը (Դվինը) Հայաստանի մայրաքաղաքն է, որն Արդաբիլից ավելի մեծ քաղաք է։ Մյուս քաղաքներից են Նախիջևանը, Բերկրին, Խլաթը, Մանազկերտը Վարգանը, Բիթլիսը, Կալիկյան (Էրզրումը), Արզանը (Երզնկան), Միաֆարկինը և Սարայը, որոնք աշխույժ քաղաքներ են<sup>7</sup>։

Իսթախրիի նշած Հայաստանի մայրաքաղաք Դաբիլը (Դվինի արաբերեն անվանումը) և քաղաքներից Նախիջևանը Արաքսից հյուսիս՝ Հայաստանի տարածքում են և ներկայումս Ստալինի՝ Ադրբեջանին հանձնած Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում։

Ուիլյամ դե Ռուբրուկ, 1220–1293 թթ.

Ռուբրուկը ֆլամանդացի միսիոներ քարոզիչ էր, ով 1253–1255 թթ. Կոստանդնուպոլսից ճանապարհվել էր հարավ՝ մինչև Կարակորում անապատ՝ մոնղոլների տերության կենտրոնը: Նրա վերադարձի ճանապարհն անցնում էր Կովկասի և Հայաստանի վրայով, որոնց մասին նա գրի է առել հետաքրքրական նյութեր: Իր ուղեգրությունների մեջ Ռուբրուկը նշում է ալաններին, Կովկասի թաթարներին, վրացիներին, պարսիկներին և հայերին, ինչպես նաև նրանց երկրների անունները, բայց շարադրության մեջ Աղբբեջանի և աղբբեջանցիների մասին ոչ մի նշում չկա<sup>8</sup>:

Մարկո Պոլո, 1254–1324 թթ.

Պոլո ընտանիքի անդամները երկու անգամ ճամփորդել են մինչև Չինաստան իրենց հայրենի Իտալիայից բացակայելով շուրջ 24 տարի՝ 1271–1295 թթ.: Մարկո Պոլոյի շարադրած ուղեգրության մեջ կան Կովկասի, Հայաստանի և նրան հարակից շրջանների մասին բավականին մանրակրկիտ տեղեկություններ: Նա մանրամասն բացատրություններ է տալիս Մեծ և Փոքր Հայքերի տարածքի, քաղաքների և նրանց առևտրական կապերի ու կրոնի վերաբերյալ<sup>9</sup>: Վրաստանի և մասնավորապես Թիֆլիսի մասին գրելիս նա նշում է.

Այս երկրում կա մի գեղեցիկ քաղաք՝ Թիֆլիս անունով՝ շրջապատված արվարձաններով և ամրոցներով: Քաղաքը բնակեցված է հայ և վրացի քրիստոնյաներով, ինչպես նաև մահմեդականներով և հրեաներով, բայց վերջինները՝ ոչ մեծ քանակությամբ<sup>10</sup>:

Մարկո Պոլոն նույնպես իր ուղեգրության մեջ Աղվանքի, Աղբբեջանի և աղբբեջանցիների անունները չի նշում:

Յոհան Շիլտբերգեր, մոտ 1381–1440 թթ.

Շիլտբերգերը գերմանացի զինվոր էր, ով գերեվարվել էր 1396 թ. սուլթան Բայազեդ Առաջինի կողմից: Նա սուլթանին ծառայել է մինչև 1402 թ. նրա կրած պարտությունը՝ այս անգամ գերվելով Լենկթեմուրի կողմից և ծառայելով նրա պահակազորում: Լենկթեմուրի մահից հետո (1405 թ.) Շիլտբերգերի գերությունը շարունակվել է նրա որդու՝ Շահրոխի, ապա թոռան՝ Աբու-Բաքրի օրոք, որոնք այդ ընթացքում ասպատակում էին Հայաստանը՝ իրենց հետ տանելով նաև գերի Շիլտբերգերին: 1396–1422 թթ. Շիլտբերգերը եղել է Հայաստանի և Արցախի տարածքներում: Հետագայում լույս տեսած իր աշխատության մեջ Շիլտբերգերը հետևյալ դիտողություններն է գրանցել տեղացի հայերի մասին՝ ասելով.

Ես Հայաստանում հաճախ եմ եղել: Լենկթեմուրի մահից հետո ես հանդիպեցի նրա որդուն, որը Հայաստանում ուներ երկու թագավորություն: Նրա անունն էր Շահրոխ: Նա սիրում էր ապրել Հայաստանում, քանի որ այնտեղ կար մի գեղեցիկ դաշտավայր: Նա իր ցեղախմբի հետ այդտեղ էր ձմեռում, որովհետև այդտեղ կային լավ արոտավայրեր: Ջրառատ մի գետ՝ Չուրը [Կուր], որը նաև կոչում են Տիգրիս[?], անցնում է այս հարթավայրով, և այս երկրում նույն գետի մոտ արտադրվում է լավագույն մետաքսը: Անհավատներն [մահմեդականները] իրենց լեզվով այն անվա-

նում են Կարավաք [Ղարաբաղ]: Սա գտնվում է Հայաստանում, բայց այնտեղ անհավատներն են իշխում: Հայերն ապրում են նաև շրջակա գյուղերում, բայց հարկ են տալիս անհավատներին<sup>11</sup>:

*Շիլտբերգերի այս բացատրություններն աղբբեջանցի ակադեմիկոս Զիա Բունիաթովի համար անընդունելի էին, և 1984 թ. նույն գրքի թարգմանությունը խմբագրելիս Բունիաթովը հանել է հայերին վերաբերող տողերը և, որպես վերջնական հարված, ամբողջովին անտեսել գրքի վերջին վեց գլուխները, որոնց նյութը հիմնականում հայերն են: Այդպիսով՝ գրքի բնագիրն աղբբեջաներեն թարգմանությունից բավականին տարբեր է ու «մաքրված» հայ և «Հայաստան» անուններից<sup>12</sup>:*

### Ջոզաֆաթ կամ Ջոզաֆա Բարբարո, 1413–1494 թթ.

Բարբարոն վենետիկցի դիվանագետ, առևտրական և ճամփորդ էր, ով 1471–1478 թթ. մի քանի անգամ Հայաստանով անցնելիս գնացել է դեպի Պարսկաստան: Հյուսիսային Հայաստանում, Լոռիի ու Շամախի ճանապարհով անցնելիս նա իր ուղեգրություններում նշում է հետևյալը.

Այս [Շամախին] շատ լավ քաղաք է, որն ունի 4000–5000 տուն, որտեղ հատուկ եղանակով պատրաստում են մետաքս և կտավ: Քաղաքը գտնվում է Հայաստանում, և բնակչության մեծամասնությունը հայեր են<sup>13</sup>:

Վերի բացատրությունները նա գրել է Շամախիի մասին, որը ներկա Աղբբեջանի Հանրապետության բազմամարդ ու կարևոր քաղաքներից մեկն է, որն այսօր նրանք համարում են զուտ աղբբեջանական քաղաք:

### Ադամ Օլեարիոս, 1603–1671 թթ.

Օլեարիոսը 1635–ից մինչև 1639 թ. Հոլշտայնի դքսության դեսպան Բրյուզեմանի հետ միասին երկու անգամ ճամփորդել է Մոսկվա, այնտեղից էլ, որպես դեսպանի քարտուղար, անցել Պարսկաստան: Նա իր ուղեգրություններում մանրակրկիտ բացատրություններ է տվել Ռուսաստանի ու Պարսկաստանի քաղաքների, ժողովրդի կենցաղի ու սովորությունների մասին:

Արխանգելսկից Պարսկաստան ճամփորդելիս դեսպանների շքախումբը մի քանի ամիս մնացել է Շամախիում՝ որպես տեղի պարսիկ տիրակալի հյուրը: Սա Օլեարիոսին առիթ է տվել մանրակրկիտ ուսումնասիրելու տեղացիների կյանքն ու սովորությունները: Նա մասնավորապես մոտիկից շփվել է տեղացի քրիստոնյա հայերի հետ և իր երկրորդ ուղեգրության հինգերորդ գլխում նշում է.

Շամախին Պարսկաստանի լավագույն քաղաքներից է, որի հյուսիսային մասը համարյա առանձին քաղաք է<sup>14</sup>: Այստեղի փողոցները նեղ են, տները՝ մեծ մասամբ կառուցված ցեխից և կավից, կան նաև քիչ թվով աղյուսաշեն ու քարաշեն տներ: Քաղաքի այս հատվածի բնակչության մի մասը կազմված է հայերից և մյուս մասն էլ՝ վրացիներից<sup>15</sup>:

1637 թ. հունվարի 5-ին այստեղ նա մասնակցել է հայերի՝ Քրիստոսի ծննդյան տոների առթիվ կատարվող Ջրօրհնեքի արարողությունն ու դրանից հետո կատարվող տոնակատարություններին, որոնց մասին նա մանրամասն գրել է իր ուղեգրություններում<sup>16</sup>: Ըստ իսլամական շարիա օրենքի՝ Շիրվանի պարսիկ կուսակալը հայերին արտոնություն չէր տալիս քաղաքում նոր եկեղեցի կառուցելու, սակայն ձևանալով որպես բարի իշխան և ի պատիվ իր հյուր ղեսպանների, 1637 թ. հունվարի 18-ին նա հայերին նոր եկեղեցի կառուցելու իրավունք է տալիս, որը հայ համայնքի շրջանում մեծ խանդավառություն է առաջացնում, քանի որ սա հազվագյուտ մի արտոնություն էր<sup>17</sup>:



8.1. Շարդանի Երևանի գծագիրն իր Ուղեգրությունների գրքից, 1686 թ.: Վերին ձախ կողմում Արարատն է ու Նոյյան տապանը:

### Սրբ Զոն Շարդան, 1643–1713 թթ.

Բրիտանիայում բնակվող Ֆրանսիացի առևտրական Շարդանը, 1671 թ. և 1675 թ. այցելել է Վրաստան, Հայաստան, Պարսկաստան (ներառյալ Նոր Զուղա) և մանրամասնորեն անդրադարձել հայերին՝ գրելով նրանց կենցաղի, սովորությունների և ավանդությունների մասին: Հայաստանի մասին նա գրում է.

Մեծ Հայքը տեղադրված է Միջագետքի, Վրաստանի, Մարաստանի և Փոքր Հայքի միջև<sup>18</sup>:

Երևանի և նրա բնակչության մասին նա գրում է.

Էրիվանը, ըստ հայերի, աշխարհի հնագույն բնակավայրն է: Նրանք հաստատում են, որ Նոյ նահապետը և նրա ընտանիքը, նախքան ջրհեղեղն ու դրանից հետո Արարատից իջնելով, այնտեղ են բնակվել<sup>19</sup>:

*Շարդանի ուղեգրությունները փաստում են տարածաշրջանում վաղուց հաստատված հայ բնակչության առկայության մասին՝ բացատրելով նրանց ավանդությունները, մշակույթն ու սովորությունները: Այս բոլորը իրողություններ են, որոնք ներկայում աշխատում են հերքել Ադրբեջանի Հանրապետության պատմագիտությունն ու իշխանությունները:*

*Ցարական Ռուսաստանի արխիվներում Բաքվից, Շիրվանից ու Դաղստանից ստացված զեկույցներում (1728–1796) կան բազմաթիվ նյութեր տեղաբնակ հայերի մասին: Այս զեկույցները պատկանում են տարբեր պաշտոնյաների գրչին, այդ թվում՝ ստորև նշվածները: Այսպես՝ Ի. Գ. Գերբերը Կասպից ծովի արևմտյան ափին տեղակայված երկրների և ժողովուրդների նկարագրի մասին 1728 թ. զեկույցում մասնավորապես նշում է.*

Շամախում... հայերը բնակվում էին Մուշկուրի, Ռուսթավի և հատկապես Ղաթալայի [Կապաղակի] շրջանների բազմաթիվ գյուղերում, շատերն էլ բնակվում են Շամախում, Բաքվում և Դերբենդում: Շամախիի մոտակայքում նրանք ունեն վանքեր, որտեղ բնակվում է նրանց եպիսկոպոսը<sup>20</sup>:



8.2. Բրիտանացի գեղանկարիչ Քրը-Պորտերի Էջմիածնի և Արարատների տեսարանը, 1817 թ.:

Սրբ Ռոբերտ Քրր-Պորտեր, 1777-1842 թթ.

Քրր-Պորտերը հանրահայտ բրիտանացի գեղանկարիչ էր, ով 1817-1820 թթ. ճամփորդել է Կովկաս, Պարսկաստան և Միջագետք և պատրաստել պլանների ու էսքիզների մեծադիր մի հատոր՝ դա անվանելով «Հուշեր, քարտեզներ, պլաններ, տեսարաններ և այլ հետաքրքրական գծագրություններ Կովկասից, Պարսկաստանից և Բաբելոնից»: Հատորի բնագիրը պահպանված է Լոնդոնի Բրիտանական գրադարանի արխիվում:

Դրանց շարքին է պատկեր 8.2-ի Էջմիածնի նկարը՝ գծված 1817 թ.: Այստեղ փաստորեն ցույց է տրված, որ Էջմիածինը, որպես բազմադարյան մի վանք, գոյություն է ունեցել նրա այցի ժամանակ, այսինքն՝ 1817 թ.: Սա ամբողջովին հակասում է Աղբրեջանի Հանրապետության պատմաբանների ու նրանց հետևորդների պնդումներին, որ հայերը Կովկասի հարավային տարածք են բերվել ոտակական բանակի կողմից 1828 թվականին:

Աբբաս Ղույի Աղա Բաքիխանով, 1794-1847 թթ.

Բաքվեցի պատմաբան, փիլիսոփա և բանաստեղծ Բաքիխանովը համարվում է Աղբրեջանի պատմագրության հիմնադիրը: Նրա կարևոր պատմական աշխատությունը՝ «Գյուլիստան-է Էրա'մ. Շիրվանի և Դաղստանի պատմությունը» գիրքը, ըստ ժամանակի սովորության, շարադրված է եղել պարսկերեն, ապագայում թարգմանվել է Աղբրեջանի թուրքերենի: Իր աշխատության մեջ Շիրվանի սահմանները բացատրելիս նա գրի է առել հետևյալը.

Շիրվանի արևելքում Կասպից ծովն է, իսկ նրա հարավային սահմանն է Կուր գետը, որն այս շրջանը բաժանում է Հայաստանից և Մողանից<sup>21</sup>:

Այսպիսով՝ աղբրեջանական պատմագրության հիմնադիր պատմաբանը հաստատում է, որ Կուրից հարավ ընկած երկիրը Հայաստանն է, այսինքն՝ հայերի պատմական հայրենիքը: Երբ նրա աշխատությունը թարգմանվեց աղբրեջաներեն<sup>22</sup>, նրա միջից ընդհանրապես հանվեց «հայ» և «Հայաստան» անունները: Աղբրեջաներեն թարգմանության վերնագրից նաև հանվել է «Դաղստանի և Շիրվանի պատմությունը» ենթավերնագիրը՝ այսպիսով աշխատությունը ներկայացվելով որպես պարզապես «Աղբրեջանի պատմություն»: Գրքի անգլերենը հրատարակվեց ԱՄՆ-ում 2009 թ.՝ պարսիկ և հոլանդացի մասնագետների թարգմանությամբ<sup>23</sup>:

Երմոլովի Ղարաբաղի պաշտոնական վիճակագրությունը, 1823 թ.

Թիֆլիսում հաստատված ցարական Ռուսական Կովկասի փոխարքան գնդապետ Երմոլովին կարգադրել էր պատրաստել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի և ցեղախմբերի վիճակագրությունը, որը կատարվեց 1823 թ., բայց արդյունքների աղյուսակները հրատարակվեցին Թիֆլիսում միայն 1866 թ.: Ցուցակներում տեղաբնակները բաժանված են երեք հիմնական տարրերի, հայ և թաթար գյուղերի ու քաղաքների, ինչպես նաև քոչվորների, որոնք հաստատուն բնակավայր չունեին<sup>24</sup>: Ըստ Երմոլովի ցուցակի՝ Լեռնային Ղարաբաղի հաստատուն բնակչության մեծամասնությունը հայեր էին:


Ըստ ոտակական վիճակագրության՝ 1828 թ. հետո Իրանում բնակվող շուրջ 36 000 հայեր վերադարձան Հայաստանի իրենց պապենական հողերը, որոնցից շուրջ 4 000 շունչը բնա-

կեցվեց Սյունիքում ու Արցախում, սակայն տեղի անառողջ պայմանների բերումով այս խմբի մեծ մասը համաճարակների զոհ դարձավ<sup>25</sup>:

Ներկա Ադրբեջանի Հանրապետության պատմաբաններին պետք է հիշեցնել, որ 17-րդ դ. սկզբին պարսից Շահ Աբբասը 300 000–400 000 հայերի բռնագաղթեցրեց Արաքսի հյուսիսից՝ ներառյալ Սյունիքից, Նախիջևանից ու Արցախից, դեպի Իրան՝ նրանց ցրելով Իրանի հյուսիսային, արևմտյան և կենտրոնական քաղաքներում, հատկապես Սպահանի շրջանում: 1829–1830 թթ. այս բռնագաղթվածների սերունդներից շուրջ մեկ տասներորդն առիթ ու հնարավորություն ունեցավ 200 տարի անց վերադառնալու իրենց պապենական հայրենիքը, որոնց Ադրբեջանն այսօր «նորեկներ» է անվանում:

\* \* \*

Ադրբեջանի քարոզչական զինանոցում առկա է մի համատարած լուսանկար՝ որպես հայերի նորեկ լինելու «փաստ»: Սա Իրանի Մարաղա քաղաքից վերադարձած և Ադրբեջանի Հանրապետության Մարաղա նորաստեղծ գյուղում հաստատված հայերի կառուցած հուշարձանի լուսանկարն է: Անորակ այս լուսանկարը բազմիցս արտատպվել ու նշվել է ներկա Ադրբեջանի Հանրապետության պատմաբանների ու իրենց հետևորդների գրականության մեջ: Հուշարձանը կառուցել էին գյուղացիները՝ 1828 թ. իրենց հիմնած գյուղի 150-ամյակի առթիվ, որը, սակայն, Ադրբեջանի բանակայինները 1992 թ. գրավելուց հետո գյուղի հետ միասին ոչնչացրեցին:



8.3. Արցախի Մարաղա գյուղի հուշարձանի լուսանկարը, 1978 թ.<sup>26</sup>:

Հուշարձանի վրա գրված էր Մարաղա 150՝ նշելով Մարաղա գյուղի հիմնադրումը: Ինչպես նշվեց, բուն Մարաղա քաղաքը պարսկական Աղբբեջան-Ատրպատական նահանգում է՝ Ուրմիո լճից արևելք, որտեղ հաստատվել էր 17-րդ դարասկզբին Շահ Աբբասի բռնագաղթեցրած հայերի մի մասը: Սրանց սերունդներից չնչին մասը 1828-1829 թթ. առիթ ունեցավ վերադառնալու Արցախ և հիմնելու նոր գյուղ՝ նրան տալով 200 տարվա աքսորի ընթացքում իրենց հյուրընկալող քաղաքի՝ Մարաղայի անունը:

Այս բոլորն անտեսելով՝ Աղբբեջանի պատմաբանները հայերին «Կովկասում եկվոր» լինելու իրենց տեսությունը փաստելու համար հիմնվում են այս լուսանկարի վրա՝ պնդելով, որ բոլոր հայերը Կովկաս են հասել 1828 թ., նաև այն, որ այդ թվականից առաջ Հարավային Կովկասի տարածքում որևէ հայ գոյություն չէր կարող ունենալ: Այս նույն անհիմն հայտարարությունն անում է գերմանացի «մասնագետ» պատմաբան Յոհաննես Ռաուն՝ վերատպելով հուշարձանի պատկերը որպես «անհերքելի վկայություն»<sup>27</sup>: Այս «փաստը» նույնպես օգտագործում է հայատյաց ավստրիացի պատմաբան Էրիք Ֆայզլը իր՝ շքեղ տպագրված, բայց անհիմն ու դատարկ քարոզչություն պարունակող հատորում<sup>28</sup>:

\* \* \*

Տարածաշրջանում հայերի ներկայության այլ անհերքելի փաստերից են այդտեղ պատրաստված հայերեն բազմաթիվ ձեռագրերը, որոնք ունեն գերազանցապես կրոնական բնույթ: Ներկա Աղբբեջանի Հանրապետության կարևոր քաղաքներում ու ժամանակի հայաշատ բնակավայրերում, ինչպիսին են Գանձակը, Շամախին, Շաքին, Բաքուն և այլն, նախքան 19-րդ դարը պատրաստվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնցից մի մասն այսօր պահպանվում է Երևանի Մատենադարանում: Սրանք փաստում են դեռ նախքան 19-րդ դարն այստեղ բնակվող և բարգավաճող հայկական համայնքների գոյությունը, որոնց մեջ հայտնի էին նաև տասնյակից ավելի հայ գրչության կենտրոնները<sup>29</sup>:

\* \* \*

Վերոնշյալ աղբբեջանական անհիմն տեսությունները և պնդումները անտեսում են նաև արևմտյան և իսլամական մեծաքանակ գրականությունը, որտեղ նաև խոսվում է Կովկասի հարավում, Շամախիում, Շաքիում, Գանձակում, Շիրվանում և այլուր հոծ քանակով բնակվող հայ ժողովրդի մասին, որոնք 1989-1992 թթ. արտաքսվեցին իրենց պապենական գյուղերից և տներից: Աղբբեջանական տեսությունները հիմնված են սոսկ մեկ գյուղի՝ Մարաղայի հիմնադրման թվականը նշող հուշարձանի մակագրության վատորակ մի լուսանկարի վրա, որն այսօր այլևս գոյություն չունի, քանի որ 1992 թվականին ամբողջ գյուղի հետ միասին հուշարձանն էլ «մաքրագարվեց» աղբբեջանական օմոնականների ձեռքով<sup>30</sup>:

# Գլուխ 8–ի ծանոթագրություններ

- <sup>1</sup> Այս գլխի տեղեկությունների վերաբերյալ հավելյալ նյութերի համար տե՛ս Ռուբեն Գալչյան, *Արրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները*, Երևան, «Զանգակ» հրատ., 2017, գլուխ 3:
- <sup>2</sup> Strabo. *Geography*, translated by H. L. Jones, Loeb Classical Library, London: Harvard University Press, 1928–2000, book 11.4.1, էջ 203.
- <sup>3</sup> Անդ 11.14.1 էջ 317–319:
- <sup>4</sup> Pliny the Elder. *Natural History*, translated by H. Rackham, Cambridge: Harvard University Press, 1999, book VI.IX–25, էջ 355–357.
- <sup>5</sup> Մանրամասի մասին տե՛ս Robert Hewsen & Mkrtich Khachaturian. *Armenian Place Names in Ptolemy's Geography*, Paris: AIEA, 1982.
- <sup>6</sup> Ibn Khordadbeh, Abul Kasim Obaidallh ibn–Abdallah. *Kitab al–Masalik wa al–Mamalik*, Բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը, *Bibliotheca Geographorum Arabicorum*, part 6, vol 39, from the Islamic Geography series, Leiden: Brill, 1889, էջ 18–120.
- <sup>7</sup> Al–Istakhri. *Kitab al–Masalik wa al–Mamalik*, translated by Iraj Afshar, Tehran: Bongahe Tarjome va Nashre Ketab, 1961, էջ 155–159:
- <sup>8</sup> Hakluyt, Richard (ed). *The Principal Navigation Voyages of the English Nation, Volume 1*, Glasgow: 1903. Տես նաև, de Rubruck, William, ‘The Journals of Friar William de Rubruck’, *Contemporaries of Marco Polo*, ed. Komroff, London: Hakluyt Society, 1928, էջ 75–217.
- <sup>9</sup> Marco Polo, *The Travels of Marco Polo*, translated by William Marsden (New York: Doubleday & Co., 1948), էջ 20–22:
- <sup>10</sup> Անդ էջ25:
- <sup>11</sup> Johann Schiltberger, *Bondage and Travels – 1396 to 1427* (London: 1879), էջ 86 և Գլուխ 61–66:
- <sup>12</sup> Բունիաթովի կատարած փոփոխությունների ու հապավումների համար տե՛ս Պարույր Սևակի «Ինչպես հրատարակվեց Ճամփորդությունը» հոդվածը՝ հրատարակված Երևանի *Կոմունիստ* թերթի 25.06.1988 թ., 149 համարում, ինչպես նաև George A. Bournoutian. “Rewriting History”, *Journal of the Society for Armenian Studies*, Fresno: SAS, 1992–1993, vol. 6, էջ 185–6.
- <sup>13</sup> Barbaro, Josafa [Giosafat], & Contarini, Ambrogio. *Travels to Tana and Persia*, translated by William Thomas, London: Hakluyt Society, 1873, էջ 86.
- <sup>14</sup> Այդ ժամանակ Պարսկաստանը գրավել էր Կովկասի հարավային շրջանը, ներառյալ Շամախին:
- <sup>15</sup> Olearius, Adam. *Voyages and Travels of the Ambassadors sent by Frederick Duke of Holstein to the Great Duke of Muscovy and the King of Persia. History of Muscovy, Tartary and Persia*, translated to English by John Davies (London: 1669), էջ 165:
- <sup>16</sup> Անդ, էջ 157–158:
- <sup>17</sup> Անդ, էջ 158–159:
- <sup>18</sup> Sir John Chardin, *Travels to Persia and ye East Indies through the Black Sea and the country of Colchis*, London: 1686, էջ 242–3:
- <sup>19</sup> Անդ, էջ 248:
- <sup>20</sup> М. О. Косвен, X. М. Хашаев, редакторы, *История, география и этнография Дагестана* (Москва: Издательство Восточной литературы, 1958), էջ 116:
- <sup>21</sup> Տես նաև պարսկերեն բնագիրը: Abbas Qoli Aqa Bakikhanov, *Գոլեսթանե Էրամ, Թարիխե Օիրվան վա Դաղեսթան*. Tehran: Kaghnus Press, 2004, էջ 23 :
- <sup>22</sup> Аббас–Кули–Ага Бакиханов, *Гюлистан–и Ирам*, редакция З. Буниатова (Баку: 1991), էջ 11: Տե՛ս նաև Bakikhanov, նշվ. աշխ. էջ 5, տողատակի ծանոթագրություն 1:
- <sup>23</sup> Bakikhanov, Abbas Qoli Aqa. *The Heavenly Rose Garden: A History of Shirvan and Daghestan*, translated by Willem Floor & Hasan Javadi, Washington: Mage, 2009, էջ 5:
- <sup>24</sup> Полковник Ермоловъ, *Описание Карабагской Провинции*. Тифлисъ, 1866.

- <sup>25</sup> Գալջյան, Ռուբեն, *Ադրբեջանական պատմասաշխարհագրական զեղծարարությունները*, Երևան, «Զանգակ» հրատ., 2017, էջ 78–81:
- <sup>26</sup> Mahmudov, Yagub. & Shukuriv, Kasim. *Garabagh Real history, facts, documents*. Baku: Tahsil publishing, 2005, էջ 35: Սա միակ անորակ լուսանկարն է, որը կարողացել են գտնել ադրբեջանցիները՝ հավանաբար վերցված մի օրաթերթից:
- <sup>27</sup> Rau, Johannes. *Der Berg–Karabach–Konflikt zwischen Armenien und Asebaidschan*, Berlin: Verlag Dr Köster, 2008, էջ 89:
- <sup>28</sup> Feigl, Erich. *Armenian Mythomania*, Vienna & Munich: Amalthea Signum, 2006.
- <sup>29</sup> Գալջյան, Ռուբեն, նշված աշխ., 2017, էջ 81–83:
- <sup>30</sup> Cox, Lady Caroline & Eibner. John, *Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh*, London: IRMIW, 1993, էջ 52–58.

# ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբգարյան Գ. — 67  
Աբդուլբադահան — 92  
Ադանա — 49  
Ադհերբեյգան — 54  
Ադիաբենե — 41, 44, 100  
Ադիգյոզլալ բեգ — 60  
Ադրբեյջան կամ Ադերբայջան — 5-11, 13, 15-41, 43-46, 50, 53-55, 57-63, 66, 67, 69, 72, 75, 77, 79, 80, 84, 85, 91-98, 100, 101, 106, 107  
Ադրբեյջանի Հանրապետություն — 8-10, 13, 17-20, 21, 22, 26, 27, 29-32, 38-40, 43, 50, 54, 55, 57, 59, 61-63, 69, 71, 75, 91, 92, 94, 95, 97, 103, 06, 107  
Աթաբաքի, Թուրաջ — 57, 66, 95  
Աթաթուրք, Մուսթաֆա Քյամալ — 7, 19, 22, 50, 85, 94  
Ահմադի, Հոսեյն — 40, 63  
Ալազան — 30  
Ալբանիա — 13, 23, 25, 30, 41, 43, 54, 63, 67, 77, 92  
Ալլաթ, տե՛ս Խալթ — 17, 49, 55, 101  
Ախունդով, Նազիմ — 64, 65  
Ախունդով, Ֆուադ — 32  
Ալբորդ — 71, 78  
Ալաբքարլի, Ազիզ — 6, 96, 97, 98  
Ալեքսարլի, Ֆարիզ — 26, 40  
Ալեքսերով, Ալեքսյար Քյազիմ — 8, 11  
Ալեքսանդր Մակեդոնացի — 5, 42, 53, 54, 76, 82, 96  
Ալեքսանդրապոլ — 96  
Ալիև, Իլհամ — 22, 62, 97  
Ալիև, Իլլար — 94  
Աղաօղլու Ահմադ բեյ Աղան — 21  
Աղվանք — 6, 9, 13-18, 23, 25, 30, 32, 36, 42, 43, 45, 54, 62, 66, 67, 75, 77, 91-94, 99, 99-101  
Ամերիկաներ — 58, 73  
Անատոլիա — 5-7, 10, 50, 70, 76, 78, 79, 81-88, 90  
Անանիա Շիրակացի — 13  
Անգրկովկասյան սոցիալիստական դաշնակից-ների խորհրդային հանրապետություն — 7  
Անտանտ — 31  
Անտոնյան, Լ. — 67  
Անուշիրվան — 91  
Ապշերոնյան — 54, 78  
Առան կամ Առան — 13, 17, 18, 25, 26, 29, 30, 39, 40, 54, 66, 67, 92-94  
Ասատրյան, Գառնիկ — 57  
Ասիա — 5, 6, 8, 14-16, 38, 43-45, 55, 66, 69, 71, 72, 74, 75, 79, 81, 82, 86, 87, 95, 100  
Ասորիք — 29  
Ավետյաց Երկիր — 44  
Ավստրիա — 9  
Ատրպատական — 8, 13-16, 25, 26, 28, 30, 32, 33, 35-38, 41, 50, 53, 54-58, 62, 84, 85, 91, 92, 94, 95, 100  
Ատրոպատ կամ Ատորպատ — 13, 53, 54  
Ատրոպատեն — 13, 14, 28, 41, 53, 54, 92, 100  
Արարատ լեռ — 6, 17, 33, 35, 44, 46, 47, 70, 72, 73, 104, 105  
Արաքս — 8, 13-17, 19, 25-29, 31-34, 37-39, 41, 45, 46, 50, 54, 55, 73, 91, 92, 94, 95, 100, 101, 107  
Արբելա — 13  
Արդաբիլ — 17, 37, 40, 101  
Արզան կամ Երզնկա — 17, 101

Արզին — 56  
 Արճեշ — 17, 57  
 Արմենիակոն — 82  
 Արսալան բին-Սելջուկ — 57  
 Արցախ — 6, 16-18, 22, 25, 42, 62, 95, 96, 107, 108  
 Արևելյան Թուրքիա — 50, 79  
 Արևելյան Հայաստան — 19  
 Արևմտյան Ադրբեջան — 6, 32, 40, 91, 94, 95-97  
 Աուդ, Նիքորաս — 57, 6  
 Աքեմենյան կայսրություն — 5, 53  
 Աֆղանստան — 34, 71

Բաբ-ուլ Աբուաբ, կամ Դերբենդ — 17  
 Բաբաև, Ֆ. — 64, 65  
 Բաբելոն — 36, 41, 53, 106  
 Բադալյան, Գեղամ — 23  
 Բագիև, Թալե — 67, 98  
 Բալադհորի — 94  
 Բալաև, Այդին — 23  
 Բալխի դպրոց — 17  
 Բալկաններ — 21, 38  
 Բարդան կամ Պարտավ — 17, 64, 65  
 Բարթոլդ, Վասիլի Վ. — 25, 40  
 Բարխուդարյանց, Մակար Արք. — 23  
 Բաքիխանով, Աբբասղուլի աղա — 59, 60, 67, 106  
 Բաքու — 11, 25, 31, 96, 98  
 Բեդա Երանելի — 43  
 Բեհզադի, Ռոդլիյե — 40, 66, 67  
 Բելգիա — 9  
 Բելոռուսական ՍՍՌ — 7  
 «Բեննետ և Բլում» հրատ. — 40, 98  
 Բերկրի — 17, 101  
 Բիթլիս — 17, 101

«Բլումբերգ» հետաատարնկերություն — 8  
 Բյուզանդիոն — 5, 48, 81, 82  
 Բոսֆոր — 81  
 Բրադֆորդ — 5, 34-36  
 Բրիտանիա — 6, 20, 81, 104  
 Բոն Ադվանք — 16  
 Բունիաթով, Զիա — 60, 63, 91-93, 95, 98, 109  
 Բուռնություն, Զորջ — 23, 67, 109

Գալաթասարայ համալս., Ստամբուլ — 8  
 Գալչյան, Ռուբեն — 11, 23, 40, 51, 67, 80, 98, 109, 110  
 Գանձակ — 17, 108  
 Գանձասար — 23  
 Գառնի — 96  
 Գելին-Ղիյե — 56  
 Գերմանիա — 9, 40  
 Գիլան — 27-29, 032  
 Գյանջա — 17, 38  
 Գյոքալպ, Զիյա — 21  
 Գյուլիստան — 19, 31, 60, 91, 95  
 Գոշավանք — 96  
 Գորբաչով — 9

Դաբիլ (Դվին) — 17, 101  
 Դադստան — 11, 20, 30, 38, 59, 60, 96, 106  
 Դարյալի կիրճ — 44  
 Դեմավենդ — 101  
 Դելամ — 46  
 Դեսեյիե, Պիեռ — 5, 73, 74  
 Դերբենդ — 17, 56, 92, 94, 105  
 Դիզմար — 56  
 Դվին — 17, 40, 55, 101  
 Դուպերտ, Անջելինո — 5, 46, 47  
 Երկաթագետություն նահանգ — 25, 95, 96

Եվրոպա — 20, 25, 32, 40, 69, 70, 81, 85  
Երմոլով — 106  
Երևան — 40, 51, 66, 67, 80, 96, 99, 104,  
109, 110  
Եփրատ գետ — 13, 41, 42, 44, 47, 69, 73–  
77, 82–84, 87, 99, 100  
  
Զագրոս — 69, 71  
Զանգակ հրատ. — 11, 40, 51, 66, 80, 98,  
109, 110  
Զանջան — 17, 28, 32  
  
Էստոնիա — 77  
Էրֆանյան, Մասնուղ — 38, 40  
Էրզրում (Կարին) — 17, 49, 101  
Էրիվան, տե՛ս նաև Երևան — 105  
Էքբաթանա — 13  
  
Թաբարի — 57  
Թաթար չանրապետություն — 20  
Թաթարստան — 17, 34  
Թավրիզ — 17, 31, 37, 38, 40, 63, 66  
Թեմուր — 31, 102  
Թեյշեբախինի — 96  
Թիֆլիս — 17, 40, 102, 106  
Թիֆլիսի նահանգ — 19  
Թոմսոն, գեներալ — 31  
Թուրքիա — 6, 7, 9, 11, 21, 22, 28, 29,  
31, 42, 46, 49, 5, 55, 61, 63, 66, 70,  
72, 78, 82, 84–90  
Թուրքմենչայ — 19, 31, 91, 95, 96  
Թուրքմենստան — 71  
  
Իբերիա կամ Վիրք — 13–15, 53, 74, 99, 100  
Իբն Խորդադբեհ — 101  
Իբն Հաուսալ — 55, 66, 92, 94  
Իդրիսի — 5, 45, 92

Ինգուշեթիա — 11  
Իրան — 5, 7, 8, 13–21, 26, 28, 29, 31–34,  
37–42, 48–50, 53–56, 62, 67, 69–72, 77,  
79, 86, 91, 92, 107  
Իրանի Ադրբեջան նահանգ — 18, 25, 28,  
32, 33, 38, 50, 53, 54, 56  
Իսիդոր Եպ., Սևիլիացի — 5, 43, 73  
Իսթախրի — 5, 16, 17, 92, 101  
  
Լանդաու, Զակոբ — 11  
Լենինգրադ — 87  
Լենկթեմուր — 102  
Լեոնային Ղարաբաղ — 30, 62, 106  
Լոնդոն — 5, 11, 16, 20, 22, 34, 40, 43,  
51, 66, 80, 98, 106, 109, 110  
  
Խաղիա — 82  
Խալիլուլահ, Ա՛հմադ — 67  
Խամասյի մեղիքություններ — 18  
Խամսե — 28  
Խաչատրյան, Համո — 22  
Խաչատրյան, Մկրտիչ — 51, 109  
Խլաթ կամ Ախլաթ — 17, 49, 55, 101  
Խոյ — 17, 35, 37  
Խոր վիրապ — 96  
Խորազմ — 21  
Խորասան — 57, 66  
Խորհրդային Հայաստան — 5, 22  
Խորհրդային Միություն — 39  
ԽՍՀՄ — 7, 9, 22, 27, 29, 32, 61, 87  
  
Կալիկլա կամ Էրզրում — 17, 101  
Կապադոկիա — 13, 14, 41, 43, 44, 82, 100  
Կասպից դարպասներ — 44  
Կասպից ծով — 13, 15, 21, 27–30, 37, 46,  
57, 72, 74, 99, 100, 106  
Կատարոնիա — 46

- Կարագյուղով, Ռաուֆ — 60  
Կարս — 49  
Կենտրոնական Ասիա — 8, 16, 38, 45, 55, 66, 95  
Կիլիկիա — 43, 45  
Կիլիկիայի հայկական թագավորություն — 5, 45, 46, 47  
Կոմմագենե — 13  
Կարեվիա — 11  
Կիպերոս, Հայնրիխ — 6, 86, 87  
Կոստա Մեզա — 23, 67  
Կոստանդին Ծիրանածին — 82  
Կոստանդնուպոլիս — 81  
Կովկաս — 5, 7-11, 13, 17-22, 25, 27, 29, 32-34, 38-40, 44, 45, 50, 51, 53-55, 57, 59, 62, 66, 67, 70, 73, 75, 77-80, 86, 87, 91, 92, 95, 96, 99-101, 106, 108, 109  
Կովկասյան Ալբանիա — 13, 25, 43, 54, 63, 67, 77, 92  
Կովկասյան լեռներ — 13, 30, 69, 74, 99  
Կրեմլ — 8  
Կրեակ, Աբրահամ — 47  
Կուր գետ — 14-17, 25, 30, 41, 43, 45, 54, 55, 92-94, 100, 102, 106
- Համադան — 13, 92, 94  
ալ-Համաուի, Յաղովթ — 55, 66, 94  
Հաղարծին — 96  
Հաղպատ — 96  
Հայաստան — 5-7, 11, 13, 14, 16-20, 22-23, 27, 29, 30, 32-36, 39 -51, 55, 59, 61-63, 67, 70, 72-77, 79-88, 91, 92, 94-103, 106, 107  
Հայաստանի Հանրապետություն — 22, 96  
Հայկական բարձրավանդակ — 5, 10, 50, 70-72, 78, 79, 82, 86-87, 90
- Հայկական լեռնաշխարհ — 10, 69, 75, 77-79, 82, 86, 87  
Հանթեր, Շիրին — 40  
Հարավային Ադրբեջան — 29, 31, 32, 62, 91, 92, 94, 95  
Հարավային Ամերիկա — 9  
Հարավային Կովկաս — 5, 7, 10, 13, 15, 32-34, 45, 53, 55, 59, 73, 78, 96, 99, 101, 108  
Հեննինգ, Վալտեր — 66  
Հեյդարով, Թալե — 67, 98  
Հիլլ, Ֆրեդ Ջեյմզ — 57, 66, 98  
Հինդու-բուդ — 71  
Հյուզեն, Ռոբերտ — 23, 51, 101  
Հյուսիսային Ադրբեջան — 9, 31, 62, 91, 94  
Հնդկական օվկիանոս — 69  
Հնդկաստան — 7, 71  
Հոմ — 5, 32, 41-43, 50, 59, 81, 99  
Հոնաստան — 7, 86  
Հոսեյնզադե, Ալի բեգ — 21  
Հոատինիանոս կայսր — 5, 48  
«Հուրրիյեթ» թերթ — 8
- Ղաբալա — 105  
Ղազարյան, Արա — 40  
Ղազվին — 92, 94  
Ղազվինի, Համդուլլահ — 56, 66, 92  
Ղարաբաղ — 14, 30, 60, 62, 64, 65, 67, 103, 106,  
Ղարաբաղի, Միրզա Ջավանշիր — 60, 64, 65, 67, 106
- Մահմուդով, Յաղոբ — 67  
Մամեդովա, Ֆարիդա — 62, 67, 92, 93, 98  
Մարաղա — 6, 17, 37, 56, 107, 108  
Մարանդ — 17

Մարաշ — 49, 82  
Մարգար — 56  
Մարկո Պոլո — 102, 109  
Մարմարա ծով — 81  
ալ-Մասնուդի Մարաստան — 94, 98  
Մեծ Կյուրոս — 53  
Մեծ Հայք — 5, 10, 13, 15, 41–45, 47–50, 70, 72, 73, 76–78, 82, 84, 86, 100, 104  
Մեծ Մարաստան — 13, 53  
Մերձավոր Արևելք — 44  
Մեքսիկական ծոց — 69  
Միջերկրական ծով — 5, 46, 47, 49, 72, 81  
Մերկատոր, Ջերարդ — 5, 14  
Միաֆարկին — 17, 47, 101  
Միանե — 17, 37  
Միլեր, Կոնրադ — 5, 7, 25, 31, 36, 53, 87  
Մինորակի, Վլադիմիր — 56, 66  
Միջագետք — 5, 45  
Միջին Արևելք — 5, 7, 25, 36, 44, 53, 87  
Մյունախիմ բաշի — 56  
Մողադբամ, Ահմադ — 67  
Մոսթուֆի, Համբուլահ Դազվինի — 66  
Մոսկվա — 5, 10, 19, 39, 40, 80  
Մովսիսյան, Լիլիթ — 67  
Մուրրոս — 31  
  
Նախիջևան — 30, 42, 55, 92, 96, 101, 107  
Նոր Ջուղա — 56  
Նորավանք — 96  
  
Շահ Աբբաս — 107, 108  
Շահ Իսմայիլ — 58  
Շահրուխ — 102  
Շարդան — 6, 104, 109  
Շաքի — 17, 38, 52, 96, 108

Շեյխ Մոհամմեդ Խիաբանի — 25  
Շեյխ Սեֆի — 58  
Շիլտբերգեր, Յոհան — 63, 64, 67, 102  
Շիրվան կամ Շերվան — 56  
Շնիրելման, Վիկտոր — 60, 67  
Շուշի — 96  
  
Չեչնիա — 11  
Չինական ծով — 69  
Չինաստան — 7, 39  
Չոբանյան, Պավել — 23  
  
Պակիստան — 71  
Պարաքոսթրաս — 13, 100  
Պարթևստան — 44, 53  
Պարիզերի — 41, 100  
Պարսկական Աղբբեջան — 17, 26, 30, 33, 35, 84  
Պարսկաստան — 5, 15, 19, 25, 27–36, 46, 50, 54, 55, 57, 61, 69, 91, 92, 96, 101, 103, 106, 109  
Պետրոսյան, Գ. — 23  
Պլինիոս Ավագ, Գայոս Սեկունդոս — 41, 51, 100  
Պոնտական լեոներ — 42, 69  
Պրոթերո, Ջորջ Վիլլիամ — 20  
Պաղումեսոս, Կլավդիոս — 5, 14, 41–43, 51, 70, 100, 109  
  
Ջավադի, Հասան — 60, 67  
Ջավադի Աբբասալի — 67  
Ջաքսոն, Պիտեր — 66  
Ջենովա — 46  
Ջեքսոն, Պատրիկ — 57

Ռասուլզադե, Մամեդ Էմին — 19, 21, 22, 38, 39  
Ռաու, Յոհաննես — 60, 107, 109  
Ռաիֆ, Ահմադ — 6, 84  
Ռեզա, Էնայաթոլլահ — 39, 40, 66, 67  
Ռեզայի, Ս. — 67  
Դե լա Ռյու, Ֆիլիպ — 5, 48  
Ռոժե 2-րդ — 45  
Ռուբերուկ, Ուիլլիամ — 102  
Ռումյանցև, Սերգեյ — 67  
Ռուսական ՍՖՍՌ — 30  
Ռուսաստան — 7, 20, 28, 31, 50, 77, 95, 96  
Ռուսաստանի Դաշնություն — 7, 9  
Ռուսական կայսրություն — 25, 91  
  
Սաղմոսավանք — 96  
Սանկտ Պետերբուրգ — 87  
Սարայ — 101  
Սասանյան Իրան — 15-17, 48, 91  
Սբ Հիերոնիմոս կամ Ջերոմ — 5, 44, 72  
Սեֆիդրուդ — 37  
Սիբիր — 88  
Սիկիլիա — 45  
Սիմեոն կաթողիկոս — 23  
Սիս — 47, 49  
Սիվաս — 6, 83  
Սմիթ, Անթոնի — 40  
Սյունիք — 13, 14, 46, 25, 92, 95, 107  
Սպահան — 107  
Սվիետոչովսկի, Թադեոզ — 23  
Ստալին — 8, 26, 27, 101  
Ստալինգրադ — 87  
Ստամբուլ — 8, 22, 81  
Ստրաբոն — 9, 13, 15, 24, 30, 41, 51, 53, 66, 70, 99

Սուբխադյան, Համո — 23  
Սև ծով — 15, 42, 72, 74-76, 81, 82, 84  
Սևանա լիճ — 30  
Վահսուղան — 57  
Վան — 35, 49, 101  
Վարջավանդ, Փարվիզ — 67  
Վենետիկ — 46  
Վիրք կամ Իբերիա — 13-15, 53, 74, 99, 100  
Վրաստան — 7, 17-20, 22, 32, 33, 39, 61, 72, 74, 78, 84, 92, 96, 104  
Վուգոնդի, Ռոբեր դե — 6, 77  
  
Տաթև — 96  
Տավրոս — 13, 14, 41, 42, 69, 77, 99, 100  
Տարաու (Դորպատ) — 77  
Տեքսաս — 77  
Տիբեթ — 71  
Տիգրանակերտ — 101  
Տուշպա (Վան) — 101  
  
Ուլուբաբյան, Բագրատ — 23  
Ուկրաինական ՍՍՀ — 7  
Ուշքուդար — 6, 84  
Ուտիք — 17  
Ուրմիա — 17, 37  
  
Փարիզ — 6, 48, 77  
Փոքր Ասիա — 6, 43, 50, 57, 76, 78, 81-87  
Փոքր Հայք — 5, 13, 14, 43-45, 48-50, 72-77, 100, 104  
Փոքր Մարաստան — 13, 42, 53, 54  
  
Քասրավի, Ահմադ — 56, 66  
Քարաման — 6, 83

Քարանգ, Աբդուլ Ալի — 56, 66

Քարինգան — 56

Քյամալ Փաշա, Մոաթաֆա (Աթաթուրք) — 7,  
19, 22, 50, 85, 94

Քըր-Պորտեր — 6, 105, 106

Քիլասուր — 56

Քյաթիր Չերեբի, Հաջի Խալիֆա — 5, 6, 36,  
37, 49, 83

Քուիեթդաղ — 71

Քուրդատան — 32, 84, 85, 88

Օլեարիոս, Ադամ — 103, 109

Օրթալի, Իլբեր — 8,

Օտտենս — 5, 18

Օրոսիոս, Պավլոս — 43

Օրտելիոս, Աբրահամ — 5, 76

Օսմանյան կայսրություն — 6, 7, 11, 20, 21,  
38, 81, 82, 84, 85, 87

Օքսֆորդ — 40, 66

Ֆայզ, Էրիկ — 108

Ֆառուխ, Քավե — 67

Ֆլոր, Ուիլլեմ — 67, 109

Ֆրանսիա — 39, 43, 48, 73, 77, 104

Ֆրայ, Ռիչարդ — 57

Ֆրինգա Ա. — 67

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ, ԱԴՐԲԵՋԱՆ  
ԵՎ ԹՈՒՐԻՔԻԱ


Մշակութային, աշխարհագրական և պատմական  
հսկասությունների քննարկում

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան  
Համակարգչային ձևավորումը՝ Ռուբեն Գալչյանի  
Համակարգչային էջադրումը՝ Ժագ Թովալազյանի  
Վերստուգող սրբագրիչ՝ Նվարդ Փարսադանյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60×90 1/8  
Թուղթը՝ կավձապատ: Ծավալը՝ 15 տպ. մամուլ



ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28  
Էլ. փոստ՝ [info@zangak.am](mailto:info@zangak.am), էլ. կայքեր՝ [www.zangak.am](http://www.zangak.am), [www.book.am](http://www.book.am)  
Ֆեյսբուքյան կայքէջ՝ [www.facebook.com/zangak](http://www.facebook.com/zangak)



Գերմանացի քարտեզագետ Ֆոն Սարուների 1855 թ. «Հնագույն Ատլաս»-ից Հայաստանը, Միջագետքը, Բարեկոնը, Ատրեատանը և հարակից երկրները քարտեզը: Նշված է Փոքր Ասիան իր տասնյակ երկրներով, որոնք բոլորն էլ այժմ անհետացած են: Ներկայում միայն առկա են Հայաստանն ու Ատրոպատեն/Ատրպատականը՝ որպես ներկա Իրանի Աղբրեջան նահանգ:

Ռուբեն Գալչյանի հավաքածու, Երևան, Մատենադարան, Ref. RG-33:

## ՌՌԻԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

Ծնվել է Թավրիզում՝ Մեծ եղեռնին Վանից տարագիր գաղթականների ընտանիքում, որ Թավրիզ էր հասել Հայաստանի, Վրաստանի և Ֆրանսիայի ճանապարհով: Թեիրանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո կրթաթոշակ է ստացել՝ սովորելու Բրիտանիայի Բիրմինգհեմ քաղաքում, որտեղ ուսանել է ճարտարագիտություն:

1970-ականներին լրջորեն սկսել է աշխարհագրական հետազոտությունները՝ որպես զբաղմունք: 1981 թ. տեղափոխվելով Լոնդոն՝ առիթ է ունեցել հետազոտելու Բրիտանիայի և Եվրոպայի գրադարաններում եղած քարտեզագրական հարուստ ժառանգությունն ու ծավալուն տեղեկությունները:

2008 թ. Հայաստանի քարտեզագրությանը մատուցած ծառայությունների համար Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան նրան շնորհել է պատվո դոկտորի կոչում, իսկ 2013 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:



[www.roubengalichian.com](http://www.roubengalichian.com)  
[www.roubengalchian.com](http://www.roubengalchian.com)

Ռուբեն Գալչյանը Կովկասից հարավ ընկած տարածքի քարտեզագիտության և մշակույթի պատմության հետազոտող է: Նրա հասուկ ուշադրության կենտրոնում են պատմական և ներկա Հայաստանի տարածքները: Որպես քրիստոնյա երկիր՝ Հայաստանը սեպի նման մխրձված է երկու թուրքախոս պետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետությունների միջև: Այս աշխարհագրական իրավիճակը ծայրահեղականներին առիթ է տվել ստեղծելու քաղաքական, մշակութային և ազգագրական բազմաթիվ խնդիրներ: Օսմանյան Թուրքիայի ծրագիրը, որի նպատակը, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի թուրքախոս ժողովուրդներին իրար կապելով, պանթուրքական երկրների մի գոտի ստեղծելն է, ունի մի խոչընդոտ՝ այդ ձանապարհին Հայաստանի առկայությունը: Ծրագրի սկիզբը Հայոց ցեղասպանությունն էր, որով Թուրքիան ձերբազատվեց հայերից: Խորհրդային Միության փլուզումից հետո Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն աշխատում են անել ամեն ինչ, որպեսզի տարածքի հայերին իրենց դարավոր հայրենիքում, որտեղ ապրել են ավելի քան երկուսուկես հազարամյակ, կոչեն եկվորներ: Ամեն ջանք գործադրվում է հայկական պատմական հուշարձաններն ու մշակույթը տարածքից ջնջելու կամ դրանք յուրացնելու նպատակով: Այս ուղղությամբ ստեղծվում են կեղծ տեսություններ, համատարած կատարվում են պատմական և մշակութային զեղծարարություններ:

Աշխատության նյութը նման կեղծիքներից կարևորներն ընտրելն է, որոնք Թուրքիան ու Ադրբեջանը ստեղծում են՝ հիմնվելով իրենց իսկ ընդունած հավաստի, ինչպես նաև օտար փաստաթղթերի ու աղբյուրների վրա, և իրականությունը բացահայտելը:



**ԶԱՆԳԱԿ**  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

www.zangak.am  
www.book.am